Արժեթղթի ազդագիր

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

Բաց Բաժնետիրական Ընկերություն

ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am

տեղաբաշխվող արժեթղթերի դասը՝	հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս
արժեթղթերի ձևը՝	ոչ փաստաթղթային
արժեթղթերի քանակը՝	76,300 հատ
արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	5,000 ՀՀ դրամ

«ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԿՐՈՒՄ ՍՈՒՅՆ ԱԶԴԱԳՐՈՒՄ ԶԵՏԵՂՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՍԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՃՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ: ԳՐԱՆՑՄԱՆ ՓԱՍՏԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ»:

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի ամբողջականությունը»:

ստորագրող անձինք՝

(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Բարսեղ Բեգլարյան	Խորհրդի նախագահ		07.12.07
Էնդել Ստեփանյան	Խորհրդի անդամ		07.12.07
Մանուկ Մկրտչյան	Խորհրդի անդամ		07.12.2007թ
Վաղարշակ Մանուկյան	Խորհրդի անդամ		07.12.07
Վահրամ Ղազարյան	Խորհրդի անդամ		07.12.07
Աշոտ Օսիպյան	Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն		07.12.07.
Արթուր Հակոբյան	Վարչության նախագահի տեղակալ, Գործադիր տնօրենի տեղակալ		07.12.2007թ
Գագիկ Թադևոսյան	Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ		07.12.2007թ

Համեստ Մուրադյան	Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ		07.12.2007թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում եմ՝

Աշոտ Օսիպյան	Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն		07.12.07.
(անուն, ազգանուն)	(Գործադիր տնօրեն, գործադիր մարմնի ղեկավար)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ազդագրում ներառվող տեղեկությունների ցանկը՝ 3-րդ էջում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ ЕРЕВАН ОТКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО
REPUBLIC OF ARMENIA YEREVAN OPEN JOINT STOCK COMPANY
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
ARARATBANK
ARARATBANK
02500518

Բովանդակություն

		էջ
Բաժին 1.	**Ամփոփաթերթ**	**5**
Բաժին 2.	**Թողարկվող բաժնետոմսերի վերաբերյալ տեղեկություններ**	**14**
1)	Ընդհանուր տեղեկություններ	14
2)	Բաժնետոմսերի գնի վերաբերյալ տեղեկություններ	14
3)	Շահութաբաժինների վերաբերյալ տեղեկություններ	14
4)	Տվյալ դասի և ձևի բաժնետոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքներն ու պարտականությունները.	15
5)	Սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններ	16
6)	Տեղեկություններ բաժնետոմսերի տեղաբաշխմանը մասնակցող անձանց և նրանց մասնակցության չափի վերաբերյալ	16
7)	Բաժանորդագրությունների վերաբերյալ տեղեկություններ	17
8)	Տեղաբաշխված (տեղաբաշխվող) բաժնետոմսերից ստացվող բաժնետոմսերի սեփականատերերի եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը	17
9)	Ֆոնդային բորսայում առևտրի թույլտվության վերաբերյալ տեղեկություններ	17
10)	Բաժնետոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումը և (կամ) գրանցումն իրականացնող կազմակերպությունների վերաբերյալ տեղեկություններ	17
11)	Նոր թողարկման իրականացման կանխատեսվող ամսաթիվը	17
Բաժին 3.	**Բանկի վերաբերյալ տեղեկություններ**	**18**
Գլուխ 1.	**Ընդհանուր տեղեկություններ**	**18**
1)	Բանկի պատմությունը և զարգացումը	18
2)	Ֆինանսական և այլ խմբերի վերաբերյալ տեղեկություններ	18
3)	Բանկի մասնաճյուղերը և ներկայացուցչությունները	18
4)	Բանկի աուդիտն իրականացնող անձինք	19
5)	Փորձագետների մասնագիտական կարծիքը և այլ անձանցից ստացված տեղեկությունները	19
6)	Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի չափը	19
7)	Բանկի կողմից թողարկված արժեթղթերի նկատմամբ առկա օպցիոնների վերաբերյալ տեղեկություններ	20
8)	Բաժնետերերի տարեկան և արտահերթ ժողովների հրավիրման կարգը	20
Գլուխ 2.	**Բանկի գործունեության վերաբերյալ տեղեկություններ**	**20**
1)	Ռիսկային գործոններ	20
2)	Բանկի հիմնական գործունեության նկարագիրը	21
3)	Բանկի հիմնական և ոչ հիմնական գործունեության մեջ ներգրավված գույքը	29
4)	Ներդրումների վերաբերյալ տեղեկություններ	31
5)	Այն անձանց անվանացանկը, որտեղ Բանկը, ներառյալ նրա դուստր ընկերությունները, բաժնային արժեթղթերի նշանակալից կամ խոշոր սեփականատեր են	31
6)	Բանկի աշխատողները, հատկացումներ	31
7)	Հարկային արտոնությունները	32
8)	Դատական և իրավական ընթացակարգը	32
9)	Փոխկապակցված գործարքների վերաբերյալ տեղեկություններ	32
10)	Բանկի նախատեսվող գործունեությունը և հեռանկարները	33
Գլուխ 3.	**Բանկի ֆինանսական վիճակը և գործունեության արդյունքները**	**35**

1)	Ֆինանսական հաշվետվություններ	35
2)	Ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների փոփոխությունների վերաբերյալ տեղեկություններ	35
3)	Կապիտալ ռեսուրսները	36
4)	Շահույթի կանխատեսումը և գնահատումը	37
Գլուխ 4.	**Բանկի կառավարման մարմինները և կառավարմանը մասնակցող անձինք**	**38**
1)	Ընդհանուր տեղեկություններ կառավարման մարմինների վերաբերյալ	38
Գլուխ 5.	**Բանկի հետ փոխկապակցված անձինք, Բանկի սեփականատերերը**	**49**
1)	Բանկի հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկություններ	49
2)	Բանկի նշանակալից, բայց ոչ խոշոր սեփականատերերի վերաբերյալ	52
Գլուխ 6.	**Բանկի կողմից թողարկված արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ**	**52**

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Ամփոփաթերթը դիտվում է որպես Ազդագրի ներածական համառոտ նկարագրություն:

Ներդրողն առաջարկվող բաժնետոմսերում ներդրում անելու որոշումը կայացնելիս պետք է ընթերցի ամբողջ Ազդագիրը:

Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձը պատասխանատվություն է կրում ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար միայն այն դեպքում, եթե այն ոչ ճշգրիտ, անհամատեղելի է Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը փաստաթղթային տարբերակով Բանկի գլխամասային գրասենյակում և մասնաճյուղերում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ Ինտերնետի Բանկի տնային էջում՝ www.araratbank.am :

1) ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) թողարկվող բաժնետոմսերի վերաբերյալ տեղեկություններ

Թողարկվող բաժնետոմսերը հասարակ (սովորական) անվանական, ոչ փաստաթղթային բաժնետոմսեր են:

Թողարկման ընդհանուր ծավալը կազմում է 381,500 հազ. ՀՀ դրամ:

Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը 5,000 ՀՀ դրամ է:

Բաժնետոմսերի տեղաբաշխման գինը 5,900 ՀՀ դրամ է:

Բաժնետոմսերի տեղաբաշխման սկզբը՝ 17 դեկտեմբերի 2007 թ.:

Բաժնետոմսերի տեղաբաշխման ավարտը՝ 21 հունվարի 2008 թ.:

Տեղաբաշխվող բաժնետոմսերի նվազագույն քանակը՝ 70,000 հատ:

Տեղաբաշխվող բաժնետոմսերի առավելագույն քանակը՝ 76,300 հատ:

Բաժնետոմսերի բաժանորդագրությունը և դրանց դիմաց վճարումները կատարվում են միաժամանակ և ամբողջությամբ՝ Բանկի գլխամասային գրասենյակում կամ մասնաճյուղերում, և կուտակվում են ՀՀ կենտրոնական բանկում այդ նպատակով բացված թիվ 103002801514 կուտակային հաշվին:

Բաժնետոմսերում ներդրումներ կարող են կատարել ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական և ֆիզիկական անձինք:

Բաժնետոմսերում ներդրումներ կատարողների համար ՀՀ օրենսդրությամբ, Բանկի կանոնադրությամբ և Բանկի հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի թողարկման մասին Բանկի խորհրդի որոշմամբ սահմանված են հետևյալ սահմանափակումները.

- մեկ անձի և նրա հետ փոխկապակցված անձանց կողմից բաժանորդագրված բաժնետոմսերի քանակը չի կարող գերազանցել 72,800 հատը, իսկ գերազանցելու դեպքում անձը պետք է ստանա ՀՀ կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը
- Բանկի բաժնետոմսերի բաժանորդագրությանը չեն կարող մասնակցել օֆշորային գոտիներում գրանցված անձինք
- մեկ իրավաբանական անձ ներդրողի կողմից ձեռք բերվող բաժնետոմսերի նվազագույն քանակը չպետք է պակաս լինի 40 հատից:

Բաժանորդագրության ընթացքում 76,300 հատ Բաժնետոմսերի թիվը լրանալուց հետո Բանկը բաժանորդագրությունը դադարեցնում է:

Բաժանորդագրության ետ կանչի պահանջ չի ընդունվում:

Ներդրողները կարող են տեղեկություններ ստանալ հեռախոսով՝ 547895 համարով, և էլեկտրոնային փոստով՝ araratbank@araratbank.am հասցեով:

2) Բանկի վերաբերյալ տեղեկություններ

ա. ընդհանուր տեղեկություններ

Բանկը ստեղծվել է 1991 թվականի սեպտեմբերի 20-ին, գրանցվել է որպես «ՀԱՅԿԱՊ»

բանկ ՍՊԸ, որը վերակազմավորվել է «ՀԱՅԿԱՊ» բանկ ՓԲԸ-ի, այնուհետև անվանափոխության միջոցով՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ՓԲԸ-ի, որը 2007 թվականի օգոստոսին վերակազմավորվել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի:

Բանկն առաջին գրանցումը ստացել է 1991 թվականի սեպտեմբերի 20-ին, գրանցման համարն է 4, Բանկը փաստացի գործունեությունը սկսել է իրականացնել 1991 թվականի սեպտեմբերից մինչ օրս՝ 16 տարի:

Բանկի գրանցման և գործունեության վայրն է՝ ք. Երևան, Պուշկինի 19:

Բանկը գրանցված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից:

Բանկը հանդիսանում է Հայաստանի բանկերի միության և Հայաստանի հիփոթեքային շուկայի մասնակիցների միության անդամ:

2007 թ.-ի մայիսին Global Rating Group միջազգային վարկանշային կազմակերպության կողմից Բանկի ֆինանսական կայունության և վարկունակության վարկանիշը գնահատվել է B-, կանխատեսումը՝ կայուն, այնուհետև, 2007 թ.-ի սեպտեմբերին վարկանիշը բարձրացել է B+, կանխատեսումը՝ կայուն:

Բանկի մասնաճյուղերը և ներկայացուցչությունները.

	Մասնաճյուղի անվանում	Հասցե
1.	Նաիրիտ	ՀՀ. ք. Երևան, Բագրատունյաց 70
2.	Ստեփանակերտ	ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Մ. Մաշտոցի 1/Ա
3.	Սեբաստիա	ՀՀ. ք. Երևան, Սեբաստիա 141/1
4.	Մաշտոց	ՀՀ. ք. Երևան, Մ. Մաշտոցի 25
5.	Խորենացի	ՀՀ, ք. Երևան, Մ. Խորենացի 24/7 և 24/9
6.	Գյումրի	ՀՀ, ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի պ. 1/5
7.	Աբովյան	ՀՀ, ք. Աբովյան, Հանրապետության 1/21
8.	Ծաղկաձոր	ՀՀ, ք. Ծաղկաձոր, Գրիգոր Մագիստրոսի փողոց, 2-րդ շենք, 1-ին հարկ
9.	Դավթաշեն	ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 2-րդ թաղ., 44 շենք
10.	ԱՐԱՐԱՏՅԱՆ	ՀՀ, ք. Երևան, Ծովակալ Իսակովի 10
11.	ԶՎԱՐԹՆՈՑ	ՀՀ, ք. Երևան, ք.Երևան 42, «Զվարթնոց» օդանավակայանի բեռնահամալիրի տարածք

Բանկը ՀՀ տարածքում և տարածքից դուրս գրանցված ներկայացուցչություններ չունի:

Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի չափը

Բանկի կանոնադրական կապիտալը 100 %-ով վճարված է և կազմում է 3,640,000 հազար ՀՀ դրամ:

Բանկի կանոնադրական կապիտալը բաղկացած է 728,000 հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսից, յուրաքանչյուրը 5,000 ՀՀ դրամ անվանական արժեքով:

Կանոնադրական կապիտալը վերջին երեք տարիների ընթացքում վճարվել է ամբողջությամբ և ըստ տարիների կազմել է՝

- 2004 թվականի տարեվերջին - 890,000 հազ. ՀՀ դրամ, աճը կազմել է 50,000 հազ. ՀՀ դրամ
- 2005 թվականի տարեվերջին – 2,790,000 հազ. ՀՀ դրամ, աճը կազմել է 1,900,000 հազ. ՀՀ դրամ
- 2006 թվականի տարեվերջին – 3,240,000 հազ. ՀՀ դրամ, աճը կազմել է 450,000 հազ. ՀՀ դրամ:

2007 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ - 3,640,000 հազ. ՀՀ դրամ, աճը 9-ը

ամիսների արդյունքներով կազմել է 400,000 հազ. ՀՀ դրամ:

Բանկը տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսեր չունի:

Բանկի կողմից թողարկված արժեթղթերի նկատմամբ օպցիոններ սահմանված չեն:

բ. Բանկի գործունեության վերաբերյալ տեղեկություններ

Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի Ազդագրի 3-րդ բաժնի 2-րդ գլխում նկարագրված Ռիսկային գործոնները մինչև առաջարկվող բաժնետոմսերի գնելու որոշումն ընդունելը: Ռիսկային գործոններից յուրաքանչյուրը կարող է նշանակալից կամ էական բացասական ազդեցություն ունենալ Բանկի գործառնությունների, ֆինանսական իրավիճակի կամ արդյունքների վրա: Սա իր հերթին կարող է հանգեցնել Բանկի բաժնետոմսերի շուկայական գնի և(կամ) շահութաբաժինների համապատասխան նվազեցման:

Բանկի հիմնական գործունեությունը ֆինանսական միջնորդության՝ միջոցների ներգրավում և տեղաբաշխում, իրականացումն է, որը զուգորդվում է բանկային այլ բազմաբնույթ ծառայությունների մատուցումով, որոնք նկարագրված են ստորև:

Միջոցների ներգրավում

Բանկը ֆիզիկական և իրավաբանական անձանցից ընդունում է ժամկետային և ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով և արտարժույթով:

Բանկը հաճախորդներին առաջարկում է ավանդներ՝ տարբերակված ըստ նպատակների, ժամկետների և տոկոսադրույքների: Բանկի ներգրավված միջոցների ուղղություններն ու ցուցանիշների շարժը (դինամիկան) և մոտակա տարիների կանխատեսումներն արտացոլված են ստորև ներկայացված աղյուսակում:

Միջոցների ներգրավում **հազ. ՀՀ դրամ**

Ներգրավման ուղղությունները	31.12.2006 դրությամբ	30.09.2007 դրությամբ	31.12.07 կանխատեսում	31.12.08 կանխատեսում	31.12.09 կանխատեսում
Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից	109,273	1,322,616	1,900,000	5,370,000	5,024,000
Հաճախորդներից	2,965,370	8,722,591	9,950,000	20,640,000	29,845,000
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	0	250,000	250,000	500,000	1,000,000
ՌԵՊՈ համաձայնագրերով	1,402,651	910,252	500,000	1,600,000	1,800,000
Ընդամենը	**4,477,294**	**11,205,459**	**12,600,000**	**28,110,000**	**37,669,000**

Վարկեր և միջոցների այլ տեղաբաշխումներ

Բանկն իրականացնում է վարկավորման հետևյալ տեսակները՝ բիզնեսի վարկավորում (այդ թվում՝ երաշխիքների տրամադրում, փաստաթղթային ակրեդիտիվներ, վարկային գծեր, օվերդրաֆտ), բնակարանի ձեռքբերման և նորոգման հիփոթեքային վարկավորում, ավտովարկավորում, լոմբարդային վարկավորում, ինչպես նաև սպառողական այլ վարկավորում:

Բանկի վարկերի և տեղաբաշխված միջոցների ցուցանիշների շարժը (դինամիկան) և մոտակա տարիների կանխատեսումներն արտացոլված են ստորև ներկայացված աղյուսակում:

Վարկեր և այլ տեղաբաշխված միջոցներ **հազ. ՀՀ դրամ**

Տեղաբաշխման ուղղություններ	31.12.2006 դրությամբ	30.09.07 դրությամբ	31.12.07 կանխատեսում	31.12.08 կանխատեսում	31.12.09 կանխատեսում
Հաճախորդներին տրված վարկեր և այլ	2,569,814	6,681,818	10,000,000	23,687,000	31,081,000

փոխատվություններ					
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում	1,672,951	1,532,388	1,246,000	1,500,000	1,988,000
ՀՀ պետական և ՀՀ կենտրոնական բանկի արժեթղթերում	1,933,751	4,758,955	4,330,000	6,312,000	7,953,000
Այլ արժեթղթերում	13,760	13,756	13,756	18,000	18,000
Ընդամենը	**6,190,276**	**12,986,917**	**15,589,756**	**31,517,000**	**41,040,000**

Բանկը տրամադրում է հետևյալ ծառայությունները.

- արտարժույթի, ՀՀ պետական և ՀՀ կենտրոնական բանկի պարտատոմսերի, բանկային ոսկու առքի և վաճառքի գործարքներ
- ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության գանձապետարանի դրամարկղային սպասարկում
- իրավաբանական և ֆիզիկական անձանց բանկային հաշիվների սպասարկում. այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով
- «ԱրՔա» վճարային համակարգի պլաստիկ քարտերի թողարկում և սպասարկում
- հարկերի, տուրքերի, էլեկտրաէներգիայի, հեռախոսավարձի և այլ հանրային ծառայությունների դիմաց վճարների ընդունում
- AMERICAN EXPRESS ճանապարհային չեկերի, «MASHREQBANK PSC» բանկի կողմից Բանկի անվամբ թողարկված բանկային չեկերի դուրս գրում և հետգնում
- վճարահաշվարկային համակարգերով արագ դրամական փոխանցումների իրականացում:

գ. Բանկի ֆինանսական վիճակը և գործունեության արդյունքները

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Բանկի գործունեության հիմնական արդյունքների վերաբերյալ Ազդագրի ներկայացմանը նախորդող վերջին երկու տարիների վերաբերյալ տեղեկությունները:

Բանկի ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների ցուցանիշներ հազ. ՀՀ դրամ

	31.12.05 դրությամբ	31.12.06 դրությամբ	Աճ, %	30.09.07	Աճ, %
Ակտիվներ, այդ թվում՝	3,979,405	8,545,594	214.7	16,414,645	192.1
Վարկեր հաճախորդներին	1,475,993	2,569,814	174.1	6,681,818	260.0
Պարտավորություններ, այդ թվում՝	1,547,073	4,651,774	300.7	11,896,022	255.7
հաճախորդներից ներգրաված միջոցներ	1,342,870	2,965,370	220.8	8,722,591	294.1
Սեփական կապիտալ, այդ թվում՝	2,432,332	3,893,820	160.1	4,518,623	116.0
կանոնադրական կապիտալ (փաստացի վճարված)	2,790,000	3,240,000	116.1	3,640,000	112.3
Զուտ շահույթ (վնաս)	(2,405,565)	1,011,488	x	224,803	x
Ակտիվների տարեկան եկամտաբերություն (%)	x	18.8	x	2.4	x

Բանկը մտադիր է պահպանել վերջին տարիների ձեռքբերած նվաճողական գործելակերպը նաև հետագայում:

Բանկի նախատեսվող գործունեությունը և հեռանկարները.

Բանկի ապագա գործունեությունը նպատակամղված է լինելու Բանկի կայացմանը՝ որպես «գործարարական գործընկեր, բազմաբնույթ ծառայություններ մատուցող բանկ»:

Բանկը շարունակելու է զարգացնել Բանկի կապիտալի, այդ թվում՝ մարդկային, հիմքերը, ամրապնդելու է ֆինանսական դրությունը, ներ է դնելու կազմակերպական և տեխնոլոգիական միջոցներ, պաշտպանելու է հաճախորդների, ներդրողների և բաժնետերերի իրավունքներն ու շահերը, վարկավորելու և ներդրումներ է կատարելու տնտեսության տարբեր ոլորտներում:

Մոտակա 3 տարիների ընթացքում Բանկը նախատեսում է ապահովել.

- Բանկի ակտիվների, վարկային պորտֆելի և պարտավորությունների կտրուկ աճ
- կապիտալի զարգացումը. այդ թվում՝ կանոնադրական կապիտալի աճ
- իրավաբանական ու ֆիզիկական անձանց բանկային սպասարկման զարգացում
- միավորական (կորպորատիվ) կառավարման սկզբունքների զարգացում
- տեխնիկական ծրագրային և տեխնոլոգիական վերազինումը՝ էլեկտրոնային բանկային ծառայությունների, վճարային քարտերով գործառնությունների զարգացումը և թվով 20 մասնաճյուղերի ստեղծում
- Ֆինանսավարկային կազմակերպություններից, իրավաբանական ու ֆիզիկական անձանց ավանդների ընդունման ակտիվացում
- Բանկի ռիսկերի կառավարման մակարդակի բարձրացումը (Բազել 2 համաձայնագրի շրջանակներում), ՀՀ օրենսդրության և ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվային պահանջների պահպանում:

Մոտակա տարիներին Բանկը մտադիր է պահպանել ավանդական մեթոդներով բանկային ծառայությունների մատուցման նվաճողական գործելակերպը, այդ նպատակով ընդարձակելու է իր ներկայությունը՝ տարածաշրջանում ստեղծելով մոտ 20 մասնաճյուղեր, տեղակայելով և գործարկելով մոտ 40 բանկոմատներ և 200 POS-տերմինալներ, դրանով իսկ ծառայությունների մատուցումը մոտեցնելով սպառողներին: Միևնույն ժամանակ, իրականացնելու է բանկային ծառայությունների հեռահար մատուցման մեթոդների ընդարձակումը: Բանկը շարունակելու է ուսումնասիրել սպառողների բանկային ծառայությունների պահանջմունքները և դրանից ելնելով առաջարկելու է համապատասխան որակի և արժեքի ծառայություններ:

Բանկի գործունեության արդյունքների ցուցանիշների կանխատեսումները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Բանկի գործունեության արդյունքների կանխատեսումները հազ. ՀՀ դրամ

	31.12.06 դրությամբ	31.12.07 դրությամբ	31.12.08 դրությամբ	31.12.09 դրությամբ
1. Եկամուտներ, այդ թվում՝	1,352,557	1,417,000	2,360,000	3,215,000
տոկոսային եկամուտներ	379,175	1,117,000	1,900,000	2,670,000
2. Ծախսեր, այդ թվում՝	358,835	943,000	1,350,000	1,843,000
տոկոսային ծախսեր	34,205	530,000	645,000	990,000
3. Զուտ մասհանում պահուստներին	11,929	90,000	170,000	220,000
4. Շահույթ	981,793	384,000	840,000	1,152,000
6. Շահութահարկ	(29,695)	76,800	168,000	230,400
7. Զուտ շահույթ	1,011,488	307,200	672,000	921,600

դ. Բանկի կառավարման մարմինները և կառավարմանը մասնակցող անձինք

Բանկի կանոնադրությամբ, սահմանված են Բանկի կառավարման հետևյալ մարմինները.

- Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ժողով)
- Բանկի խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ)

▪ Բանկի գործադիր մարմինը՝ Բանկի գործադիր տնօրեն վարչության նախագահը (այսուհետ՝ Գործադիր տնօրեն) և Բանկի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն):

Կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը ներկայացված է ստորև.

Բանկի ժողովը

1. Ժողովը Բանկի կառավարման բարձրագույն մարմինն է:

2. Ժողովի հիմնական իրավասություններն են՝

ա) Բանկի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, Բանկի կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.

բ) Բանկի վերակազմակերպումը.

գ) Բանկի լուծարումը.

դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.

ե) Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան Ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ Ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

զ) Խորհրդի ներկայացմամբ Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

է) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը: Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.

ը) Խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը.

թ) օրենքով և Բանկի կանոնադրությամբ (Ազդագրին կցվում է) սահմանված այլ իրավասություններ:

Բանկի Խորհուրդը

Խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ օրենքով և Բանկի կանոնադրությամբ Խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում:

1. Խորհրդի հիմնական իրավասություններն են՝

ա) Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը.

բ) Բանկի գործադիր մարմնի անդամների նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.

գ) Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատողների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.

դ) Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը.

ե) Բանկի կանոնադրական կապիտալի ավելացումը.

զ) շահութաբաժինների վճարման վերաբերյալ Ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակի կազմումը, որում պետք է ընգրկվեն Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի տարեկան Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ.

է) Բանկի կողմից օրենքով և Բանկի կանոնադրությամբ սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը.

ը) Բանկի գույքի շուկայական արժեքի որոշումը: Բանկի պարտապանի պարտավորության վրա տոկոսների և տույժերի հաշվարկի դադարեցման, պարտքերի զեղչման, կամ ներման մասին որոշումների ընդունումը.

թ) օրենքով և Բանկի կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

Գործադիր մարմինը

Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Բանկի գործադիր մարմինը՝ Բանկի Վարչությունը և Գործադիր տնօրենը:

Գործադիր տնօրեն, նրա տեղակալ, Վարչության անդամ չի կարող լինել այն անձը, որը չի համապատասխանում ՀՀ կենտրոնական բանկի որակավորման համապատասխանության չափանիշներին և (կամ) որին օրենքով արգելված է լինել բանկի ղեկավար:

Բանկի Վարչության հիմնական իրավասություններն են՝

ա) Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագների, վարկերի, ավանդների և այլ տոկոսադրույքների սահմանում

բ) Բանկի աշխատատեղերի, աշխատանքի խթանման և խրախուսման պայմանների հաստատում

գ) վերստուգումների, ստուգումների, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունների քննարկում և դրանց վերաբերյալ որոշումների ընդունում

դ) կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքային գործունեության տարեկան պլանների և հաշվետվությունների հաստատում

ե) Բանկի կանոնադրությամբ սահմանված այլ իրավասությունների իրականացում:

Գործադիր տնօրենը, որպես իր բացառիկ իրավասություն, ներկայացնում է Բանկը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, Բանկի անունից կնքում է գործարքներ, գործում է առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր:

Գործադիր տնօրենի հիմնական իրավասություններն են՝

ա) իր իրավասությունների սահմաններում Բանկի գույքի, այդ թվում՝ ֆինանսական միջոցների, տնօրինում

բ) Ժողովի, Խորհրդի և Վարչության որոշումների, այդ թվում՝ հեռանկարային զարգացման ծրագրի և ներքին ակտերի կատարման ապահովում

գ) ըստ Բանկի վարչակազմակերպական կառուցվածքի, իրավասությունների և պարտականությունների բաշխման իրականացում աշխատողների միջև՝ հստակ սահմանելով հաշվետվական հարաբերությունները

դ) Բանկի կանոնադրությամբ, ինչպես նաև Խորհրդի կողմից սահմանված իրավական ակտերի շրջանակներում նախատեսված Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ իրավասությունների իրականացում:

Այն հարցերը, որոնք օրենքով կամ Բանկի կանոնադրությամբ չեն սահմանվել որպես Ժողովի, Խորհրդի կամ Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման իրավասությանը պատկանող, պատկանում են Գործադիր տնօրենի իրավասությանը:

Բանկի խորհրդի անդամներ

Բարսեղ Բեգլարյան՝ Բանկի Խորհրդի նախագահ
Էնդել Ստեփանյան՝ Խորհրդի անդամ
Մանուկ Մկրտչյան՝ Խորհրդի անդամ
Վաղարշակ Մանուկյան՝ Խորհրդի անդամ
Վահրամ Ղազարյան՝ Խորհրդի անդամ

Բանկի գործադիր մարմնի անդամներ

Աշոտ Օսիպյան՝ Վարչության նախագահ-գործադիր տնօրեն
Արթուր Հակոբյան՝ Վարչության նախագահի տեղակալ - գործադիր տնօրենի տեղակալ
Գագիկ Թադևոսյան՝ Վարչության անդամ-գլխավոր հաշվապահ
Համեստ Մուրադյան՝ Վարչության անդամ-Իրավաբանական վարչության պետ-գլխավոր իրավախորհրդատու

ե. Բանկի հետ փոխկապակցված անձինք, սեփականատերերը

Բանկի հետ փոխկապակցված, Բանկի կառավարման մարմինների անդամ, ֆիզիկական անձանց մասին տեղեկությունները ներկայացված են վերևում՝ «Բանկի խորհրդի անդամներ» և «Բանկի գործադիր մարմնի անդամներ» բաժիններում:

Բանկի հետ փոխկապակցված, Բանկի կառավարման մարմինների անդամ չհանդիսացող ֆիզիկական անձանց մասին տեղեկությունները ներկայացված են ստորև.

Հովհաննես Հովհաննիսյան՝ Ներքին աուդիտի վարչության պետ
Տիգրան Երանոսյան՝ Ներքին աուդիտի վարչության առաջատար մասնագետ
Գայանե Մարգարյան՝ Գլխավոր հաշվապահի տեղակալ, Հաշվապահական հաշվառման վարչության Հաշվետվությունների և վերլուծությունների բաժնի պետ

Բանկի հետ փոխկապակցված ֆիզիկական անձինք սեփականության իրավունքով Բանկի բաժնային արժեթղթեր չունեն:

Բանկի հետ փոխկապակցված անձանց միջև ազգակցական կապեր չկան:

Բանկի հետ փոխկապակցված միակ իրավաբանական անձ է «ՖԼԵՇ» ՍՊԸ-ն, որին պատկանում է Բանկի 100 % բաժնետոմսերը: «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի գտնվելու վայրն է ՀՀ, ք. Երևան, Ե. Կողբացու 30: Պետական գրանցման համարն է 290.110.1114, գրանցման հասցեն՝ Հարավ-Արևմտյան թաղամաս, 50/3, բն. 32:

զ. Բանկի թողարկված արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ

<u>Բանկի թողարկած պարտատոմսերը</u>

2007 թվականի մայիսի 10-ին Բանկը տեղաբաշխել է անվանական, ոչ փաստաթղթային, արժեկտրոնային պարտատոմսեր:

Բանկի թողարկած պարտատոմսերը գրանցում չեն պահանջում:

Բանկի թողարկած անվանական պարտատոմսերը ցուցակված են Հայաստանի ֆոնդային բորսայում, վերին ABond մակարդակում, որոնց շնորհվել է ARKBB1 բորսայական հապավումը և AMARKBB12ER6 ծածկագիրը:

Հայաստանի ֆոնդային բորսա, հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5բ, հեռ. 54-33-24:

Բանկի թողարկած և տեղաբաշխած անվանական պարտատոմսերի ծավալը՝ 250,000 հազ. ՀՀ դրամ, քանակը՝ 25,000 հատ, տարեկան 8% տոկոսադրույքով:

Բանկի տեղաբաշխած անվանական պարտատոմսերի մարման ժամկետը՝ 2008 թվականի մայիսի 12-ը:

Բանկի անվանական պարտատոմսերի սեփականատերերի իրավունքներն են.

- ազատ վաճառել պարտատոմսերը, այդ թվում՝ ֆոնդային բորսայում
- պարտատոմսերում ներդրված միջոցների դիմաց ստանալ տոկոսներ՝ համաձայն սահմանված ժամանակացույցի

- պարտատոմսերի մարման ժամանակ Բանկից ստանալ ներդրված գումարը:

Պարտատոմսերի արժեկտրոնային եկամուտները վճարվում են հետևյալ ժամանակացույցով.

- 2007թ. օգոստոսի 10-ին
- 2007թ. նոյեմբերի 12-ին
- 2008թ. փետրվարի 11-ին
- 2008թ. մայիսի 12-ին:

Բանկի անվանական պարտատոմսերի վաճառքի ամենաբարձր գինը եղել է՝ 10,199.6 ՀՀ դրամ, ամենացածր գինը՝ 10,000 ՀՀ դրամ:

Պարտատոմսերի դիմաց վճարումների սահմանափակումներ չեն եղել: Բանկը չի նախատեսում պարտատոմսերի դիմաց եկամուտների վճարման որևէ սահմանափակում:

Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման պայմանների համաձայն, դրանք փոխարկման, բաժանման, համախմբման ենթակա չեն:

Պարտատոմսերի առուվաճառքը կատարվում է Հայաստանի ֆոնդային բորսայում:

Պարտատոմսերի հետգնումը կատարվելու է դրանց շրջանառության ժամկետի ավարտին:

ԲԱԺԻՆ 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) Ընդհանուր տեղեկություններ.

ա. Թողարկվող բաժնետոմսերը հասարակ (սովորական) անվանական, ոչ փաստաթղթային բաժնետոմսեր են:

բ. Թողարկման ընդհանուր ծավալը կազմում է 381,500 հազ. ՀՀ դրամ:

գ. Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը 5,000 ՀՀ դրամ է:

դ. Թողարկվող բաժնետոմսերը փոխարկելի չեն:

ե. Բաժնետոմսերի տեղաբաշխման սկիզբը՝ 17 դեկտեմբերի 2007 թ., ավարտը՝ 21 հունվարի 2008 թ.:

Տեղաբաշխման ժամկետները կարող են ճշգրտվել Բանկի Խորհրդի որոշմամբ՝ ելնելով ՀՀ կենտրոնական բանկի կողմից Ազդագիրը ներառող արժեթղթերի գրանցման հայտարարագրի գրանցման ժամկետներից:

զ. Բանկը չի նախատեսում բաժնետոմսերի առաջարկի, ինչպես նաև տեղաբաշխման չեղյալ հայտարարելու հանգամանքներ:

Տեղաբաշխման ժամկետները կարող են հետաձգվել Բանկի Խորհրդի որոշմամբ՝ ելնելով ՀՀ կենտրոնական բանկի կողմից Ազդագիրը ներառող արժեթղթերի գրանցման հայտարարագրի գրանցման ժամկետներից:

է. Բաժնետոմսերի բաժանորդագրությունը և դրանց դիմաց վճարումները կատարվում են միաժամանակ և ամբողջությամբ՝ Բանկի գլխամասային գրասենյակում կամ մասնաճյուղերում, և կուտակվում են ՀՀ կենտրոնական բանկում այդ նպատակով բացված թիվ 103002801514 կուտակային հաշվին:

ը. Բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման մասին որոշումն ընդունել է Բանկի Խորհրդը 26.11.2007թ.-ի թիվ 30/01 որոշմամբ:

2) Բաժնետոմսերի գնի վերաբերյալ տեղեկություններ.

ա. Բանկի խորհրդի կողմից բաժնետոմսերի տեղաբաշխման գինը սահմանված է 5,900 ՀՀ դրամ:

բ. Բանկի բաժնետերերն իրավունք ունեն Բանկի կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համամասնորեն նոր բաժնետոմսերի և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի ձեռք բերման նախապատվության իրավունք: Նախապատվության իրավունքի իրականացման վերաբերյալ բաժնետերերը ծանուցված են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Նախապատվության իրավունքով գնվող բաժնետոմսի գինը 5,900 ՀՀ դրամ է:

3) Շահութաբաժինների վերաբերյալ տեղեկություններ.

Շահութաբաժինների չափը որոշվում է՝ ելնելով Բանկի փաստացի շահույթի բաշխումից, հիմք ընդունելով Բանկի շահութաբաժնային ստորև նկարագրված քաղաքականությունը:

Բանկի խորհրդի կողմից տարեկան շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին Բանկի ընդհանուր ժողովին ներկայացվող առաջարկությունում հիմնավորում է Բանկի զուտ շահույթի բաշխման ուղղությունները, հաշվի առնելով՝

- Բանկի գլխավոր պահուստի ստեղծման ՀՀ օրենսդրության պահանջները
- շահութաբաժնի վճարմանն ուղղվող գումարի չափը՝ ելնելով ֆինանսական շուկայում բաժնային արժեթղթերի, ինչպես նաև ներդրումային այլ արժեթղթերի դիմաց վճարվող եկամուտների տոկոսաչափից
- Բանկի բաժնետոմսերի շուկայական արժեքի բարձրացման և հիմնադրամների ձևավորման անհրաժեշտությունը:

Ընդհանուր ժողովը շահութաբաժինների վճարման մասին որոշումն ընդունում է ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ:

Տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները վճարվում են զուտ

շահույթից՝ ՀՀ դրամով, եռամսյակային և կիսամյակային՝ Բանկի խորհրդի որոշմամբ, տարեկան՝ Բանկի ժողովի որոշմամբ:

Տարեկան շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Ժողովը՝ Բանկի խորհրդի առաջարկությամբ, սահմանելով նաև վճարման ժամկետը:

Բաժնետոմսերի սեփականատերերն իրենց շահութաբաժինները կարող են ստանալ Բանկի գլխամասային գրասենյակից և մասնաճյուղերից՝ իրենց անվամբ բանկում բացված բանկային հաշիվներից:

ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ սահմանված են շահութաբաժինների վճարման իրավունքի հետևյալ սահմանափակումները: Բանկին արգելվում է վճարել շահութաբաժիններ, եթե՝

ա) Բանկը բաժնետիրոջ պահանջով և ՀՀ կենտրոնական բանկի համաձայնությամբ բաժնետիրոջից հետ չի գնել բաժնետոմսերը կամ դրանց մի մասը, այն դեպքում երբ.

- որոշում է ընդունվել Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու մասին, և բաժնետերը քվեարկել է Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու դեմ կամ այդ հարցերով քվեարկությանը չի մասնակցել,

- Բանկի կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ են կատարվել, կամ հաստատվել է կանոնադրությունը նոր խմբագրությամբ, որի հետևանքով սահմանափակվել են բաժնետիրոջ իրավունքները և բաժնետերը դեմ է քվեարկել կամ քվեարկությանը չի մասնակցել.

բ) շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ, Բանկի վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սնանկության) հայտանիշերին, կամ դրանք ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով.

գ) այդ պահին Բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են Բանկում առկա չբաշխված շահույթի գումարը:

Բանկի բաժնետոմսերի ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ սեփականատերերին շահութաբաժինների վճարումն իրականացվում է նույն պայմաններով:

Բանկը չունի տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսեր:

4) Տվյալ դասի և ձևի բաժնետոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքներն ու պարտականությունները.

Բանկի հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատեր բաժնետերն իրավունք ունի՝

ա) մասնակցել Ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով.

բ) մասնակցել Բանկի կառավարմանը.

գ) ստանալ շահութաբաժիններ՝ Բանկի գործունեությունից առաջացած շահույթից.

դ) ստանալ Բանկի գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ Բանկի կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ Բանկի հաշվեկշռին, ֆինանսական և հարկային հաշվետվություններին.

ե) հանդես գալ առաջարկություններով ժողովներում և քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով.

զ) առաջնահերթ կարգով ձեռք բերել Բանկի կողմից թողարկվող և տեղաբաշխվող բաժնետոմսերը և այլ արժեթղթերը.

է) Բանկի սեփական միջոցների հաշվին, Բանկի կանոնադրական կապիտալի չափն ավելացնելիս, անվճար ստանալ համապատասխան քանակությամբ հասարակ (սովորական) բաժնետոմսեր.

ը) Բանկի լուծարման դեպքում, ստանալ Բանկի գույքի (միջոցների)՝ իրեն հասանելիք մասը.

թ) Բանկի կանոնադրությամբ և օրենքով սահմանված կարգով, օտարել կամ այլ ձևով այլ անձանց փոխանցել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերը.

ժ) դիմել դատարան՝ Ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին, Բանկի կանոնադրությանն ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով.

ժա) Բանկից պահանջել բաժնետոմսերի հետգնման գնի որոշում և իրեն պատկանող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի՝ Կենտրոնական բանկի համաձայնությամբ, հետգնում, եթե՝

- որոշում է ընդունվել Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու մասին, և նա քվեարկել է Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարքը կնքելու դեմ կամ այդ հարցերով քվեարկությանը չի մասնակցել.

- Բանկի կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ են կատարվել, կամ հաստատվել է կանոնադրությունը նոր խմբագրությամբ, որի հետևանքով սահմանափակվել են նրա իրավունքները, և նա դեմ է քվեարկել կամ քվեարկությանը չի մասնակցել.

ժբ) Ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի.

ժգ) ունենալ օրենսդրությամբ կամ Բանկի կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

Բանկի բաժնետերը պարտավոր է՝

ա) բաժնետոմսերի թողարկման որոշմամբ սահմանված ժամկետներում լրիվ վճարել իր բաժնետոմսերի արժեքը.

բ) չհրապարակել Բանկի հաճախորդների և Բանկի գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկությունները՝ բանկային գաղտնիքը.

գ) Բանկի ձայնի իրավունքով 10 և ավելի տոկոսի հասարակ (սովորական) բաժնետոմսերի տիրապետման դեպքում Բանկին հայտարարություն ներկայացնել իր հետ փոխկապակցված անձանց մասին.

դ) Բանկին հայտարարություն ներկայացնել այն մասին, որ իր մասնակցության միջոցով որևէ այլ անձ Բանկում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ ձեռք չի բերում, հակառակ դեպքում՝ ներկայացնել նաև անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձանց վերաբերյալ Կենտրոնական բանկի սահմանած փաստաթղթերը՝ նախնական համաձայնություն ստանալու համար.

ե) սեփականության իրավունքով իրեն պատկանող Բանկի բաժնետոմսերի կամ դրանց մասի օտարման կամ այլ անձանց փոխանցելու մտադրության մասին գրավոր հայտնել Բանկի խորհրդին.

զ) կատարել օրենքի, այլ իրավական ակտերի և Բանկի կանոնադրության պահանջները:

5) Սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններ.

ա. ՀՀ օրենսդրությամբ, Բանկի կանոնադրությամբ և Բանկի հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի թողարկման մասին Բանկի խորհրդի որոշմամբ բաժնետոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ սահմանված են հետևյալ սահմամափակումները.

- մեկ անձի և նրա հետ փոխկապակցված անձանց կողմից բաժանորդագրված բաժնետոմսերի քանակը չի կարող գերազանցել 72,800 հատը, իսկ գերազանցելու դեպքում անձը պետք է ստանա ՀՀ կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը
- Բանկի բաժնետոմսերի բաժանորդագրությանը չեն կարող մասնակցել օֆշորային գոտիներում գրանցված անձինք
- մեկ իրավաբանական անձ ներդրողի կողմից ձեռք բերվող բաժնետոմսերի նվազագույն քանակը չպետք է պակաս լինի 40 հատից:

բ. Ազդագրի համաձայն, բաժնետոմսերի բաժանորդագրության նվազագույն քանակը կազմում է 70,000 հատ՝ 350,000 հազ. ՀՀ դրամ, իսկ առավելագույն քանակը՝ 76,300 հատ կամ դրամային արտահայտությամբ 381,500 հազ. ՀՀ դրամ:

6) Տեղեկություններ բաժնետոմսերի տեղաբաշխմանը մասնակցող անձանց և նրանց մասնակցության չափի վերաբերյալ.

Բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է առանց մասնագիտացված

կազմակերպության (անդերռայթերի) ներգրավման:

7) Բաժանորդագրությունների վերաբերյալ տեղեկություններ.

ա. Բաժանորդագրությանը կարող են մասնակցել ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ, ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձինք:

Բաժնետոմսերի բաժանորդագրությունն իրականացվում է Բանկի գլխամասային գրասենյակում և մասնաճյուղերում, որտեղ իրավաբանական անձ ներդրողի լիազոր ներկայացուցիչը կամ ֆիզիկական անձ ներդրողը անձնագրով պետք է գրանցվի գրանցամատյանում, կատարի բաժնետոմսերի դիմաց միանվագ վճարում:

բ. Բաժանորդագրության ետ կանչի պահանջ չի ընդունվում:

գ. Բաժանորդագրությունների քանակը կարող է նվազեցվել՝

 Ազդագրի սույն բաժնի «Սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններ» 5-րդ կետում նկարագրված սահմանափակումները չպահպանելու դեպքում

 բաժանորդագրված բաժնետոմսերի քանակը 76,300 հատը լրանալու դեպում Բանկը բաժանորդագրությունը դադարեցնում է:

8) Տեղաբաշխված (տեղաբաշխվող) բաժնետոմսերից ստացվող բաժնետոմսերի սեփականատերերի եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը.

<u>Բաժնետոմսերի ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձ սեփականատերեր</u>՝ համաձայն «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի (10-րդ հոդված), ռեզիդենտ ֆիզիկական անձանց հարկվող եկամուտը նվազեցվում է բաժնետոմսերի դիմաց ստացված շահութաբաժինների գումարի չափով՝ այսինքն չի հարկվում:

<u>Բաժնետոմսերի ռեզիդենտ իրավաբանական անձ սեփականատերեր</u>՝ համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի (26-րդ հոդված), ռեզիդենտ իրավաբանական անձանց հարկվող շահույթը նվազեցվում է բաժնետոմսերի դիմաց ստացված շահութաբաժինների գումարի չափով՝այսինքն չի հարկվում:

<u>Բաժնետոմսերի ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձ սեփականատերեր՝</u> համաձայն «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի (22-րդ հոդված) և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի (56-րդ հոդված), բաժնետոմսերի դիմաց ստացված շահութաբաժինների գումարը հարկվում է 10 տոկոս դրույքաչափով:

9) Ֆոնդային բորսայում առևտրի թույլտվության վերաբերյալ տեղեկություններ.

ա. Բանկը մտադիր է սույն բաց տեղաբաշխման ավարտից հետո իր բաժնետոմսերը գրանցել և ցուցակել Հայաստանի ֆոնդային բորսայում՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Մ. Մկրտչյան, 5բ:

բ. Բանկի բաժնետոմսերը ֆոնդային բորսաներում դեռևս չեն շրջանառվում:

գ. Շուկա ստեղծող (մարքեթ մեյքեր) անձի հետ պայմանգիր դեռևս կնքված չէ:

10) Բաժնետոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումը և (կամ) գրանցումն իրականացնող կազմակերպությունների վերաբերյալ տեղեկություններ

Բանկի բաժնետոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների գրանցումը և հաշվառումն իրականացնում է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԻԿԿ-ն, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5բ, հեռ. 56-64-46:

11) Նոր թողարկման իրականացման կանխատեսվող ամսաթիվը.

Բաժնետոմսերի նոր թողարկում Բանկը պլանավորում է իրականացնել 2008 թվականի երկրորդ կիսամյակում:

ԲԱԺԻՆ 3. ԲԱՆԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) Բանկի պատմությունը և զարգացումը.

ա. Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է

հայերեն՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերություն

ռուսերեն՝ ÀÐÀÐÀÒÁÀ Í Ê î òêðû ò î å àêöè î íåðí î å î áùåñò â î

անգլերեն՝ ARARATBANK Open Joint Stock Company

Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է

հայերեն՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

ռուսերեն՝ Î À Î ÀÐÀÐÀÒÁÀ Í Ê

անգլերեն՝ ARARATBANK Î JSC

բ. Բանկը ստեղծվել է 1991 թվականի սեպտեմբերի 20-ին, գրանցվել է որպես «ՀԱՅԿԱՊ» բանկ ՍՊԸ, որը վերակազմավորվել է «ՀԱՅԿԱՊ» բանկ ՓԲԸ-ի, այնուհետև անվանափոխության միջոցով՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ՓԲԸ-ի, որը 2007 թվականի օգոստոսին վերակազմավորվել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի:

գ. Բանկն առաջին գրանցումը ստացել է 1991 թվականի սեպտեմբերի 20-ին, գրանցման համարն է 4, Բանկը փաստացի գործունեությունը սկսել է իրականացնել 1991 թվականի սեպտեմբերից մինչ օրս՝ 16 տարի:

Բանկի գրանցման և գործունեության վայրն է՝ ք. Երևան, Պուշկինի 19:

Բանկը գրանցված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից:

Բանկը հանդիսանում է Հայաստանի բանկերի միության և Հայաստանի հիփոթեքային շուկայի մասնակիցների միության անդամ:

2007 թ.-ի մայիսին Global Rating Group միջազգային վարկանշային կազմակերպության կողմից Բանկի ֆինանսական կայունության և վարկունակության վարկանիշը գնահատվել է B-, կանխատեսումը՝ կայուն, այնուհետև 2007 թ.-ի սեպտեմբերին վարկանիշը բարձրացել է B+, կանխատեսումը՝ կայուն:

2) Ֆինանսական և այլ խմբերի վերաբերյալ տեղեկություններ.

Բանկը չի հանդիսանում որևէ արդյունաբերական, բանկային, ֆինանսական խմբերի և միությունների մաս:

3) Բանկի մասնաճյուղերը և ներկայացուցչությունները.

Աղյուսակ 1. Բանկի մասնաճյուղերը

	Մասնաճյուղի անվանում	Հասցե
1.	Նաիրիտ	ՀՀ. ք. Երևան, Բագրատունյաց 70
2.	Ստեփանակերտ	ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Մ. Մաշտոցի 1/Ա
3.	Սեբաստիա	ՀՀ. ք. Երևան, Սեբաստիա 141/1
4.	Մաշտոց	ՀՀ. ք. Երևան, Մ. Մաշտոցի 25
5.	Խորենացի	ՀՀ, ք. Երևան, Մ. Խորենացի 24/7 և 24/9

6.	Գյումրի	ՀՀ, ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի պ. 1/5
7.	Աբովյան	ՀՀ, ք. Աբովյան, Հանրապետության 1/21
8.	Ծաղկաձոր	ՀՀ, ք. Ծաղկաձոր, Գրիգոր Մագիստրոսի փողոց, 2-րդ շենք, 1-ին հարկ
9.	Դավթաշեն	ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 2-րդ թաղ., 44 շենք
10.	ԱՐԱՐԱՏՅԱՆ	ՀՀ, ք. Երևան, Ծովակալ Իսակովի 10
11.	ԶՎԱՐԹՆՈՑ	ՀՀ, ք. Երևան, ք.Երևան 42, «Զվարթնոց» օդանավակայանի բեռնահամալիրի տարածք

Բանկը ՀՀ տարածքում և տարածքից դուրս գրանցված ներկայացուցչություններ չունի:

4) Բանկի աուդիտն իրականացնող անձինք.

ա. 2004 ֆինանսական տարվա համար Բանկում անկախ աուդիտորական ստուգում չի անցկացվել, ինչի վերաբերյալ Բանկը ստացել է ՀՀ կենտրոնական բանկի համաձայնությունը:

2005 թվականին «Քեյ-Փի-էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից իրականացվել է Բանկի հաշվապահական հաշվեկշռի անկախ աուդիտորական ստուգում:

Բանկի 2006 թվականի անկախ աուդիտորական ստուգումը նույնպես իրականացվել է «Քեյ-Փի-էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից:

«Քեյ-Փի-էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ի հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան 0010, Հանրապետության 8, հեռ. +374 (10) 566 762, ֆաքս 374 (10) 566 762, www.kpmg.am: Տնօրեն՝ Էնդրյու Քոքշել:

բ. Վերջին երեք տարիների ընթացքում Բանկի աուդիտն իրականացնող անձի կողմից աշխատանքից հրաժարման, վերընտրությանը չմասնակցելու և աշխատանքից այլ հիմքերով ազատման փաստ չի եղել:

5) Փորձագետների մասնագիտական կարծիքը և այլ անձանցից ստացված տեղեկությունները.

ա. Փորձագետ կամ խորհրդատու, որի մասնագիտական կարծիքն օգտագործվել է Ազդագրում, Բանկը չի ներգրավել:

բ. ՀՀ տնտեսության ու բանկային համակարգի մասին ամփոփ տեղեկությունները Ազդագրում ներառված են ՀՀ կենտրոնական բանկի, այլ մարմինների և ՀՀ-ում գործող բանկերի կողմից մամուլում կատարված պաշտոնական հրապարակումներից: Այլ անձանցից ձեռք բերված տեղեկություններ Ազդագրում ներառված չեն:

6) Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի չափը.

Բանկի կանոնադրական կապիտալը բաղկացած է 728,000 հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսից, յուրաքանչյուրը 5,000 ՀՀ դրամ անվանական արժեքով:

Բանկի կանոնադրական կապիտալը 100 %-ով վճարված է և կազմում է 3,640,000 հազար ՀՀ դրամ:

Կանոնադրական կապիտալը վերջին երեք տարիների ընթացքում վճարվել է ամբողջությամբ և ըստ տարիների կազմել է՝

2004 թվականի տարեվերջին - 890,000 հազ. ՀՀ դրամ, աճը կազմել է 50,000 հազ. ՀՀ դրամ

2005 թվականի տարեվերջին – 2,790,000 հազ. ՀՀ դրամ, աճը կազմել է 1,900,000 հազ. ՀՀ դրամ

2006 թվականի տարեվերջին – 3,240,000 հազ. ՀՀ դրամ, աճը կազմել է 450,000 հազ. ՀՀ դրամ:

2007 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ - 3,640,000 հազ. ՀՀ դրամ, աճը 9-ը ամիսների արդյունքներով կազմել է 400,000 հազ. ՀՀ դրամ:

2007-2009թ.թ Բանկի կանոնադրական կապիտալի աճն ըստ տարիների համապատասխանաբար կանխատեսվում է.

2007 թվականի տարեվերջին – 3,990,000 հազ. ՀՀ դրամ, աճը կկազմի 750,000 հազ. ՀՀ դրամ

2008 թվականի տարեվերջին – 4,890,000 հազ. ՀՀ դրամ, աճը կկազմի 900,000 հազ. ՀՀ դրամ
2009 թվականի տարեվերջին – 5,380,000 հազ. ՀՀ դրամ, աճը կկազմի 490,000 հազ. ՀՀ դրամ:

Բանկը տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսեր չունի:

7) Բանկի կողմից թողարկված արժեթղթերի նկատմամբ առկա օպցիոնների վերաբերյալ տեղեկություններ.

Բանկի կողմից թողարկված արժեթղթերի նկատմամբ օպցիոններ սահմանված չեն:

8) Բաժնետերերի տարեկան և արտահերթ ժողովների հրավիրման կարգը.

Բանկի բաժնետերերի տարեկան ժողովը գումարվում է Խորհրդի որոշմամբ՝ Բանկի յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում:

Անհետաձգելի հարցերի քննարկման համար տարեկան ժողովից բացի գումարվում են արտահերթ ժողովներ:

Արտահերթ ժողովը գումարվում է Խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, գործադիր մարմնի, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի, Կենտրոնական բանկի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Բանկի առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

ԳԼՈՒԽ 2. ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) Ռիսկային գործոններ.

Ցանկացած տնտեսավարող սուբյեկտի, այդ թվում՝ բանկերի, բաժնետոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ:

Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի ներքո շարադրած դրանց ամփոփ նկարագրությունը և Ազդագրի մեջ տեղ գտած բոլոր այլ տեղեկությունները մինչև առաջարկվող բաժնետոմսերի գնելու որոշումն ընդունելը: Ռիսկային գործոններից յուրաքանչյուրը կարող է նշանակալից կամ էական բացասական ազդեցություն ունենալ Բանկի գործառնությունների, ֆինանսական իրավիճակի կամ արդյունքների վրա: Սա իր հերթին կարող է հանգեցնել Բանկի բաժնետոմսերի շուկայական գնի և(կամ) շահութաբաժինների համապատասխան նվազեցման:

Ելնելով նշվածից, Բանկը խուսափել է Ազդագրում ներկայացված ցուցանիշների, կանխատեսումների և տեղեկատվության մեկնաբանություններից, որպեսզի ներդրողն ինքնուրույն ուսումնասիրի դրանք՝ բաժնետոմսեր գնելու կամ չգնելու որոշում կայացնելու համար:

- Բոլոր տեսակի իրադարձությունները, որոնք կհանգեցնեն Բանկի վարկառուների կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարմանը, հաճախորդների կողմից Բանկի հուսալիության հանդեպ կասկածանքի կամ բացասական վերաբերմունքի, կարող են էապես ազդել Բանկի գործունեության վրա: Դա կարտահայտվի Բանկի կողմից լրացուցիչ ծախսերի կատարմամբ և շահույթի պլանային ցուցանիշի մակարդակի ապահովման դժվարությամբ:
- Բանկային գործունեությունը պետական կառավարման մարմինների կողմից լիցենզավորման և կարգավորման ենթակա գործունեություն է: Բանկային գործունեության ոլորտում պետական կարգավորման նպատակը հանդիսանում է ներդրողների և հաճախորդների իրավունքների պաշտպանությունը, որն իրականացվում է տնտեսական գործունեության նորմատիվների և բանկային ռիսկերի կառավարման համակարգերի սահմանմամբ: Դա նշանակում է, որ հնարավոր են պետական կարգավորման հետ կապված փոփոխություններ, որոնք կարող են էապես ազդել Բանկի գործառնությունների վրա և անգամ բացասաբար ազդել ֆինանսական ցուցանիշների վրա:

- ՀՀ-ում բանկային ծառայությունների շուկան խիստ մրցակցային է, շուկայում գործում են այլ բանկեր, որոնցից մի քանիսն ունեն ավելի մեծ նյութական և ֆինանսական կարողություններ: Այդ պատճառով Բանկը չի կարող երաշխավորել պլանավորված շահույթի ստացումը, որ ապագայում միշտ ի վիճակի կլինի իրականացնել հեռանկարային զարգացման ծրագրով մշակված ռազմավարական նպատակները և խնդիրների լուծման մարտավարությունը, քանի որ մրցակցությունը ստանում է նոր ազդակներ:
- Բանկը գործարար համագործակցություն է հաստատում միջազգային հիմնադրամների և բանկերի հետ, որոնց հետ կնքած պայմանագրերի կատարման կասեցումը կարող է բերել պլանավորված եկամուտների և շահույթի նվազելուն:
- Բաժնետոմսերով բորսայական սպեկուլյատիվ գործարքները, կարող են հանգեցնել բաժնետոմսերի շուկայական գնի տատանմանը:
- Բարձրորակ մասնագետների առկայությունը Բանկի աշխատակազմում շատ կարևոր է մրցունակ լինելու և պլանավորված աշխատանքների արդյունավետ իրականացման համար: Նման մասնագետների նկատմամբ մեծ պահանջարկի առկայության պատճառով, Բանկը չի կարող երաշխավորել, որ բոլոր առանձնահատուկ կարևոր աշխատողները ապագայում միշտ կմնան Բանկի աշխատակազմում:

Ելնելով ՀՀ-ում տնտեսական և քաղաքական զարգացումներից, հաշվի առնելով բանկային համակարգի զարգացման ներկա վիճակը, Բանկի զգուշավոր գործելակերպը, Բանկ-Հաճախորդ գործարար հարաբերությունների ներկայիս դրսևորումները, ինչպես նաև այն, որ ՀՀ կենտրոնական բանկը հստակ կանոնակարգել է և խիստ հսկողություն է իրականացնում բանկերի նկատմամբ, ներառյալ ռիսկերի վաղ հայտնաբերման գործում, նշված ռիսկերի ի հայտ գալու հավանականությունը ձգտում է նվազագույնի:

2) Բանկի հիմնական գործունեության նկարագիրը.

ա. Բանկի հիմնական գործունեությունը ֆինանսական միջնորդության՝ միջոցների ներգրավում և տեղաբաշխում, իրականացումն է, որը զուգորդվում է բանկային այլ բազմաբնույթ ծառայությունների մատուցումով, որոնք նկարագրված են ստորև:

Միջոցների ներգրավում

Բանկը ֆիզիկական և իրավաբանական անձանցից ընդունում է ժամկետային և ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով և արտարժույթով:

Բանկը հաճախորդներին առաջարկում է ավանդներ՝ տարբերակված ըստ նպատակների, ժամկետների և տոկոսադրույքների: Բանկի ներգրավված միջոցների ուղղությունները և ցուցանիշների շարժը (դինամիկան), դրանց մոտակա տարիների կանխատեսումներն արտացոլված են Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Միջոցների ներգրավում **հազ. ՀՀ դրամ**

Ներգրավման ուղղությունները	31.12.2006 դրությամբ	30.09.2007 դրությամբ	31.12.07 կանխատեսում	31.12.08 կանխատեսում	31.12.09 կանխատեսում
Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից	109,273	1,322,616	1,900,000	5,370,000	5,024,000
Հաճախորդներից	2,965,370	8,722,591	9,950,000	20,640,000	29,845,000
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	0	250,000	250,000	500,000	1,000,000
ՌԵՊՈ համաձայնագրերով	1,402,651	910,252	500,000	1,600,000	1,800,000
Ընդամենը	**4,477,294**	**11,205,459**	**12,600,000**	**28,110,000**	**37,669,000**

Վարկեր և միջոցների այլ տեղաբաշխումներ

Բանկն իրականացնում է վարկավորման հետևյալ տեսակները՝ բիզնեսի վարկավորում (այդ թվում՝ երաշխիքների տրամադրում, փաստաթղթային ակրեդիտիվներ, վարկային գծեր, օվերդրաֆտ), բնակարանի ձեռքբերման և նորոգման հիփոթեքային վարկավորում, ավտովարկավորում, լոմբարդային վարկավորում, ինչպես նաև սպառողական այլ վարկավորում:

Բանկի վարկերի և տեղաբաշխված միջոցների ցուցանիշների շարժը (դինամիկան) և մոտակա տարիների կանխատեսումներն արտացոլված են Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Վարկեր և այլ տեղաբաշխված միջոցներ հազ. ՀՀ դրամ

Տեղաբաշխման ուղղություններ	31.12.2006 դրությամբ	30.09.07 դրությամբ	31.12.07 կանխատեսում	31.12.08 կանխատեսում	31.12.09 կանխատեսում
Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ	2,569,814	6,681,818	10,000,000	23,687,000	31,081,000
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում	1,672,951	1,532,388	1,246,000	1,500,000	1,988,000
ՀՀ պետական և ՀՀ կենտրոնական բանկի արժեթղթերում	1,933,751	4,758,955	4,330,000	6,312,000	7,953,000
Այլ արժեթղթերում	13,760	13,756	13,756	18,000	18,000
Ընդամենը	**6,190,276**	**12,986,917**	**15,589,756**	**31,517,000**	**41,040,000**

Արտարժույթի և արժեթղթերի դիլինգ և բրոքերային ծառայություններ

Բանկը կատարում է արտարժույթի, ՀՀ պետական, ՀՀ կենտրոնական բանկի պարտատոմսերի և բանկային ոսկու առք ու վաճառքի գործարքներ:

ՀՀ ֆինանսաների և էկոնոմիկայի նախարարության կողմից Բանկը ճանաչվել է ՀՀ պետական ներքին պարտքի կառավարման գործակալ:

Գանձապետարանի սպասարկում

Բանկը հանդիսանում է ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության գանձապետարանի դրամարկղային սպասարկում իրականացնող 7 բանկերից մեկը:

Բանկային փոխանցումներ

Բանկը 1997թ.-ից սկսած անդամակցում է S.W.I.F.T. միջազգային դրամական փոխանցումների համակարգին:

Բանկը թղթակցային հաշիվներ ունի տեղական և միջազգային 27 բանկերում, ինչը հնարավորություն է տալիս ապահովել Բանկի հաճախորդների վճարահաշվարկային սպասարկումը ցանկացած արժույթով և վճարային գործիքով:

Հաշվի առնելով ֆիզիկական անձանց դրամական փոխանցումների ծավալների աճը, Բանկն առանձնապես կարևորում է դրամական փոխանցումների համակարգի կատարելագործումը և ընդլայնումը:

Բանկը հանդիսանում է Western Union, «Անելիք» և «Migom» ֆիզիկական անձանց դրամական փոխանցումների միջազգային համակարգերի գործակալ:

Բանկը ստեղծել է WESTERN UNION մասնագիտացված մասնաճյուղ:

Բանկն իրականացնում է միջազգային փոխանցումներ նաև Privat Money և ÁÒÔ Ñîþç համակարգերով:

Պլաստիկ Քարտեր

Պլաստիկ քարտերի թողարկման և սպասարկման համակարգի կատարելագործումը Բանկի համար հանդիսանում է զարգացման գերակա ուղղություններից մեկը՝ հաշվի առնելով ներկա պայմաններում բնակչության կողմից աճող պահանջարկը և անկանխիկ վճարումների ավելացմանն ուղղված պետական քաղաքականությունը:

Հանդիսանալով «Արմենիան քարդ» (ԱրՔա) ընկերության բաժնետեր և լիիրավ անդամ՝ Բանկը թողարկում է ArCa Classic, ArCa Junior, ArCa Classic AUTOCARD, ArCa Gold AUTOCARD, ArCa Business AUTOCARD, բանկային վճարային քարտերը, ինչպես նաև սպասարկում ԱրՔա վճարահաշվարկային համակարգի քարտերը:

Բանկը բանակցություններ է վարել MasterCard միջազգային վճարային համակարգի հետ և կատարել է մի շարք նախապատրաստական աշխատանքներ այդ համակարգին անդամակցելու համար:

Հանրային ծառայությունների դիմաց վճարների ընդունում

Հաճախորդներին վճարահաշվարկային ծառայությունների համալիր մատուցման նպատակով Բանկը զարգացնում է հարկերի, տուրքերի, էլեկտրաէներգիայի, հեռախոսավարձի և այլ հանրային ծառայությունների դիմաց ֆիզիկական անձանցից վճարների ընդունման աշխատանքները:

Միջազգային չեկեր

AMERICAN EXPRESS ճանապարհային չեկերի, «MASHREQBANK PSC» բանկի կողմից Բանկի անվամբ թողարկված բանկային չեկերի դուրս գրում և հետգնում:

Բանկի կողմից մատուցվող հիմնական ծառայությունների աճի շարժը (դինամիկան) ներկայացվում է դրանցից ստացված եկամուտների (ոչ տոկոսային) ցուցանիշներով և դրանց մոտակա տարիների կանխատեսումներով Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Հիմնական ծառայություններից եկամուտներ **հազ. ՀՀ դրամ**

Եկամուտներ	2005 թվական	2006 թվական	30.09.07 դրությամբ	2007 թվական կանխատեսում	2008 թվական կանխատեսում	2009 թվական կանխատեսում
Արտարժութային գործառնությունների (զուտ)	194,674	39,082	113,823	140,000	170,000	210,000
Բանկային ոսկու ստանդարտացված ձուլակտորների առուվաճառքից	0	11,459	37,822	54,000	110,000	120,000
Միջնորդավճարներ վճարահաշվարկային ծառայություններից	11,409	27,432	41,245	60,000	94,000	119,000
Երաշխիքներից, հոժարագրերով, ակրեդետիվներով գործառնություններից, հավատարմագրային կառավարման գործառնություններից	5,207	1,004	2,391	6,000	10,000	15,000
Ընդամենը	**211,290**	**78,977**	**195,281**	**260,000**	**384,000**	**464,000**

բ. Բանկի ֆինանսական միջնորդության ծառայությունների հիմնական բնութագրիչները, դրանց շարժը (դինամիկան) և կանխատեսումները ներկայացված է Աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5. Բանկի ֆինանսական միջնորդության ծառայությունների հիմնական բնութագրիչները
հազ. ՀՀ դրամ

	31.12.05 դրությամբ	31.12.06 դրությամբ	30.09.07 դրությամբ	31.12.07 կանխատեսում	31.12.08 կանխատեսում	31.12.09 կանխատեսում
Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ, այդ թվում՝	1,475,993	2,569,814	6,681,818	10,000,000	23,687,000	31,081,000
բիզնես վարկեր	1,461,840	1,967,043	4,490,720	7,019,000	16,627,000	21,817,000
բիզնես վարկերի միջին տոկոսադրույք (գին)	16.31	15.43	14.77	14.7	14.3	14
բնակարանային հիփոթեք	2,199	304,134	851,072	1,255,000	3,020,000	3,964,000
բնակարանային հիփոթեքի միջին տոկոսադրույք (գին)	18.00	14.20	13.02	13	12.8	12.5
ավտովարկավորում	11,954	107,347	240,330	360,000	840,000	1,100,000
ավտովարկավորման միջին տոկոսադրույք (գին)	18.00	17.77	16.23	16.2	16	15.8
սպառողական այլ վարկեր	-	191,290	1,099,696	1,366,000	3,200,000	4,200,000
սպառողական այլ վարկերի միջին տոկոսադրույք (գին)	-	18.34	16.66	16.5	16.3	16
Հաճախորդներից ներգրավված միջոցներ, այդ թվում՝	1,342,970	2,965,370	8,722,591	9,950,000	20,640,000	29,845,000
ֆիզիկական անձանցից	11,342	273,517	1,735,438	2,200,000	5,940,000	10,945,000
իրավաբանական անձանցից	1,331,568	2,691,853	6,987,153	7,750,000	14,700,000	18,900,000

Բանկը կատարում է հաճախորդների վճարահաշվարկային սպասարկում և մատուցում է բանկային ցանկացած ծառայություն, որոնց մասին ցուցանիշները, դրանց շարժը (դինամիկան) և կանխատեսումները ներկայացված է Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Բանկային ծառայությունների և դրանց շարժի (դինամիկա) բնութագրիչներ

	31.12.05 դրությամբ	31.12.06 դրությամբ	30.09.07 դրությամբ	31.12.07 կանխատեսում	31.12.08 կանխատեսում	31.12.09 կանխատեսում
Իրավաբանական անձ հաշվետերերի թիվ, անձ	337	457	673	690	850	1,000
Ֆիզիկական անձ հաշվետերերի թիվ, անձ	147	3,104	7,006	9,000	16,000	23,000
Ընթացիկ հաշիվների քանակը, հատ	6,471	3,661	8,325	10,500	18,500	26,000
Ժամկետային հաշիվների քանակը,	11	82	246	440	800	1,000

հատ						
Իրավաբանական անձանց կողմից արտերկիր ուղարկված գումարներ (SWIFT), մլն. ՀՀ դրամ	14,501.9	32,336.8	41,076.6	55,000	69,000	77,000
Իրավաբանական անձանց անունով արտերկրից ստացված գումարներ (SWIFT), մլն. ՀՀ դրամ	14,468.9	12,983.3	11,710.3	24,000	30,000	35,000
Ֆիզիկական անձանց կողմից արտերկիր ուղարկված գումարներ (SWIFT, Western Union, Անելիք, Migom և այլ), մլն. ՀՀ դրամ	4.8	136.9	1,883.6	2,400.0	4,000.0	5,000.0
Ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված գումարներ արտասահմանից (SWIFT, Western Union, Անելիք, Migom և այլ), մլն. ՀՀ դրամ	17.8	475.9	4,297.9	6,000.0	9,000.0	12,000.0
Իրավաբանական անձ հաշվետերերի հաշիվների մուտքերը, մլրդ. ՀՀ դրամ	57,004.5	80,026.7	195,517.0	270,000.0	300,000.0	330,000.0
Անհատ ձեռնարկատեր հաշվետերերի հաշիվների մուտքերը, մլրդ. ՀՀ դրամ	950.7	960.7	865.1	1,200.0	1,350.0	1,600.0

գ. Բանկը ծառայություններ է մատուցում գլխավորապես ներքին շուկայում:

Բանկի մասնաբաժինը ՀՀ բանկային համակարգում և զարգացման կանխատեսումները ներկայացված են Աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7. Բանկի մասնաբաժինը ՀՀ բանկային համակարգում **հազ. ՀՀ դրամ**

		Ակտիվներ	Վարկային ներդրումներ	Պարտավորություններ	Ընդհանուր կապիտալ	Հաշվեկշռային շահույթ	Բաժնետիրական կապիտալի տարեկան եկամտաբերություն	Ակտիվների տարեկան եկամտաբերություն
31.12.2005 դրությամբ	Համակարգ	440,674,145	208,144,447	345,913,389	94,760,756	11,977,985	12.87	2.70
	ԲԱՆԿ	3,979,405	1,475,993	1,547,073	2,432,332	(2,405,565)	-41.34	-25.78
	%	0.9	0.7	0.4	2.6	x	x	x

31.12.2006 դրությամբ	Համակարգ	524,634,072	259,290,647	404,362,097	120,271,975	21,040,758	17.1	3.6
	ԲԸՆԿ	8,545,594	2,569,814	4,651,774	3,893,820	981,793	33.0	18.8
	%	1.6	1.0	1.2	3.2	4.7	x	x
30.09.2007 դրությամբ	Համակարգ	664,003,501	346,866,941	515,626,676	148,376,825	16,741,692	14.46	3.3
	ԲԸՆԿ	16,414,645	6,681,818	11,896,022	4,518,623.0	224,803	8.7	2.4
	%	2.5	1.9	2.3	3.0	1.3	x	x
31.12.2007 դրությամբ	Համակարգ	740,000,000	394,000,000	580,000,000	160,000,000	30,000,000	15.0	3.5
	ԲԸՆԿ	18,000,000	10,000,000	12,950,000	5,050,000	384,000	10.5	2.5
	%	2.4	2.5	2.2	3.2	1.3	x	x
31.12.2008 դրությամբ	Համակարգ	915,000,000	475,000,000	743,000,000	172,000,000	36,000,000	18.0	3.4
	ԲԸՆԿ	35,000,000	23,687,000	28,400,000	6,600,000	840,000	15.0	2.5
	%	3.3	5.0	3.8	3.8	2.3	x	x
31.12.2009 դրությամբ	Համակարգ	1,115,000,000	595,000,000	935,000,000	180,000,000	42,000,000	19.0	3.4
	ԲԸՆԿ	45,000,000.0	31,081,000	37,960,000	7,040,000	1,152,000	17.9	2.6
	%	4.1	5.2	4.0	3.9	2.7	x	x

Անհրաժեշտ է նշել, որ Բանկի 31.12.2006 թ.-ի եկամտաբերության ցուցանիշների բարձր մակարդակը Բանկի բնականոն գործունեությանը հատկանշական չէ, քանի որ, ձևավորվել է անհուսալի ակտիվների վերադարձի հետևանքով: Եթե անտեսում ենք այս հանգամանքը, ապա Բանկի 2006 թվականի եկամտաբերությունն ըստ բաժնետիրական կապիտալի կազմում է 3.5%, իսկ ըստ ակտիվների՝ 2%:

ՀՀ բանկային համակարգի ընդհանուր ակտիվները 30.12.2005-30.09.2007 թթ.-ի ընթացքում աճել են 1.5 անգամ, ընդ որում, Բանկի ակտիվների աճը կազմել է 3.8 անգամ: Նույն ժամանակահատվածում ՀՀ բանկային համակարգի վարկային ներդումները աճել են 1.7 անգամ, Բանկինը՝ 4.5 անգամ, համապատասխանաբար պարտավորությունները՝ 1.5 անգամ և 7.7 անգամ, ընդհանուր կապիտալը՝ 1.6 և 1.9 անգամ:

Բանկն իր ծառայությունների մատուցումը կատարում է իր գլխավոր գրասենյակի, մասնաճյուղերի, բանկոմատների միջոցով, մասնակցում է ՀՀ պետական և ՀՀ կենտրոնական բանկի պարտատոմսերի առաջնային տեղաբաշխումներին և արտարժույթի բորսայական գործարքներին:

Բանկի խոշոր վարկառուների մասին տեղեկատվությունը համարվել է գաղտնի, չի լրացվել Ազդագրում և առանձին տեղեկանքով ներկայացվել է ՀՀ կենտրոնական բանկ:

Բանկի խոշոր վարկառուներից ստացված եկամուտների չափը և դրանց տեսակարար կշիռը Բանկի եկամուտներում ներկայացված է աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8. Բանկի խոշոր վարկառուներից ստացված եկամուտներ **հազ. ՀՀ դրամ**

	31.12.05 դրությամբ	**31.12.06 դրությամբ**	**30.09.07 դրությամբ**
Եկամուտներ, ընդամենը, այդ թվում՝	2,943,313	1,352,557	939,028
խոշոր վարկառուներից ստացված եկամուտներ	44,398	278,237	169,964
տոկոսներով ընդհանուրի մեջ	1.5	20.6	18.1

դ. Հիմնական մրցակիցներ

Հայաստանում բանկային համակարգի զարգացման ներկա փուլում մրցակցությունը ընթանում է հետևյալ շուկայական հատվածներով՝

- սպառողական վարկավորում
- բնակարանային հիփոթեք
- փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորում
- ֆիզիկական անձանց միջազգային դրամական փոխանցումներ
- ավանդների սպասարկում
- հանրային ծառայությունների դիմաց վճարների սպասարկում

Բիզնես վարկավորման և վճարահաշվարկային սպասարկման շուկայական հատվածը հիմնականում բաշխված է բանկերի միջև, սակայն, բիզնեսի ծավալների շարունակական աճը պահանջում է դրան համապատասխան բարձր կապիտալացում ունեցող բանկերի առկայություն: Դրան է նպատակամղված նաև Բանկի կողմից բաժնետոմսերի սույն լրացուցիչ թողարկումը:

Բանկը, կապիտալացման և ավանդային բազայի կայացման ներկա փուլում, զարգացնելով մանրածախ բանկային ծառայությունների տեսականին, մոտեցնելով ծառայությունների մատուցումը դրանց սպառողներին, առաջարկելով բարձրորակ սպասարկում և մրցունակ գներ, մրցակցում է Հայաստանում գործող բանկերի երկրորդ տասնյակի շարքում առաջատար դիրք գրավելու համար:

Ելնելով նրանից և հաշվի առնելով այն, որ մոտակա տարիներին ՀՀ բանկային համակարգ մուտք են գործելու խոշոր միջազգային բանկեր, Բանկից մեծ ճիգեր են պահանջվելու ավանդային բազայի ամրապնդման և հաճախորդների ուժեղ ու կայուն կազմի ձևավորման գործում: Այս առումով, Բանկը կարևորում է ծառայությունների մատուցման բարձր որակի, սպառողների համար շահավետ պայմանների ապահովումը, ինչպես նաև գնային մրցակցության տարրերի կիրառումը և միջազգային ֆինանսական հաստատությունների հետ համագործակցությունը: Բանկը մասնակցում է ՀՀ կենտրոնական բանկի և Գերմանական KFW բանկի հայտարարած հիփոթեքի շուկայի զարգացման ծրագրին, Շվեյցարական Իզմիրլյան հիմնադրամի հետ իրականացնում է համաֆինանսավորման ծրագիր: Բանկը մտադիր է, զարգացնելով վարկավորման մեխանիզմները, առևտրային հիմունքների վրա մասնակցել այլ միջազգային ֆինանսական հաստատությունների ծրագրերին:

ե. Բանկի պարտավորությունների կազմը ներկայացված է Աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9. Բանկի պարտավորությունների կազմը **հազ. ՀՀ դրամ**

	31.12.05 դրությամբ	**31.12.06 դրությամբ**	**30.09.07 դրությամբ**
Պարտավորություններ, ընդամենը, այդ թվում՝	1,547,073	4,651,774	11,896,022
պարտավորությունների 10 տոկոսից ավելին կազմող պարտավորություններ	1,471,888	4,478,548	11,106,703
Տոկոսներով ընդհանուրի մեջ	95.1	96.3	93.4

Բանկի մատակարարների մասին տեղեկատվությունը համարվել է գաղտնի, չի լրացվել Ազդագրում և առանձին տեղեկանքով ներկայացվել է միայն ՀՀ կենտրոնական բանկ:

զ. Վերջին 3 տարվա ընթացքում նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկը գերազանցող Բանկի կողմից կնքված պայմանագրերի պայմանները ներկայացված են աղյուսակ 10-ում, բացառությամբ այն պայմանագրերի, որոնց առարկան ու պայմանները համարվում են բանկային գաղտնիք ու Ազդագրում չեն լրացվել և առանձին տեղեկանքով ներկայացվել են ՀՀ կենտրոնական բանկ:

Աղյուսակ 10. Բանկի կողմից կնքված 10 մլն. ՀՀ դրամը գերազանցող պայմանագրերի պայմանները

	Պայմանագրի կողմի անվանումը (անուն, ազգանուն)	Պայմանագրի առարկան	Կատարման ամսաթիվը	Գինը, (հազ. ՀՀ դրամ)	Գործողության ժամկետը (ամիս)
1	ՄԹԴ ՍՊԸ	Բանկոմատների առք	10/07/06	74,451	4,7
2	ՄԹԴ ՍՊԸ	Բանկոմատների առք	03/04/07	74,451	4,7
3	«Վալլեքս Այթի» ՍՊԸ	Համակարգչ. և գրասենյ. տեխնիկայի ձեռք բերում	12/12/06	21,812	2.0
4	«ՖրիԳեյթ» ՍՊԸ	Համակարգչ. և գրասենյ. տեխնիկայի ձեռք բերում	27/07/07	12 473	0.7
5	«Սամշիննախագիծ» ՍՊԸ	Շինարար. վերանորոգ. աշխատանքների կատարում	21/06/07	21,147	2.0
6	Լիպարիտ Համբարձումյան, Մարիա Նիկոլաևա	Անշարժ գույքի ձեռք բերում	21/05/07	55,093	-
7	Գայանե Թևանյան	Անշարժ գույքի ձեռք բերում	06/06/07	13,915	-
8	Հայկական ծրագրեր ՍՊԸ	«ՀՕ Բանկ» Համակարգի ներդրում	15/08/05	13,500	անժամկետ

է. 20.09.1991թ.-ին ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից Բանկին տրվել է Բանկային գործունեության լիցենզիա թիվ 4՝ համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հայկական դրամով և արտարժույթով բանկային գործունեություն և ֆինանսական գործառնություններ իրականացնելու համար: Լիցենզիան տրված է անժամկետ:

ը. Նախորդ տարիների ընթացքում՝ 2004-ից Բանկը զարգացման աշխատանքներ է տարել բանկային ու տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման, տեխնիկական վերազինման ուղղությամբ, որի համար ծախսել է 155,950.6 հազ. ՀՀ դրամ: Ներդրումների ուղղություններն ըստ տարիների ներկայացված են Աղյուսակ 12-ում:

Ձեռնարկված գործողությունների արդյունքում բազմապատկվել են բանկային ծառայությունների ավանդական մեթոդներով մատուցման ծավալները, ինչպես նաև զարգացվել է հեռահար հաղորդակցման միջոցներով դրանց մատուցումը:

3) Բանկի հիմնական և ոչ հիմնական գործունեության մեջ ներգրավված գույքը.

Բանկի հիմնական և ոչ հիմնական գործունեության մեջ ներգրավված գույքի մասին 2007 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ տվյալները ներկայացված են Աղյուսակ 11-ում:

Աղյուսակ 11. Բանկի գույքի կազմը 30.09.2007 թ.-ի դրությամբ հազ. ՀՀ դրամ

Գույքի անվանումը	Գույքի օգտագործման իրավունքը	Գույքի օգտագործման ժամկետը	Գույքի օգտագործման դիմաց վարձավճարը, ամսական	Հաշվեկշռային արժեքը
1. Շենքեր				
1.1 Բանկի հիմնական միջոց (1001.44 մ2), ք. Երևան, Ե. Կողբացի 30	Սեփականություն	-	-	474,102
1.2. Բանկի գլխավոր գրասենյակ, ք. Երևան, Պուշկինի 19 (1,500 մ^2),	Անհատույց օգտագործում		-	1,942
1.3. Նաիրիտ մասնաճյուղի տարածք (124.2 մ^2), ք. Երևան, Բագրատունյաց 70	Վարձակալություն	05.04.06թ.-05.04.11թ.	**89.8**	-
1.4. Ստեփանակերտ մասնաճյուղի տարածք (119.4 մ^2), ք. Ստեփանակերտ, Մ. Մաշտոցի փ., 1Ա	Վարձակալություն	16.06.06թ.-16.06.11թ.	անվճար	3,762
1.5. Սեբաստիա մասնաճյուղի տարածք (134.66 մ^2), ք. Երևան, Սեբաստիա 141/1 շենքի 41ա տարածք	Սեփականություն	-	**-**	38,381
1.6. Մաշտոց մասնաճյուղի տարածք (71.2 մ^2), ք. Երևան, Մ. Մաշտոցի պող. 25 թիվ 1 և թիվ 2 տարածք	Վարձակալություն	08.12.06թ.-08.12.11թ.	**80**	1,738
1.7. Խորենացի մասնաճյուղի տարածք (16.1 մ^2), ք. Երևան, Կենտրոն համայնք, Խորենացու 24/7 և 24/9	Վարձակալություն	01.07.07թ.-01.07.17թ.	01.11.07թ.-01.02.08թ.՝ **350** 01.02.08թ.-ից՝ **500**	113
1.8. Գյումրի մասնաճյուղի տարածք (262.88 մ^2), ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի պողոտա 1/5	Վարձակալություն	20.06.07թ.-01.07.13թ.	01.07.07թ.-01.10.07թ.՝ **500** 01.10.07թ.-01.07.08թ.՝ **550** 01.07.08թ.-01.07.09թ.՝ **600** 01.07.09թ.-01.07.10թ.՝ **650** 01.07.10թ.-01.07.11թ.՝ **700** 01.07.11թ.-	614

			01.07.12թ.՝ **750** 01.07.12թ.-01.10.13թ.՝ **800**	
1.9. Աբովյան մասնաճյուղի տարածք (113.1 մ^2), ք. Աբովյան, Հանրապետության պողոտա 1/21	Սեփականություն	-	-	69,431
1.10. Դավթաշեն մասնաճյուղի տարածք (165.97 մ^2), ք. Երևան Դավթաշեն 2-րդ թաղ., 44	Վարձակալություն	01.06.07թ.-03.06.13թ.	01.07.07թ.-31.12.07թ.՝ **259.2** 01.01.08թ.-03.06.13թ.՝ **345.6**	7,500
1.11. Ծաղկաձոր մասնաճյուղի տարածք (50.71 մ^2), ք. Ծաղկաձոր հասարակական նշանակության տարածք	Վարձակալություն	01.06.07թ.-01.06.13թ.	01.07.07թ.-31.12.07թ.՝ 220 01.01.08թ.-ից՝ 330	4,173
1.12 ԱՐԱՐԱՏՅԱՆ մասնաճյուղ (23 մ^2), ք. Երևան, Ծովակալ Իսակովի 10	Վարձակալություն	3 տարի	**20**	-
1.13 ԶՎԱՐԹՆՈՑ մասնաճյուղ (9 մ^2), ք.Երևան 42, «Զվարթնոց» օդանավակայանի բեռնահամալիրի տարածք	Վարձակալություն	1 տարի	**480**	-
2. Համակարգիչներ և բանկային սարքավորում	Սեփականություն			56,308
3. Կապի սարքավորում	Սեփականություն			106,576
4. Համակարգչային ծրագրեր	Սեփականություն			18,879
4.1. ԱՐՔԱ համակարգի անդամակցություն	Սեփականություն			27,500
5. Տրանսպորտային միջոցներ	Սեփականություն			22,110
6. Գրասենյակային գույք	Սեփականություն			43,564
7.Պահպանության և ահազանգման սարքավորումներ	Սեփականություն			8,608
8. Այլ գույք	Սեփականություն			5,152
9. Ընդամենը	Սեփականություն			890,453
Բանկի գույքի արժեքը / ընդհանուր ակտիվներ				**5.4%**

4) Ներդրումների վերաբերյալ տեղեկություններ.

ա. Նախորդող վերջին 3 տարիների ընթացքում Բանկի կողմից կատարված ներդրումները ներկայացված են աղյուսակ 12-ում:

Աղյուսակ 12. Ներդրումների նկարագրությունը **հազ. ՀՀ դրամ**

	2004 թվական	2005 թվական	2006 թվական	30.09.07 դրությամբ
1. Համակարգչային ծրագրային ապահովում	3,301.3	13,757.2	-	1,350.0
2. Համակարգչային տեխնիկա	2,721.2	14,745.0	24,186.2	42,448.8
3. Գրասենյակային գույք	-	4,427.4	7,030.8	38,810.8
4. Կապի սարքավորումներ	-	213.8	1,730.3	812.1
5. Բանկոմատներ և POS-տերմինալներ	-	-	54,169.7	61,757.4
6. Բանկի և մասնաճյուղերի տարածքների կապիտալ նորոգում	-	-	4,628.0	11,771.5
7. «ԱրՔա» վճարային համակարգի բաժնետոմսեր	-	-	33,000	-
8. Մասնաճյուղերի շենքեր և տարածքներ	-	-	-	107,972.6
Ընդամենը	**6,022.5**	**33,143.4**	**124,745.0**	**264,923.2**

բ. Ընթացքի մեջ է գտնվում «Մաստեր Քարտ» վճարային համակարգին մասնակցության, Դավթաշեն և էջմիածին մասնաճյուղերի գործարկման ներդրումները: Բանկը պլանավորել է ՀՀ-ում ստեղծել ևս 20 մասնաճյուղեր, զարգացնել ծառայությունների հեռահար մատուցման տեխնոլոգիաները, որոնց ուղղությամբ, ըստ տարիների, կատարելու է ներդրումներ.

2008 թվականին՝ 200 մլն. ՀՀ դրամ
2009 թվականին՝ 215 մլն. ՀՀ դրամ
2010 թվականին՝ 164 մլն. ՀՀ դրամ:

5) Այն անձանց անվանացանկը, որտեղ Բանկը, ներառյալ նրա դուստր ընկերությունները, բաժնային արժեթղթերի նշանակալից կամ խոշոր սեփականատեր են.

Բանկն այլ անձանց բաժնային արժեթղթերի նշանակալից կամ խոշոր սեփականատեր չի հանդիսանում:

Բանկը դուստր ընկերություններ չունի:

6) Բանկի աշխատողները, հատկացումներ.

ա. Վերջին երեք տարիների յուրաքանչյուր տարվա վերջի դրությամբ Բանկի աշխատողների թվաքանակը կազմել է.

31.12.04թ. դրությամբ՝ 34 աշխատող
31.12.05թ. դրությամբ՝ 50 աշխատող
31.12.06թ. դրությամբ՝ 82 աշխատող:

բ. Բանկի աշխատողները սեփականության իրավունքով Բանկի բաժնետոմսեր չունեն:

գ. Բանկի աշխատողների մասնակցությունը Բանկի կապիտալում նախատեսված է Բանկի բաժնետոմսերի բաց բաժանորդագրության ընթացքում ձեռքբերման միջոցով:

Բանկը դեռևս չի նախատեսում ծրագրեր, որոնց միջոցով աշխատողներին հնարավորություն կընձեռնվի արտոնյալ պայմաններով մասնակցել Բանկի կապիտալում:

դ. 2004-2006 թվականների ընթացքում Բանկի որևէ աշխատողի տարեկան վարձատրությունը, ներառյալ՝ պարգևատրումները, ինչպես նաև այլ վճարումները, չի գերազանցել նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկը:

ե. Բանկում աշխատողների համար շահույթի բաշխման համաձայնություններ չեն սահմանված:

Ֆինանսական տարվա ընթացքում և դրա արդյունքներով շահույթի բաշխման և համաձայնությունների վերաբերյալ կառուցակարգերը (մեխանիզմները) մշակման ընթացքում են:

Բանկի գործունեության տարեկան արդյունքներով բոլոր աշխատողներին, ելնելով նրանց մասնակցության աստիճանից, վճարվել է պարգևատրում.

2004 թվական՝ 2,225 հազ. ՀՀ դրամ

2005 թվական՝ 5,347.5 հազ. ՀՀ դրամ

2006 թվական՝ 10,726.5 հազ. ՀՀ դրամ:

7) Հարկային արտոնությունները.

Բանկի համար հատուկ հարկային արտոնություններ սահմանված չեն, Բանկը գործում է ընդհանուր հարկային օրենսդրական դաշտում:

8) Դատական և իրավական ընթացակարգը.

Նախորդող 12 ամսվա ընթացքում Բանկի նկատմամբ դատարանի և պետական մարմինների կողմից պատասխանատվության միջոցներ (վարչական, քաղաքացիա-իրավական) չեն կիրառվել:

9) Փոխկապակցված գործարքների վերաբերյալ տեղեկություններ.

Վերջին տարվա ընթացքում Բանկի հետ փոխկապակցված անձանց հետ Բանկի կողմից կնքված պայմանագրերի պայմանները ներկայացված են աղյուսակ 13-ում, բացառությամբ այն պայմանագրերի, որոնց առարկան ու պայմանները համարվում են բանկային գաղտնիք ու Ազդագրում չեն լրացվել և առանձին տեղեկանքով ներկայացվել են ՀՀ կենտրոնական բանկ:

Աղյուսակ 13. Բանկի հետ փոխկապակցված անձանց Բանկի կողմից կնքված պայմանագրերի պայմանները

Ժամանակահատված՝ 01.01.06-31.12.06						
	Պայմանագրի կողմի անվանումը (անուն, ազգանուն)	**Պայմանագրի առարկան**	**Կատարման ամսաթիվը**	**Գինը, (հազ. ՀՀ դրամ)**	**Գործարքի արժեքը, (հազ. ՀՀ դրամ)**	**Գործարքի արժեքի մասնաբաժինը Բանկի եկամուտների (ծախսերի) մեջ, %-ներով**
1	Հովհաննիսյան Արմեն, «ՖԼԵՇ» ՍՊԸ – ի գլխավոր հաշվապահ	Վարկի տրամադրում	09/08/06	20,000	1,722	0.48
2	Հակոբյան Արթուր, Բանկի գործադիր տնօրենի տեղակալ	Օվերդրաֆտ	17/11/06	2,267.7	236	0.066
3	«ՖԼԵՇ» ՍՊԸ	Երաշխավորության	23/02/06	80,000	25	0.007

		տրամադրում				
4	«ՆԱԿՕՅԼ» ՍՊԸ	Երաշխավորության տրամադրում	07/03/06	9,000	25	0.007
5	«ՆԱԿՕՅԼ» ՍՊԸ	Երաշխավորության տրամադրում	12/04/06	4,400	25	0.007
6	«ՖԼԵՇ» ՍՊԸ	Երաշխավորության տրամադրում	05/09/06	2,940	25	0.007
7	«ՖԼԵՇ» ՍՊԸ	Երաշխավորության տրամադրում	30/06/06	2,772	25	0.007
Ժամանակահատված՝ 01.01.07-30.09.07						
8	Էլչյան Մուշեղ, «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի փոխտնօրեն	Վարկի տրամադրում	15/08/07	3,000	415	0.166
	Հովհաննիսյան Արմեն, «ՖԼԵՇ» ՍՊԸ – ի գլխավոր հաշվապահ	Վարկի տրամադրում	10/08/07	4,500	122	0.05
	«ՖԼԵՇ» ՍՊԸ	Երաշխավորության տրամադրում	14/09/07	9,750	25	0.01
9	«ՖԼԵՇ» ՍՊԸ	Երաշխավորության տրամադրում	06/09/07	4,050	25	0.01
8	«ՖԼԵՇ» ՍՊԸ	Երաշխավորության տրամադրում	17/08/07	10,000	25	0.01
9	«ՖԼԵՇ» ՍՊԸ	Երաշխավորության տրամադրում	17/08/07	11,000	25	0.01
10	«ՖԼԵՇ» ՍՊԸ	Երաշխավորության տրամադրում	31/01/07	12,000	25	0.01

Գործարքներ չեն կանխատեսվում, կատարվում է միայն ներկայացված հայտի հիման վրա:

10) Բանկի նախատեսվող գործունեությունը և հեռանկարները.

ա. Բանկի ապագա գործունեությունը նպատակամղված է լինելու Բանկի կայացմանը որպես «Գործարարական գործընկեր, բազմաբնույթ ծառայություններ մատուցող բանկ»:

Բանկը շարունակելու է զարգացնել Բանկի կապիտալի, այդ թվում՝ մարդկային, հիմքերը, ամրապնդելու է ֆինանսական դրությունը, ներ է դնելու կազմակերպական և տեխնոլոգիական միջոցներ, պաշտպանելու է հաճախորդների, ներդրողների և բաժնետերերի իրավունքներն ու շահերը, վարկավորելու և ներդրումներ է կատարելու տնտեսության տարբեր ոլորտներում:

Մոտակա 3 տարիների ընթացքում Բանկը նախատեսում է ապահովել՝

- Բանկի ակտիվների, վարկային պորտֆելի և պարտավորությունների կտրուկ աճ.
- կապիտալի զարգացումը. այդ թվում՝ կանոնադրական կապիտալի աճ.
- իրավաբանական ու ֆիզիկական անձանց բանկային սպասարկման զարգացում.
- միավորական (կորպորատիվ) կառավարման սկզբունքների զարգացում.
- տեխնիկական ծրագրային և տեխնոլոգիական վերազինումը՝ էլեկտրոնային բանկային ծառայությունների, վճարային քարտերով գործառնությունների զարգացում և թվով 20 մասնաճյուղերի ստեղծում.
- Ֆինանսավարկային կազմակերպություններից, իրավաբանական ու ֆիզիկական անձանց ավանդների ընդունման ակտիվացում.

▪ Բանկի ռիսկերի կառավարման մակարդակի բարձրացում (Բազել 2 համաձայնագրի շրջանակներում), ՀՀ օրենսդրության և ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվային պահանջների պահպանում:

Մոտակա տարիներին Բանկի գործունեության ցուցանիշները ներկայացված են «Բանկի մատուցված ծառայությունների հիմնական բնութագրիչները» Աղյուսակ 5-ում:

բ. Բանկի հիմնական եկամուտների աղբյուրների կանխատեսումները ներկայացված են ստորև Աղյուսակ 14-ում:

Աղյուսակ 14. Բանկի եկամուտների կանխատեսումները **հազ. ՀՀ դրամ**

	31.12.06 դրությամբ	**31.12.07 դրությամբ**	**31.12.08 դրությամբ**	**31.12.09 դրությամբ**
1. Տոկոսային եկամուտներ, այդ թվում՝	379,175	1,117,000	1,900,000	2,670,000
վարկերից	346,276	965,000	1,700,000	2,400,000
2. Մատուցված այլ ծառայություններից (արտարժույթի առուվաճառք, միջնորդավճարներ, այլն)	973,382	300,000	460,000	545,000
Ընդամենը	**1,352,557**	**1,417,000**	**2,360,000**	**3,215,000**

գ. Մոտակա տարիներին Բանկի գործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսները Բանկը նախատեսում է ձևավորել Բանկի սեփական կապիտալի և ներգրավված միջոցների դինամիկ աճով, որոնց կանխատեսումները ներկայացված են Աղյուսակ 15-ում:

Աղյուսակ 15. Բանկի ռեսուրսների կազմի կանխատեսումները **հազ. ՀՀ դրամ**

	31.12.06 դրությամբ	**31.12.07 դրությամբ**	**31.12.08 դրությամբ**	**31.12.09 դրությամբ**
1. Սեփական կապիտալ, այդ թվում՝	3,893,820	5,050,000	6,600,000	7,040,000
կանոնադրական կապիտալ	3,240,000	3,990,000	4,890,000	5,380,000
2. Պարտավորություններ, այդ թվում՝	4,651,774	12,950,000	28,400,000	37,960,000
ներգրավված միջոցներ	2,965,370	12,600,000	28,110,000	37,669,000
Ընդամենը	**8,545,594**	**18,000,000**	**35,000,000**	**45,000,000**

Բանկի գործունեության արդյունքների ցուցանիշների կանխատեսումները ներկայացված են Աղյուսակ 16-ում:

Աղյուսակ 16. Բանկի գործունեության արդյունքների կանխատեսումները **հազ. ՀՀ դրամ**

	31.12.06 դրությամբ	**31.12.07 դրությամբ**	**31.12.08 դրությամբ**	**31.12.09 դրությամբ**
1. Եկամուտներ, այդ թվում՝	1,352,557	1,417,000	2,360,000	3,215,000
տոկոսային եկամուտներ	379,175	1,117,000	1,900,000	2,670,000
2. Ծախսեր, այդ թվում՝	358,835	943,000	1,350,000	1,843,000
տոկոսային ծախսեր	34,205	530,000	645,000	990,000
3. Զուտ մասհանում	11,929	90,000	170,000	220,000
4. Շահույթ	981,793	384,000	840,000	1,152,000
6. Շահութահարկ	(29,695)	76,800	168,000	230,400
7. Զուտ շահույթ	1,011,488	307,200	672,000	921,600

դ. Մոտակա տարիներին Բանկը մտադիր է պահպանել ավանդական մեթոդներով բանկային ծառայությունների մատուցման նվաճողական գործելակերպը, այդ նպատակով ընդարձակելու է իր ներկայությունը՝ տարածաշրջանում ստեղծելով մոտ 20 մասնաճյուղեր, տեղակայելով և գործարկելով մոտ 40 բանկոմատներ և POS-տերմինալներ, դրանով իսկ ծառայությունների մատուցումը մոտեցնելով սպառողներին: Միևնույն ժամանակ, իրականացնելու է բանկային ծառայությունների հեռահար մատուցման մեթոդների ընդարձակումը: Բանկը շարունակելու է ուսումնասիրել սպառողների բանկային ծառայությունների պահանջմունքները և դրանից ելնելով առաջարկելու է համապատասխան որակի և արժեքի ծառայություններ:

ե. Բանկն առաջնակարգ կարևորում է տեղեկատվական համակարգի ծրագրային ապահովման զարգացման աշխատանքները: Բանկը զարգացման կարևորագույն նախապայման է տեսնում բանկային և կառավարչական տեղեկատվական տեխնոլոգիաների միմյանց ներդաշնակությունը, ինչպես նաև համարժեք ու արդիական տեխնիկական ապահովումը:

Ամփոփելով Բանկի հեռանկարային գործունեության կանխատեսումների համառոտ նկարագիրը, ներդրողներին տեղեկացնում ենք, որ Բանկը մշակել և իրականացնում է իր գործունեության ռազմավարությունները և քաղաքականությունները, որոնք չեն սահմանափակված Ազդագրում ներկայացված տեղեկատվությունով և ցուցանիշներով:

ԳԼՈՒԽ 3. ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1) ֆինանսական հաշվետվություններ.

Բանկի 2004-2006թ.թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները և 2007թ. 3 եռամսյակների միջանկյալ հաշվետվությունները ներկայացված են Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերի կազմում:

Ցանկության դեպքում ներդրողները Բանկի ֆինանսական հաշվետվությունները կարող են ձեռք բերել նաև Բանկի գլխավոր գրասենյակից և մասնաճյուղերից, ինչպես նաև ծանոթանալ Ինտերնետի Բանկի տնային էջում:

2) Ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների փոփոխությունների վերաբերյալ տեղեկություններ.

Բանկը, 2001 թվականից մինչև 2004 թվականը գործել է գործառույթների նեղ շրջանակներում, ՀՀ կենտրոնական բանկի կողմից նշանակված ադմինիստրացիայի կառավարման ներքո, որը նշանակվել էր 2001 թվականին, Բանկի անվճարունակության հիմքով: Այդ իսկ պատճառով 2004 թվականի ցուցանիշները սույն և հաջորդ կետերում ներկայացված չեն, քանի որ դրանք համադրելի չեն Բանկի բնականոն գործունեությունը նկարագրելու համար:

Ստորև Աղյուսակ 17-ում ներկայացված են Բանկի գործունեության հիմնական արդյունքների վերաբերյալ Ազդագրի ներկայացմանը նախորդող վերջին երկու տարիների վերաբերյալ տեղեկությունները:

Աղյուսակ 17. Բանկի ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների ցուցանիշներ

հազ. ՀՀ դրամ

	31.12.05 դրությամբ	31.12.06 դրությամբ	Աճ, %	30.09.07 դրությամբ	Աճ, %
Ակտիվներ, այդ թվում՝	3,979,405	8,545,594	214.7	16,414,645	192.1
հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություն	1,475,993	2,569,814	174.1	6,681,818	260.0
Պարտավորություններ, այդ թվում՝	1,547,073	4,651,774	300.7	11,896,022	255.7

հաճախորդներից ներգրավված միջոցներ	1,342,870	2,965,370	220.8	8,722,591	294.1
Սեփական կապիտալ, այդ թվում՝	2,432,332	3,893,820	160.1	4,518,623	116.0
կանոնադրական կապիտալ (փաստացի վճարված)	2,790,000	3,240,000	116.1	3,640,000	112.3
Զուտ շահույթ (վնաս)	(2,405,565)	1,011,488	x	224,803	x
Ակտիվների տարեկան եկամտաբերություն (%)	x	18.8	x	2.4	x

Աղյուսակ 17-ի ցուցանիշները համառոտ ամփոփելով, կարելի է փաստել, որ Ազդագրի ներկայացմանը նախորդող երկու տարիներին, ներառյալ ընթացիկ տարվա 9 ամիսների Բանկի գործունեության հիմնական ցուցանիշները, ունեցել են կտրուկ աճ: 2006 թվականի զուտ շահույթի ցուցանիշը հատկանշական չէ Բանկի բնականոն գործունեությանը, որովհետև ներառում է անհուսալի ակտիվների վերադարձի հետևանքով առաջացած (877,335 հազ. ՀՀ դրամ) շահույթը: Բանկի բնականոն գործունեությունից 2006 թվականի զուտ շահույթը կազմել է 134,153 հազ. դրամ, իսկ ակտիվների եկամտաբերությունը՝ 2.4%: Բանկը մտադիր է պահպանել վերջին տարիների ձեռքբերած նվաճողական գործելակերպը նաև հետագայում:

3) **Կապիտալ ռեսուրսները**.

ա. Բանկի ռեսուրսների կառուցվածքը ներկայացված է աղյուսակ 18-ում:

Աղյուսակ 18. Բանկի ռեսուրսները **հազ. ՀՀ դրամ**

	31.12.2005 դրությամբ	Տես. կշիռ %	31.12.2006 դրությամբ	Տես. կշիռ %	30.09.2007 դրությամբ	Տես. կշիռ %	Աճ (%), 31.12.2005 նկատմամբ
Ռեսուրսներ, ընդամենը, այդ թվում՝	3,979,405	100.0	8,545,594	100.0	16,414,645	100.0	412.5
Սեփական կապիտալ	2,432,332	61.1	3,893,820	45.6	4,518,623	27.5	185.8
Պարտավո-ություններ, որից՝	1,547,073	38.9	4,651,774	54.4	11,896,022	72.5	768.9
հաճախորդ-ներից ներգրավ-ված միջոցներ	1,342,870	33.7	2,965,370	34.7	8,722,591	53.2	649.5
թողարկած պարտատոմսեր	x	x	x	x	250,000	1.5	x
Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների սահմանային հարաբերակցությունը (ընդհանուր իրացվելիություն), %							
նորմատիվ	20	x	20	x	20	x	x
փաստացի	41.8	x	40.9	x	50.1	x	x
Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը (ընթացիկ իրացվելիություն), %							
նորմատիվ	80	x	80	x	60	x	x
փաստացի	138.0	x	124.9	x	216.9	x	x

Ֆինանսական միջնորդություն կատարող անձանց, այդ թվում՝ բանկերի, բնականոն գործունեության համար ռեսուրսների գլխավոր աղբյուրներն են հանդիսանում սեփական կապիտալը և ներգրավված միջոցները: Բանկը վարկերի տրամադրման և միջոցների այլ տեղաբաշխումների նպատակով վերջին տարիներին զգալիորեն ամրապնդել է իր ռեսուրսային բազան:

31.12.05թ.-ի նկատմամբ, 30.09.07թ.-ին Բանկի ռեսուրսներն աճել են մոտ 4 անգամ, ընդ որում, աճ է արձանագրվել ռեսուրսների բոլոր աղբյուրների գծով: Բանկի սեփական կապիտալն աճել է մոտ 1.9 անգամ, պարտավորությունները՝ մոտ 7.7 անգամ, հաճախորդներից ներգրավված միջոցները՝ մոտ 6.5 անգամ:

2007 թվականին Բանկը գործարկել է միջոցների ներգրավման նոր գործիք՝ թողարկել և տեղաբաշխել է 250.0 մլն. ՀՀ դրամի արժեկտրոնային պարտատոմսեր: Բարելավել է նաև ռեսուրսների կառուցվածքը: Եթե 31.12.05թ. դրությամբ Բանկի ռեսուրսների 61.1%-ը կազմել է սեփական կապիտալը, ապա 30.09.07թ.-ին այն կազմել է 27.5%, այսինքն, Բանկը մեծացրել է ներգրաված միջոցների ծավալն ամբողջ ռեսուրսների կազմում, ինչն իր հերթին հնարավորություն է տվել Բանկին կտրուկ մեծացնել հաճախորդներին տրվող վարկերի ծավալները, մեծացնել շահույթը, ապահովել Բանկի ակտիվների աճը:

Բանկի պարտավորությունների կատարման մակարդակը բնորոշող, աղյուսակ 16-ում ներկայացված, ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված ընդհանուր և ընթացիկ իրացվելիության փաստացի ցուցանիշները վկայում են, որ Բանկի պարտավորությունների կատարման հնարավորությունները պահպանվել են բարձր մակարդակի վրա:

բ. Բանկը մոտակա տարիներին պլանավորում է սեփական կապիտալի դինամիկ աճ, որն ապահովելու է ինչպես կանոնադրական կապիտալի, այնպես էլ շահույթի հաշվին:

Բանկի սեփական, այդ թվում՝ կանոնադրական, կապիտալի աճի կանխատեսումները մոտակա տարիներին ներակայացված են «Բանկի ռեսուրսների կազմի կանխատեսումները» Աղյուսակ 15-ում:

Բանկին հայտնի չի սեփական կապիտալի նվազման որևէ միտում:

4) Շահույթի կանխատեսումը և գնահատումը.

Սույն կետում նշված տեղեկությունները ընդամենը կանխատեսումներ են և ներդրումային որոշումներ կայացնելիս չպետք է հիմնվել դրանց վրա:

ա. Մոտակա տարիների գործունեության և շահույթի կանխատեսումներում Բանկը հիմնվել է հետևյալ հիմնարար սկզբունքների վրա.

- Բանկի գործունեությունը նպատակամղել շահույթի, բաժնետիրական կապիտալի և ակտիվների եկամտաբերության աճին
- Բանկի ռեսուրսները տեղաբաշխել բարձր եկամտաբերություն ունեցող ակտիվներում (վարկեր հաճախորդներին)՝ ընդունելի մակարդակի վրա պահելով Բանկի ռիսկերը, պահպանելով բանկերի գործունեությունը կարգավորող, ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված տնտեսական նորմատիվները
- ավելացնել Բանկի եկամտաբեր ծառայությունների տեսականին
- ապահովել Բանկի դինամիկ զարգացման համար անհրաժեշտ մասնաճյուղերի ստեղծում, տեխնիկատեխնոլոգիական, տեղեկատվական համակարգերի արդիական մակարդակի պահպանում
- ապահովել Բանկի զարգացմանը համահունչ անձնակազմի վարձատրության, պատրաստման և վերապատրաստման, ինչպես նաև Բանկի պահպանման ծախսերի իրականացում:

Բանկի շահույթի կանխատեսումները ներկայացված են «Բանկի գործունեության արդյունքների կանխատեսումները» Աղյուսակ 16-ում:

բ. Բանկի կառավարման մարմինները հնարավորություն ունեն ազդելու (կառավարելու) Բանկի գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ հիմնական գործոնների վրա.

- Բանկի ներգրավվող և տեղաբաշխվող միջոցների ծավալները
- Բանկի ռիսկերի ընդունելի մակարդակի պահպանում

- Բանկի տեխնիկատեխնոլոգիական և տեղեկատվական ապահովման ուղղությամբ կատարվող ծախսեր
- մասամբ Բանկի անձնակազմի վարձատրության, պատրաստման և վերապատրաստման, ինչպես նաև Բանկի պահպանման ծախսեր
- նոր բանկային արտադրանքի և ծառայությունների ներդրում:

Բանկի կառավարման մարմինները կարող են արձագանքել, սակայն հնարավորություն չունեն ազդելու Բանկի գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ հիմնական գործոնների վրա.

- բանկային ավանդների ու վարկերի առաջարկի ու պահանջարկի և դրանից բխող տոկոսադրույների փոփոխության վարքագիծ
- արժեզրկման ու փոխարժեքի վարքագիծ
- անհաղթահարելի ուժի ազդեցության գործոններ (արտակարգ դրության հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքների դադարեցումը, բնական աղետները, պատերազմը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Բանկի բնականոն գործունեությունը):

դ. Բանկը կանխատեսել է 2007 թվականի գործունեության արդյունքում ստանալ զուտ շահույթ 307,200 հազ. ՀՀ դրամ (տես աղյուսակ 16-ը), փաստացի 30.09.07թ.–ի դրությամբ (աղյուսակ 17) զուտ շահույթը կազմել է 224,803 հազ. ՀՀ դրամ: Ազդագրի ներկայացման պահին Բանկի ունեցած ցուցանիշները և տեղեկատվությունը հանգեցնում են այն ենթադրությանը, որ 2007թ.-ի գործունեության արդյունքներով զուտ շահույթի կանխատեսումը՝ 307,200 հազ. ՀՀ դրամ, իրատեսական է:

Բանկի վերջին տարիների գործունեության արդյունքների ցուցանիշները համադրելի են, իսկ գնահատումները կատարված են աղյուսակ 17-ն ամփոփող տեքստում:

ԳԼՈՒԽ 4. ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԱՆՁԻՆՔ

1) ընդհանուր տեղեկություններ կառավարման մարմինների վերաբերյալ.

ա. Բանկի կանոնադրությամբ, սահմանված են Բանկի կառավարման հետևյալ մարմինները՝

- Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ժողով)
- Բանկի խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ)
- Բանկի գործադիր մարմինը՝ Բանկի գործադիր տնօրեն վարչության նախագահը (այսուհետ՝ Գործադիր տնօրեն) և Բանկի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն):

Կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը ներկայացված է ստորև.

Բանկի կանոնադրությամբ Բանկի կառավարման մարմիններին վերապահված իրավասությունները

Բանկի Ժողովը

1. Ժողովը Բանկի կառավարման բարձրագույն մարմինն է:
2. Ժողովի բացառիկ իրավասություններն են՝

ա) Բանկի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, Բանկի կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.

բ) Բանկի վերակազմակերպումը.

գ) Բանկի լուծարումը.

դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.

ե) Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան Ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ Ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.

է) Խորհրդի ներկայացմամբ Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

ը) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը: Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.

թ) Ժողովի վարման կարգի հաստատումը.

ժ) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.

ժա) բաժնետոմսերի համախմբումն (կոնսոլիդացիա) ու բաժանումը.

ժբ) Խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը.

ժգ) օրենքով նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.

ժդ) Բանկի կողմից բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը օրենքով և Բանկի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում.

ժե) խոշոր գործարք կնքելու մասին որոշման ընդունումը, որի առարկա է հանդիսանում Բանկի գույքը և որի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 50%-ից ավելին.

ժզ) գործարք և (կամ) փոխկապված գործարքներ կնքելու մասին որոշման ընդունումը, որի նպատակն է Բանկի քվեարկող բաժնետոմսերի կամ քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող այլ արժեթղթերի տեղաբաշխումը, որոնց քանակն ավելի է Բանկի՝ արդեն տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակի 2 տոկոսից, գործարք, որով վճարման ենթակա գումարը կամ գույքի շուկայական արժեքը գերազանցում են Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 2 տոկոսը և որոնցում առկա է շահագրգռվածություն, ինչպես նաև գործարք, որում շահագրգիռ են ճանաչվել Խորհրդի բոլոր անդամները.

ժէ) Բանկի կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.

ժը) օրենքով և Բանկի կանոնադրությամբ սահմանված այլ իրավասություններ:

3. Վերը նշված 2 կետում թվարկված իրավասությունները հանդիսանում են Ժողովի բացառիկ իրավասությունները և չեն կարող փոխանցվել Խորհրդին, ինչպես նաև Բանկի գործադիր մարմնին կամ այլ անձանց:

4. Ժողովի քննարկմանը չեն կարող դրվել օրենքով կամ Բանկի կանոնադրությամբ Ժողովի իրավասությանը չվերապահված հարցեր:

Բանկի Խորհուրդը

Խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ օրենքով և Բանկի կանոնադրությամբ Խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում:

1. Խորհրդի իրավասություններն են՝

ա) Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը.

բ) Ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը.

գ) Բանկի գործադիր մարմնի անդամների նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.

դ) Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատողների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.

ե) Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը.

զ) Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.

է) Բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացումը.

ը) շահութաբաժինների վճարման վերաբերյալ Ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակի կազմումը, որում պետք է ընգրկվեն Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի տարեկան Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ.

թ) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և Ժողովին ներկայացումը.

ժ) Ժողովի հաստատմանը Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը.

ժա) Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը.

ժբ) Բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում, անհրաժեշտության դեպքում՝ բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը.

ժգ) Բանկի կողմից օրենքով և Բանկի կանոնադրությամբ սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը.

ժդ) Բանկի առանձնացված և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների ու կանոնակարգերի հաստատումը, Բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառութային պարտականությունների բաշխումը.

ժե) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը և (կամ) դրանց մասնակցությունը.

ժզ) առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը և (կամ) դրանց մասնակցությունը.

ժէ) ստորև նշված հարցերի ներկայացումը Ժողովին.

1. Բանկի վերակազմակերպումը
2. բաժնետոմսերի համախմբումն (կոնսոլիդացիա) ու բաժանումը
3. Խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը
4. օրենքով նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը
5. Բանկի կողմից բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը օրենքով և Բանկի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում
6. խոշոր գործարք կնքելու մասին որոշման ընդունումը, որի առարկա է հանդիսանում Բանկի գույքը և որի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 50%-ից ավելին
7. գործարք և (կամ) փոխկապված գործարքներ կնքելու մասին որոշման ընդունումը, որի նպատակն է Բանկի քվեարկող բաժնետոմսերի կամ քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող այլ արժեթղթերի տեղաբաշխումը, որոնց քանակն ավելի է Բանկի՝ արդեն տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակի 2 տոկոսից, գործարք, որով վճարման ենթակա գումարը կամ գույքի շուկայական արժեքը գերազանցում են Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 2 տոկոսը և որոնցում առկա է շահագրգռվածություն, ինչպես նաև գործարք, որում շահագրգիռ են ճանաչվել Խորհրդի բոլոր անդամները

8. Բանկի կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով

ժը) Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը.

ժթ) Բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

ի) Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը.

իա) Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների և կարգերի սահմանումը.

իբ) խոշոր գործարք կնքելու մասին որոշման ընդունումը, որի առարկա է հանդիսանում Բանկի գույքը և որի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից 50 տոկոսը.

իգ) շահագրգռվածության առկայության դեպքում գործարքներ կնքելու մասին որոշման ընդունումը.

իդ) Բանկի գույքի շուկայական արժեքի որոշումը: Բանկի պարտապանի պարտավորության վրա տոկոսների և տույժերի հաշվարկի դադարեցման, պարտքերի զեղչման, կամ ներման մասին որոշումների ընդունումը.

իե) Բանկի առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների ցանկի հաստատումը.

իզ) օրենքով և Բանկի կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

2. Վերը նշված հարցերով որոշումների ընդունումը վերապահված է Խորհրդի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Գործադիր մարմնին կամ այլ անձանց:

Գործադիր մարմինը

1 Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Բանկի գործադիր մարմինը՝ Բանկի Վարչությունը և Գործադիր տնօրենը:

Գործադիր տնօրեն, նրա տեղակալ, Վարչության անդամ չի կարող լինել այն անձը, որը չի համապատասխանում ՀՀ կենտրոնական բանկի որակավորման համապատասխանության չափանիշներին և (կամ) որին օրենքով արգելված է լինել բանկի ղեկավար:

2. Բանկի Վարչության կազմը ձևավորվում է Խորհրդի որոշմամբ:

Վարչության կազմում պարտադիր ընդգրկվում են Գործադիր տնօրենը, նրա տեղակալները, գլխավոր հաշվապահը, Բանկի ռազմավարության, մեթոդոլոգիայի և ռիսկերի գնահատման, վարկավորման, իրավաբանական ստորաբաժանումների ղեկավարները, ինչպես նաև, Խորհրդի որոշմամբ, այլ ստորաբաժանումների ղեկավարներ:

3. Բանկի Վարչությունը՝

ա) սահմանում է Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագները, վարկերի, ավանդների և այլ տոկոսադրույքները.

բ) հաստատում է Բանկի աշխատատեղերը, աշխատանքի խթանման և խրախուսման պայմանները.

գ) քննարկում է ստորև 5-րդ կետի ա), զ), թ), ժգ), ժդ) ենթակետերով նախատեսված հարցերը, որոշումներ է ընդունում դրանց վերաբերյալ.

դ) քննարկում և որոշումներ է ընդունում վերստուգումների, ստուգումների, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունների վերաբերյալ.

ե) քննարկում և որոշումներ է ընդունում Բանկի գույքի օտարման գործարքների վերաբերյալ.

զ) քննարկում և որոշումներ է ընդունում վարկերի տրամադրման վերաբերյալ.

է) քննարկում և որոշումներ է ընդունում մասնաճյուղեր և ներկայացուցչություններ ստեղծելու, դրանց գործունեությունը դադարեցնելու նպատակահամարության մասին.

ը) քննարկում և որոշումներ է ընդունում Բանկի գլխամասի, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության ամսական և (կամ) եռամսյակային կատարողականների մասին.

թ) հաստատում է կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքային գործունեության տարեկան պլանները և հաշվետվությունները.

4. Գործադիր տնօրենը, որպես իր բացառիկ իրավասություն, ներկայացնում է Բանկը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, Բանկի անունից կնքում է գործարքներ, գործում է առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր:

5. Գործադիր տնօրենը՝

ա) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Խորհրդի կողմից հաստատվող Բանկի՝ ներքին իրավական ակտերը, առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունները, վարչակազմակերպական կառուցվածքը.

բ) տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, իր իրավասությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ, վերահսկում է դրանց կատարումը.

գ) աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է Բանկի աշխատողներին.

դ) Բանկի աշխատողների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.

ե) ապահովում է Ժողովի, Խորհրդի և Վարչության որոշումների, այդ թվում՝ հեռանկարային զարգացման ծրագրի և ներքին ակտերի կատարումը.

զ) ըստ Բանկի վարչակազմակերպական կառուցվածքի, իրականացնում է իրավասությունների և պարտականությունների, այդ թվում՝ Գործադիր տնօրենի տեղակալների, բաշխումը աշխատողների միջև՝ հստակ սահմանելով հաշվետվական հարաբերությունները.

է) վերահսկում է միջին և ստորին օղակների ղեկավարների գործողությունները.

ը) պահանջում է ստորաբաժանումների ղեկավարներից՝ վերահսկել իրենց աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման արդյունավետությունը.

թ) անհրաժեշտության դեպքում առաջարկություններ է ներկայացնում կազմակերպական կառուցվածքը կատարելագործելու վերաբերյալ.

ժ) ստորագրում և իրավասու մարմիններին է ներկայացնում Բանկի ֆինանսական, վիճակագրական, հարկային հաշվետվություններ, հայցադիմումներ և անհրաժեշտ այլ փաստաթղթեր.

ժա) պարբերաբար իրականացնում է Բանկի անձնակազմի վերապատրաստումը.

ժբ) իրականացնում է Վարչության նախագահի գործառույթները՝

1) կազմակերպում է Վարչության աշխատանքները.

2) գումարում և նախագահում է Վարչության նիստերը.

3) կազմակերպում է Վարչության նիստերի արձանագրությունների վարումը.

4) ներկայացնում է Վարչությունը Խորհրդի նիստերին.

5) ստորագրում է Վարչության նիստերի որոշումները.

ժգ) անհրաժեշտության դեպքում առաջարկություններ է ներկայացնում ներքին հսկողության համակարգի համարժեքության և մոնիտորինգի արդյունավետության վերաբերյալ.

ժդ) իր իրավասություններին պատկանող ցանկացած հարց կարող է քննարկել Վարչության նիստին.

ժե) իրականացնում է Բանկի կանոնադրությամբ, ինչպես նաև Խորհրդի կողմից սահմանված իրավական ակտերի շրջանակներում նախատեսված Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ իրավասություններ:

6. Այն հարցերը, որոնք օրենքով կամ Բանկի կանոնադրությամբ չեն սահմանվել որպես Ժողովի, Խորհրդի կամ Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման իրավասությանը պատկանող, պատկանում են Գործադիր տնօրենի իրավասությանը:

7. Գործադիր տնօրենը Խորհրդին առնվազն եռամսյակը մեկ անգամ, ներկայացնում է իր գործունեության վերաբերյալ հաշվետվություններ՝ Խորհրդի կողմից սահմանված կարգով և ձևով:

8. Գործադիր տնօրենի իրավասությանն ենթակա հարցերով որոշումների ընդունումը չի կարող փոխանցվել Բանկի կառավարման այլ մարմինների, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանմանը, Բանկի գլխավոր հաշվապահին կամ այլ անձի, բացառությամբ՝ եթե

Գործադիր տնօրենի լիազորությունների իրականացումը պատշաճ կերպով ժամանակավորապես փոխանցվել է նրան փոխարինող անձին: Գործադիր տնօրենի լիազորությունները պատշաճ կերպով ժամանակավորապես կարող են փոխանցվել նրան փոխարինող անձին, եթե վերջինս համապատասխանում է Կենտրոնական բանկի սահմանած որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին:

բ. տեղեկություններ Բանկի կառավարմանը մասնակցող անձանց մասին

1. Բանկի Խորհրդի նախագահ՝ Բարսեղ Բեգլարյան

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան, Ն. Զեյթուն II փ., 4/1 տուն
Մասնագիտությունը	Մաթեմատիկա, ժողովրդական տնտեսության պլանավորում
Վերջին երեք տարիների ընթացքում զբաղեցրած պաշտոնները	07.01.1996թ.-առ այսօր «ՖԼԵԾ» ՍՊԸ, ընկերության նախագահ 10.12.2004թ.- առ այսօր ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, Խորհրդի նախագահ
Նախորդ երեք տարիների ընթացքում Բանկի կողմից տրված վարձատրությունները(տարեկան)	2004 թ. – չի վարձատրվել 2005 թ. – չի վարձատրվել 2006 թ. – 172,500 ՀՀ դրամ
Տվյալ անձին պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը	Սեփականության իրավունքով Բանկի բաժնետոմս չունի:
Նշանակալից մասնակցությունն այլ անձանց բաժնային արժեթղթերում՝ արժեթղթերի տեսակները, դրանց թողարկողների անվանումները և արժեթղթերի քանակները	Նշանակալից մասնակցություն այլ անձանց բաժնային արժեթղթերում չունի:
Պայմանագրերի և որոշումների համառոտ նկարագրում, համաձայն որոնց տվյալ անձը հանդիսանում է կառավարմանը մասնակցող անձ, նրա գործողությունների լիազորության ժամկետը	ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 10.12.2004թ. թիվ 1/738Ա որոշում, Բանկի հետ կնքված աշխատանքային 04.08.2006թ. թիվ 168/Ա պայմանագիր: Գործողությունների լիազորությունների ժամկետը 5 տարի է:

2. Խորհրդի անդամ՝ Էնդել Ստեփանյան

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան, Թոթովենցի 11/2, բն. 39
Մասնագիտությունը	Արդյունաբերության էկոնոմիկա
Վերջին երեք տարիների ընթացքում զբաղեցրած պաշտոնները	13.08.2004-26.04.2005թ.՝ «Միջինվեստբանկ» ՓԲԸ, ներքին հսկող խմբի ղեկավարի պաշտոնակատար 16.04.2006-04.2006թ.՝ «Կոնվերս բանկ» ՓԲԸ, վերստուգիչ հանձնաժողովի նախագահ 03.03.2005-28.04.2006թ.՝ «Արմսվիսբանկ» ՓԲԸ, վերստուգիչ հանձնաժողովի նախագահ 22.04.2005-30.05.2006թ.՝ «Հայկապ» բանկ ՓԲԸ, վերստուգիչ հանձնաժողովի նախագահ 10.07.2006թ.-առ այսօր՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, խորհրդի անդամ
Նախորդ երեք տարիների ընթացքում	2004 թ. – չի վարձատրվել

Բանկի կողմից տրված վարձատրությունները(տարեկան)	2005 թ. – չի վարձատրվել 2006թ. – 578,000 ՀՀ դրամ
Տվյալ անձին պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը	Սեփականության իրավունքով Բանկի բաժնետոմս չունի:
Նշանակալից մասնակցությունն այլ անձանց բաժնային արժեթղթերում՝ արժեթղթերի տեսակները, դրանց թողարկողների անվանումները և արժեթղթերի քանակները	Նշանակալից մասնակցություն այլ անձանց բաժնային արժեթղթերում չունի:
Պայմանագրերի և որոշումների համառոտ նկարագրում, համաձայն որոնց տվյալ անձն հանդիսանում է կառավարմանը մասնակցող անձ, նրա գործողությունների լիազորության ժամկետը	ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 10.07.2006թ. թիվ 1/529Ա որոշում, Բանկի հետ կնքված աշխատանքային 04.08.2006թ. թիվ 170/Ա պայմանագիր: Գործողությունների լիազորությունների ժամկետը 5 տարի է:

3. Խորհրդի անդամ՝ Մանուկ Մկրտչյան

Բնակության վայրը	ՀՀ, գ. Առինջ, տ 10
Մասնագիտությունը	Մաթեմատիկա
Վերջին երեք տարիների ընթացքում զբաղեցրած պաշտոնները	22.03.1999-01.02.2006թ.՝ ՀՀ ԿԳՆ «Կրթական բարեփոխումների կենտրոն», գիտակրթական գործընթացի պլանավորման և տեղեկատվական վերլուծությունների դեպարտամենտի ղեկավար 01.02.2006-առ այսօր՝ Կրթության Ազգային ինստիտուտ, մանկավարժական գիտության և նորարարության բաժնի վարիչ 10.07.2006թ.-առ այսօր՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, խորհրդի անդամ:
Նախորդ երեք տարիների ընթացքում Բանկի կողմից տրված վարձատրությունները(տարեկան)	2004 թ. – չի վարձատրվել 2005 թ. – չի վարձատրվել 2006թ. – 575,000 ՀՀ դրամ
Տվյալ անձին պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը	Սեփականության իրավունքով Բանկի բաժնետոմս չունի:
Նշանակալից մասնակցությունն այլ անձանց բաժնային արժեթղթերում՝ արժեթղթերի տեսակները, դրանց թողարկողների անվանումները և արժեթղթերի քանակները	նշանակալից մասնակցություն այլ անձանց բաժնային արժեթղթերում չունի:
Պայմանագրերի և որոշումների համառոտ նկարագրում, համաձայն որոնց տվյալ անձն հանդիսանում է կառավարմանը մասնակցող անձ, նրա գործողությունների լիազորության ժամկետը	ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 10.07.2006թ. թիվ 1/529Ա որոշում, Բանկի հետ կնքված աշխատանքային 04.08.2006թ. թիվ 171/Ա պայմանագիր: Գործողությունների լիազորությունների ժամկետը 5 տարի է:

4. Խորհրդի անդամ՝ Վաղարշակ Մանուկյան

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան, Ն/Շենգավիթ փող 1, տուն 25
Մասնագիտությունը	Վարկ
Վերջին երեք տարիների ընթացքում զբաղեցրած պաշտոնները	10.03.2003թ.-17.03.2005թ.՝ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ, ք. Երևան, գործերի կառավարիչ 01.10.2005թ.-.առ այսօր՝«ՖԼԵՇ» ՍՊԸ, Ներքին աուդիտի պետ 12.10.2006թ.-առ այսօր՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, խորհրդի անդամ:
Նախորդ երեք տարիների ընթացքում Բանկի կողմից տրված վարձատրությունները(տարեկան)	2004 թ. – չի վարձատրվել 2005 թ. – չի վարձատրվել 2006 թ. – 254,545 ՀՀ դրամ
Տվյալ անձին պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը	Սեփականության իրավունքով Բանկի բաժնետոմս չունի:
Նշանակալից մասնակցությունն այլ անձանց բաժնային արժեթղթերում՝ արժեթղթերի տեսակները, դրանց թողարկողների անվանումները և արժեթղթերի քանակները	Նշանակալից մասնակցություն այլ անձանց բաժնային արժեթղթերում չունի:
Պայմանագրերի և որոշումների համառոտ նկարագրում, համաձայն որոնց տվյալ անձն հանդիսանում է կառավարմանը մասնակցող անձ, նրա գործողությունների լիազորության ժամկետը	ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 12.10.2006թ. թիվ 1/969Ա որոշում, Բանկի հետ կնքված աշխատանքային 13.10.2006թ. թիվ 196/Ա պայմանագիր: Գործողությունների լիազորությունների ժամկետը 5 տարի է:

5. Խորհրդի անդամ՝ Վահրամ Ղազարյան

Բնակության վայր	ՀՀ, ք.Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղ. 15 շ. բն. 30
Մասնագիտությունը	Կիրառական մաթեմատիկա
Վերջին երեք տարիների ընթացքում զբաղեցրած պաշտոնները	01.09.2003-01.09.2005թ.՝ ՀՀ Արտակարգ իրավիճակների վարչության «Ճգնաժամային կառավարման ինստիտուտ» ՊՈԱԿ, ուսումնական գծով բարձրագույն կրթության հարցերով պրոռեկտոր 01.09.2005-30.12.2006թ.՝ նույն ինստիտուտի «Ճգնաժամային կառավարման» ֆակուլտետի դեկան 01.10.2004թ.-ից առ այսօր՝ «ԲՅՈՒՐԱԿՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ» ՍՊԸ-ի (հիմնադիր) տնօրեն 10.09.2007թ.-առ այսօր՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, խորհրդի անդամ:
Նախորդ երեք տարիների ընթացքում Բանկի կողմից տրված վարձատրությունները (տարեկան)	2004 թ. – չի աշխատել 2005 թ. – չի աշխատել 2006 թ. – չի աշխատել
Տվյալ անձին պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը	Սեփականության իրավունքով Բանկի բաժնետոմս չունի:
Նշանակալից մասնակցությունն այլ	Նշանակալից մասնակցություն այլ անձանց բաժնային

անձանց բաժնային արժեթղթերում՝ արժեթղթերի տեսակները, դրանց թողարկողների անվանումները և արժեթղթերի քանակները	արժեթղթերում չունի:
Պայմանագրերի և որոշումների համառոտ նկարագրում, համաձայն որոնց տվյալ անձն հանդիսանում է կառավարմանը մասնակցող անձ, նրա գործողությունների լիազորության ժամկետը	ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 10.09.2007թ. թիվ 1/1168Ա որոշում, Բանկի հետ կնքված աշխատանքային 29.06.2007թ թիվ 352-1/Ա պայմանագիր: Գործողությունների լիազորությունների ժամկետը 5 տարի է:

Ժողովի կողմից Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն կամ, եթե՝

ա) նա դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

բ) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել բանկի խորհրդի անդամ (բանկի ղեկավար).

գ) նա մեկ տարվա ընթացքում բացակայել է Խորհրդի նիստերի առնվազն 1/4-ից անհարգելի պատճառներով կամ ընդհանուր առմամբ (ներառյալ հարգելի և անհարգելի բացակայությունները) նիստերի առնվազն կեսից: Սույն ենթակետի իմաստով իրական ժամանակի ռեժիմով և հեռակա (հարցմամբ) մասնակցությունը համարվում է լիարժեք մասնակցություն.

դ) նա օրենքով սահմանված կարգով որակազրկվել կամ զրկվել է որոշակի պաշտոն վարելու իրավունքից:

6. Վարչության նախագահ-գործադիր տնօրեն՝ Աշոտ Օսիպյան

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան, Ամառանոցային 83
Մասնագիտությունը	Շինարարության էկոնոմիկա և կառավարում
Վերջին երեք տարիների ընթացքում զբաղեցրած պաշտոնները	29.03.1999թ.-12.06.2006թ.՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Գործադիր տնօրեն 14.06.2006թ-09.10.2006թ.՝ ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի խորհրդական 10.10.2006թ-26.10.2006թ.՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ՓԲԸ, գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար 26.10.2006թ. - առ այսօր՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ գործադիր տնօրեն 19.03.2007թ. - առ այսօր՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ գործադիր տնօրեն-վարչության նախագահ
Նախորդ երեք տարիների ընթացքում Բանկի կողմից տրված վարձատրությունները(տարեկան)	2004 թ. – չի աշխատել 2005 թ. – չի աշխատել 2006 թ. – 5,590,909 ՀՀ դրամ
Տվյալ անձին պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը	Սեփականության իրավունքով Բանկի բաժնետոմս չունի:
Նշանակալից մասնակցությունն այլ անձանց բաժնային արժեթղթերում՝ արժեթղթերի տեսակները, դրանց թողարկողների անվանումները և արժեթղթերի քանակները	Նշանակալից մասնակցություն այլ անձանց բաժնային արժեթղթերում չունի:
Պայմանագրերի և որոշումների	ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 25.10.2006թ. թիվ

համառոտ նկարագրում, համաձայն որոնց տվյալ անձն հանդիսանում է կառավարմանը մասնակցող անձ, նրա գործողությունների լիազորության ժամկետը	1/1023Ա որոշում, Բանկի հետ կնքված աշխատանքային 21.11.2006թ. թիվ 210/Ա պայմանագիր: ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 19.03.2007թ. թիվ 1/347Ա որոշմամբ գրանցված է Բանկի վարչության նախագահի պաշտոնում: Գործողությունների լիազորությունները անժամկետ են:

7. Վարչության նախագահի տեղակալ - գործադիր տնօրենի տեղակալ՝ Արթուր Հակոբյան

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան, Նոր Նորքի 2-րդ զանգված, Թոթովենցի 68, բն. 10
Մասնագիտությունը	Տնտեսագիտական կիբեռնետիկա
Վերջին երեք տարիների ընթացքում զբաղեցրած պաշտոնները	01.03.2003թ.-02.08.2006թ.՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Գործադիր տնօրենի տեղակալ-վարչության անդամ 16.10.2006թ.-16.11.2006թ.՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ՓԲԸ, գործադիր տնօրենի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար 16.11.2006թ-առ այսօր՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, գործադիր տնօրենի տեղակալ 19.03.2007թ-առ այսօր՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, գործադիր տնօրենի տեղակալ-վարչության նախագահի տեղակալ
Նախորդ երեք տարիների ընթացքում Բանկի կողմից տրված վարձատրությունները(տարեկան)	2004 թ. – չի աշխատել 2005 թ. – չի աշխատել 2006 թ. – 2,127,273 ՀՀ դրամ
Տվյալ անձին պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը	Սեփականության իրավունքով Բանկի բաժնետոմս չունի:
Նշանակալից մասնակցությունն այլ անձանց բաժնային արժեթղթերում՝ արժեթղթերի տեսակները, դրանց թողարկողների անվանումները և արժեթղթերի քանակները	Նշանակալից մասնակցություն այլ անձանց բաժնային արժեթղթերում չունի:
Պայմանագրերի և որոշումների համառոտ նկարագրում, համաձայն որոնց տվյալ անձն հանդիսանում է կառավարմանը մասնակցող անձ, նրա գործողությունների լիազորության ժամկետը	ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 15.11.2006թ. թիվ 1/1123Ա որոշում, Բանկի հետ կնքված աշխատանքային 10.01.2007թ. թիվ 239/Ա պայմանագիր: ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 19.03.2007թ. թիվ 1/347Ա որոշմամբ գրանցված է Բանկի վարչության նախագահի տեղակալի պաշտոնում: Գործողությունների լիազորությունները անժամկետ են:

8. Վարչության անդամ - գլխավոր հաշվապահ՝ Գագիկ Թադևոսյան

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան, ՀԱԹ Ա1 թաղ., Օգանովի փող., 10շ., բն.47
Մասնագիտությունը	Ֆինանսներ
Վերջին երեք տարիների ընթացքում զբաղեցրած պաշտոնները	06.12.2004թ.-10.01.2006թ.՝ «Հայկապ» բանկ ՓԲԸ, գլխավոր հաշվապահ 17.11.2005թ.-ից «ԱՐԱՐԱՏ» Բանկ ՓԲԸ, գլխավոր հաշվապահ 10.01.2006թ.-30.01.2006թ «ԱՐԱՐԱՏ» Բանկ ՓԲԸ,

	գլխավոր հաշվապահի տեղակալի ժ/պ 30.01.2006թ.- 03.04.2006թ.՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ՓԲԸ, գլխավոր հաշվապահի տեղակալ 03.04.2006թ.-10.10.2006թ՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ՓԲԸ, գլխավոր հաշվապահի տեղակալ-Հաշվապահական հաշվառման վարչության Ներքին հաշվապահության և թղթակցային հաշիվների բաժնի պետ 10.10.2006թ.-23.10.2006թ՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ՓԲԸ, գլխավոր հաշվապահի ժ/պ 23.10.2006թ.-ից առ այսօր՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, գլխավոր հաշվապահ 19.03.2007թ.-ից առ այսօր՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, գլխավոր հաշվապահ-վարչության անդամ
Նախորդ երեք տարիների ընթացքում Բանկի կողմից տրված վարձատրությունները(տարեկան)	2004 թ. – 941,076 ՀՀ դրամ 2005 թ. – 5,059,993 ՀՀ դրամ 2006 թ. – 1,644,545 ՀՀ դրամ
Տվյալ անձին պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը	Սեփականության իրավունքով Բանկի բաժնետոմս չունի:
Նշանակալից մասնակցությունն այլ անձանց բաժնային արժեթղթերում՝ արժեթղթերի տեսակները, դրանց թողարկողների անվանումները և արժեթղթերի քանակները	Նշանակալից մասնակցություն այլ անձանց բաժնային արժեթղթերում չունի:
Պայմանագրերի և որոշումների համառոտ նկարագրում, համաձայն որոնց տվյալ անձն հանդիսանում է կառավարմանը մասնակցող անձ, նրա գործողությունների լիազորության ժամկետը	ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 25.10.2006թ. թիվ 1/1023Ա որոշում, Բանկի հետ կնքված աշխատանքային 10.01.2007թ. թիվ 246/Ա պայմանագիր: ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 19.03.2007թ. թիվ 1/347Ա որոշմամբ գրանցված է Բանկի վարչության անդամի պաշտոնում: Գործողությունների լիազորությունները անժամկետ են:

9. Վարչության անդամ՝ Համեստ Մուրադյան

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան, Ավան, Դուրյան թաղ. 34 շ., բն. 53
Մասնագիտությունը	իրավագիտություն
Վերջին երեք տարիների ընթացքում զբաղեցրած պաշտոնները	03.09.2001թ.-01.07.2005թ.՝ «Հայկապ» Բանկ ՍՊԸ, իրավաբանական ստորաբաժանման ավագ իրավաբան 23.01.2003թ.-ից «Հայկապ» Բանկ ՓԲԸ, Իրավաբանական ստորաբաժանման ավագ իրավաբան 01.07.2005թ.-03.04.2006թ.՝ «ԱՐԱՐԱՏ» Բանկ ՓԲԸ, Իրավաբանական վարչության պետ 03.04.2006թ.-10.01.2007թ.՝ «ԱՐԱՐԱՏ» Բանկ ՓԲԸ, 30.01.2007թ.-ից ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ՓԲԸ, Իրավաբանական վարչության գլխավոր իրավախորհրդատու 10.01.2007թ.-ից-առ այսօր՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Իրավաբանական վարչության պետ-գլխավոր իրավախորհրդատու

	29.05.2007թ.-ից առ այսօր՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, Վարչության անդամ
Նախորդ երեք տարիների ընթացքում Բանկի կողմից տրված վարձատրությունները(տարեկան)	Առանձին տեղեկանքով ներկայացված է միայն ՀՀ կենտրոնական բանկին:
Տվյալ անձին պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը	Սեփականության իրավունքով Բանկի բաժնետոմս չունի:
Նշանակալից մասնակցությունն այլ անձանց բաժնային արժեթղթերում՝ արժեթղթերի տեսակները, դրանց թողարկողների անվանումները և արժեթղթերի քանակները	Նշանակալից մասնակցություն այլ անձանց բաժնային արժեթղթերում չունի:
Պայմանագրերի և որոշումների համառոտ նկարագրում, համաձայն որոնց տվյալ անձն հանդիսանում է կառավարմանը մասնակցող անձ, նրա գործողությունների լիազորության ժամկետը	Բանկի հետ կնքված աշխատանքային 10.01.2007թ. թիվ 281/Ա պայմանագիր: ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 29.05.2007թ. թիվ 1/677Ա որոշմամբ գրանցված է Բանկի վարչության անդամի պաշտոնում: Գործողությունների լիազորությունները անժամկետ են:

գ. Ազդագրի ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա ընթացքում Բանկի կառավարմանը մասնակցող անձանց դեմ սնանկացման (անվճարունակության) միջնորդությունների ներկայացման, ինչպես նաև դատարանի որոշման (դատավճռի) հիման վրա կամ պետական որևէ մարմնի կողմից նրա նկատմամբ պատասխանատվության միջոցներ չի կիրառվել:

դ. Բանկի կառավարմանը մասնակցող անձանց միջև ազգակցական կապերը բացակայում են:

ե. Բանկի և նրա կառավարմանը մասնակցող անձանց միջև ցանկացած շահերի բախումը կառավարվում և կարգավորվում է ՀՀ օրենսդրության համապատասխան:

ԳԼՈՒԽ 5. ԲԱՆԿԻ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԻՆՔ, ԲԱՆԿԻԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԸ

1) Բանկի հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկություններ.

ա. Բանկի հետ փոխկապակցված, Բանկի կառավարման մարմինների անդամ, ֆիզիկական անձանց մասին տեղեկությունները ներկայացված են Ազդագրի 4-րդ գլխում:

Բանկի հետ փոխկապակցված, Բանկի կառավարման մարմինների անդամ չհանդիսացող ֆիզիկական անձանց մասին տեղեկությունները ներկայացված են ստորև.

1. Ներքին աուդիտի վարչության պետ՝ Հովհաննես Հովհաննիսյան

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան, Եղբայրության 14/71
Մասնագիտությունը	Շինարարական ճանապարհային մեքենաներ և սարքավորումներ, Ֆինանսներ և վարկ
Վերջին երեք տարիների ընթացքում զբաղեցրած պաշտոնները	14.07.2003թ.-29.10.2004թ. «Հայկապ» Բանկ ՓԲԸ, վերանվանված «ԱՐԱՐԱՏ» Բանկ ՓԲԸ. Ներքին աուդիտոր 01.11.2004թ.-01.07.2005թ. «ԱՐԱՐԱՏ» Բանկ ՓԲԸ. Ներքին վերահսկիչ 01.07.2005թ.- առ այսօր ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ. Ներքին աուդիտի վարչության պետ

	09.2005թ. – 04.2006թ., Կոնվերս բանկ ՓԲԸ, վերստուգիչ հանձնաժողովի անդամ 17.08.2006թ. - առ այսօր «ՖԻՆՔԱ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ, վերստուգող
Տվյալ անձին պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը	Սեփականության իրավունքով Բանկի բաժնետոմս չունի:
Նշանակալից մասնակցությունն այլ անձանց բաժնային արժեթղթերում՝ արժեթղթերի տեսակները, դրանց թողարկողների անվանումները և արժեթղթերի քանակները	Նշանակալից մասնակցություն այլ անձանց բաժնային արժեթղթերում չունի:
Պայմանագրերի և որոշումների համառոտ նկարագրում, համաձայն որոնց տվյալ անձն հանդիսանում է կառավարմանը մասնակցող անձ, նրա գործողությունների լիազորության ժամկետը	Բանկի խորհրդի 17.07.2006թ.-ի թիվ 26/5 որոշմամբ հաստատվել է Բանկի Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի՝ Ներքին աուդիտի վարչության պետի պաշտոնում: ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 15.11.2006թ. թիվ 1/1125Ա որոշմամբ վերագրանցվել է Բանկի ներքին աուդիտի ղեկավարի պաշտոնում: Բանկի հետ կնքված աշխատանքային 10.01.2007թ. թիվ 240/Ա պայմանագիր: Գործողությունների լիազորությունները անժամկետ են:

2. Ներքին աուդիտի վարչության առաջատար մասնագետ՝ Տիգրան Երանոսյան

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան, Գալշոյան փ. 18 շ. բն. 45
Մասնագիտությունը	Ֆինանսներ և վարկ, Պետական կառավարում և տեղական ինքնակառավարում
Վերջին երեք տարիների ընթացքում զբաղեցրած պաշտոնները	24.05.2004թ.-04.10.2004թ. ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, 1-ին կարգի մասնագետ 01.11.2004թ.-01.07.2005թ. «ՖԻՆՔԱ» հիմնադրամ 24.03.2006թ.-ից առ այսօր ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ. Ներքին աուդիտի վարչության առաջատար մասնագետ
Տվյալ անձին պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը	Սեփականության իրավունքով Բանկի բաժնետոմս չունի:
Նշանակալից մասնակցությունն այլ անձանց բաժնային արժեթղթերում՝ արժեթղթերի տեսակները, դրանց թողարկողների անվանումները և արժեթղթերի քանակները	Նշանակալից մասնակցություն այլ անձանց բաժնային արժեթղթերում չունի:
Պայմանագրերի և որոշումների համառոտ նկարագրում, համաձայն որոնց տվյալ անձն հանդիսանում է կառավարմանը մասնակցող անձ, նրա գործողությունների լիազորության ժամկետը	Բանկի խորհրդի 17.07.2006թ.-ի թիվ 26/5 որոշմամբ նշանակվել է Բանկի Ներքին աուդիտի ստորաբաժանման անդամի՝ վարչության մասնագետի պաշտոնում: ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 15.11.2006թ. թիվ 1/1125Ա որոշմամբ գրանցվել է Բանկի ներքին աուդիտի անդամի պաշտոնում: Բանկի հետ կնքված աշխատանքային 10.01.2007թ. թիվ 241/Ա պայմանագիր: Գործողությունների լիազորությունները անժամկետ են:

3. Գլխավոր հաշվապահի տեղակալ, Հաշվապահական հաշվառման վարչության Հաշվետվությունների և վերլուծությունների բաժնի պետ՝ Գայանե Մարգարյան

Բնակության վայր	ՀՀ, ք.Երևան, Լենինգրադյան 24 շ. բն. 48
Մասնագիտությունը	Ֆինանսներ և վարկ
Վերջին երեք տարիների ընթացքում զբաղեցրած պաշտոնները	21.02.2005թ.-01.06.2005թ. «Հայկապ» Բանկ ՓԲԸ, Հաշվապահական հաշվառման և գործառնական սպասարկման ստորաբաժանման ավագ մասնագետ 01.06.2005թ.-03.04.2006թ. «ԱՐԱՐԱՏ» Բանկ ՓԲԸ, Հաշվապահական հաշվառման և գործառնական սպասարկման վարչության ավագ մասնագետ 03.04.2006թ.-26.05.2006թ. «ԱՐԱՐԱՏ» Բանկ ՓԲԸ, Հաշվապահական հաշվառման վարչության Հաշվետվությունների և վերլուծությունների բաժնի ավագ մասնագետ 26.05.2006թ.-20.09.2006թ. «ԱՐԱՐԱՏ» Բանկ ՓԲԸ, Նաիրիտ մասնաճյուղի կառավարիչ 20.09.2006թ.-17.10.2006թ. «ԱՐԱՐԱՏ» Բանկ ՓԲԸ, Սեբաստիա մասնաճյուղի կառավարիչ 17.10.2006թ.-03.11.2006թ. «ԱՐԱՐԱՏ» Բանկ ՓԲԸ, Հաշվապահական հաշվառման վարչության Հաշվետվությունների և վերլուծությունների բաժնի ավագ մասնագետ 03.11.2006թ.-10.01.2007թ. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ՓԲԸ, Հաշվապահական հաշվառման վարչության Հաշվետվությունների և վերլուծությունների բաժնի պետ 10.01.2007թ.-16.04.2007թ. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ՓԲԸ, Գլխավոր հաշվապահի տեղակալի ժ/պ, Հաշվապահական հաշվառման վարչության Հաշվետվությունների և վերլուծությունների բաժնի պետ 16.04.2007թ.-ից առ այսօր՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, Գլխավոր հաշվապահի տեղակալ, Հաշվապահական հաշվառման վարչության Հաշվետվությունների և վերլուծությունների բաժնի պետ
Տվյալ անձին պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը	Սեփականության իրավունքով Բանկի բաժնետոմս չունի:
Նշանակալից մասնակցությունն այլ անձանց բաժնային արժեթղթերում՝ արժեթղթերի տեսակները, դրանց թողարկողների անվանումները և արժեթղթերի քանակները	Նշանակալից մասնակցություն այլ անձանց բաժնային արժեթղթերում չունի:
Պայմանագրերի և որոշումների համառոտ նկարագրում, համաձայն որոնց տվյալ անձն հանդիսանում է կառավարմանը մասնակցող անձ, նրա գործողությունների լիազորության ժամկետը	ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 16.04.2007թ. թիվ 1/468Ա որոշմամբ գրանցվել է Բանկի գլխավոր հաշվապահի տեղակալի պաշտոնում: Բանկի հետ կնքված աշխատանքային 10.01.2007թ. թիվ 247/Ա պայմանագիր: Գործողությունների լիազորությունները անժամկետ են:

Բանկի հետ փոխկապակցված ֆիզիկական անձինք սեփականության իրավունքով Բանկի բաժնային արժեթղթեր չունեն:

Բանկի հետ փոխկապակցված անձանց միջև ազգակցական կապեր չկան:

բ. Բանկի հետ փոխկապակցված միակ իրավաբանական անձ է «ՖԼԵԾ» ՍՊԸ-ն, որին պատկանում է Բանկի 100 % բաժնետոմսերը: «ՖԼԵԾ» ՍՊԸ-ի գտնվելու վայրն է ՀՀ, ք. Երևան, Ե. Կողբացու 30: Պետական գրանցման համարն է 290.110.1114, գրանցման հասցեն՝ Հարավ-Արևմտյան թաղամաս, 50/3, բն. 32:

«ՖԼԵԾ» ՍՊԸ-ի գործադիր մարմնի կամ տնօրենների խորհրդի անդամներից վերջին երեք տարիների ընթացքում Բանկի կառավարման մարմիններում պաշտոն են զբաղեցնում հետևյալ անձինք.

1.Բարսեղ Բեգլարյան՝
07.01.1996թ.-առ այսօր՝ «ՖԼԵԾ» ՍՊԸ, ընկերության նախագահ
10.12.2004թ.- առ այսօր՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի Խորհրդի նախագահ
մասնակցության չափը Բանկի կանոնադրական կապիտալում՝ 0 %, «ՖԼԵԾ» ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում՝ 89.985 %

2. Վաղարշակ Մանուկյան՝
01.10.2005թ.- առ այսօր՝«ՖԼԵԾ» ՍՊԸ ներքին աուդիտի պետ
առ այսօր՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի Խորհրդի անդամ
մասնակցության չափը Բանկի կանոնադրական կապիտալում՝ 0 %, իսկ «ՖԼԵԾ» ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում՝ 0%:

2) Բանկի նշանակալից, բայց ոչ խոշոր սեփականատերերի վերաբերյալ.

ա. Բանկը նշանակալից, բայց ոչ խոշոր ֆիզիկական անձ բաժնետոմսերի սեփականատերեր չունի:

բ. Բանկը նշանակալից, բայց ոչ խոշոր իրավաբանական անձ բաժնետոմսերի սեփականատերեր չունի:

ԳԼՈՒԽ 6. ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՎԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանկի թողարկած բաժնետոմսերը

1) Բանկը թողարկել է և Ազդագրի համաձայն թողարկելու է հասարակ (սովորական) անվանական, ոչ փաստաթղթային բաժնետոմսեր:

2) Բանկի, որպես փակ բաժնետիրական ընկերություն, թողարկած բաժնետոմսերը գրանցում չեն պահանջել:

3) Բանկի, որպես փակ բաժնետիրական ընկերություն, թողարկված բաժնետոմսերը ցուցակված չեն: Ազդագրի համաձայն, թողարկվող բաժնետոմսերը կգրանցվեն, իսկ տեղաբաշխումից հետո Բանկի բաժնետոմսերը, որպես բաց բաժնետիրական ընկերություն կցուցակվեն Հայաստանի ֆոնդային բորսայում:

4) Բանկի թողարկած և տեղաբաշխած հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի ծավալը՝ 3,640,000 հազ. ՀՀ դրամ, քանակը՝ 728,000 հատ:

5) Բանկի տեղաբաշխած հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերը մարման ենթակա չեն:

6) Բանկի հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատեր բաժնետերերի իրավունքները և պարտականությունները սահմանված են Բանկի կանոնադրությամբ և Ազդագրի 2-րդ բաժնի 4)-րդ կետում:

7) Շահութաբաժինների չափը որոշվում է՝ ելնելով Բանկի փաստացի շահույթի բաշխումից, հիմք ընդունելով Բանկի շահութաբաժնային քաղաքականությունը:

Բանկի խորհուրդը տարեկան շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին Բանկի ընդհանուր ժողովին ներկայացվող առաջարկությունում հիմնավորում է Բանկի զուտ շահույթի բաշխման ուղղությունները, հաշվի առնելով՝

 Բանկի գլխավոր պահուստի ստեղծման ՀՀ օրենսդրության պահանջները

 շահութաբաժնի վճարմանն ուղղվող գումարի չափը՝ ելնելով ֆինանսական շուկայում բաժնային արժեթղթերի, ինչպես նաև ներդրումային այլ արժեթղթերի դիմաց վճարվող եկամուտների տոկոսաչափից

 Բանկի բաժնետոմսերի շուկայական արժեքի բարձրացման և հիմնադրամների ձևավորման անհրաժեշտությունը:

Ընդհանուր ժողովը շահութաբաժինների վճարման մասին որոշումն ընդունում է ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ:

Տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները վճարվում են զուտ շահույթից՝ ՀՀ դրամով, եռամսյակային և կիսամյակային՝ Բանկի խորհրդի որոշմամբ, տարեկան՝ Բանկի ժողովի որոշմամբ: Տարեկան շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է ժողովը՝ Բանկի խորհրդի առաջարկությամբ, սահմանելով նաև վճարման ժամկետը:

Բաժնետոմսերի սեփականատերերն իրենց շահութաբաժինները կարող են ստանալ Բանկի գլխամասային գրասենյակից կամ մասնաճյուղերից՝ իրենց անվամբ Բանկում բացված բանկային հաշիվներից:

ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ սահմանված են շահութաբաժինների վճարման իրավունքի հետևյալ սահմանափակումները: Բանկին արգելվում է վճարել շահութաբաժիններ, եթե՝

ա) Բանկը բաժնետիրոջ պահանջով և ՀՀ կենտրոնական բանկի համաձայնությամբ բաժնետիրոջից հետ չի գնել բաժնետոմսերը կամ դրանց մի մասը, այն դեպքում երբ.

- որոշում է ընդունվել Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու մասին, և բաժնետերը քվեարկել է Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու դեմ կամ այդ հարցերով քվեարկությանը չի մասնակցել,

- Բանկի կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ են կատարվել, կամ հաստատվել է կանոնադրությունը նոր խմբագրությամբ, որի հետևանքով սահմանափակվել են բաժնետիրոջ իրավունքները և բաժնետերը դեմ է քվեարկել կամ քվեարկությանը չի մասնակցել.

բ) շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ, Բանկի վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սնանկության) հայտանիշերին, կամ դրանք ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով.

գ) այդ պահին Բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են Բանկում առկա չբաշխված շահույթի գումարը:

Բանկի բաժնետոմսերի ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ սեփականատերերին շահութաբաժինների վճարումն իրականացվում է նույն պայմաններով:

Բանկը չունի տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսեր:

ա. 2006 թվականի արդյունքներով, Բանկի ժողովի որոշմամբ շահութաբաժիններ չի վճարվել՝ զուտ շահույթն ուղղելով է Բանկի կապիտալացման ավելացմանը:

բ. Ընթացիկ տարում Բանկը շահութաբաժինների միջանկյալ վճարումներ չի կատարել:

8) Բանկի բաժնետոմսերի վաճառք ֆոնդային բորսայում չի իրականացվել:

9) 2007 թվականի հունիսի 29-ին կայացած ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ՓԲԸ-ի բաժնետերերի տարեկան ժողովի որոշմամբ, կատարվեց բանկի բաժնետոմսերի բաժանում՝ մեկ հասարակ անվանական բաժնետոմսի անվանական արժեքը սահմանվեց 5,000 ՀՀ դրամ: Մինչ այդ, այն սահմանված է եղել 500,000 ՀՀ դրամ: Բանկի հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի բաժանման պատճառը հանդիսացել է Բանկի որպես բաց բաժնետիրական ընկերություն վերակազմավորվելուց հետո Բանկի բաժնետոմսերի գինը ներդրողների ավելի լայն շրջանակի համար մատչելի դարձնելը: Բանկի բաժնետոմսերի բաժանման արդյուքում, բաժնետոմսերի թիվն աճեց 100 անգամ: Բանկը բաժնետոմսերի հետգնում չի կատարել:

Բանկի թողարկած պարտատոմսերը

1) 2007 թվականի մայիսի 10-ին Բանկը տեղաբաշխել է անվանական, ոչ փաստաթղթային, արժեկտրոնային պարտատոմսեր:

2) Բանկի թողարկած պարտատոմսերը գրանցում չեն պահանջում:

3) Բանկի թողարկած անվանական պարտատոմսերը ցուցակված են Հայաստանի ֆոնդային բորսայում, վերին ABond մակարդակում, որոնց շնորհվել է ARKBB1 բորսայական հապավումը և AMARKBB12ER6 ծածկագիրը:

Հայաստանի ֆոնդային բորսա, հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5բ, հեռ. 54-33-24:

4) Բանկի թողարկած և տեղաբաշխած անվանական պարտատոմսերի ծավալը՝ 250,000 հազ. ՀՀ դրամ, քանակը՝ 25,000 հատ, տարեկան 8% տոկոսադրույքով:

5) Բանկի տեղաբաշխած անվանական պարտատոմսերի մարման ժամկետը՝ 2008 թվականի մայիսի 12-ը:

6) Բանկի անվանական պարտատոմսերի սեփականատերերն իրավունքներն են՝

- ազատ վաճառել պարտատոմսերը, այդ թվում՝ ֆոնդային բորսայում
- կորպորատիվ պարտատոմսերում ներդրված միջոցների դիմաց ստանալ տոկոսներ՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
- պարտատոմսերի մարման ժամանակ Բանկից ստանալ ներդրված գումարը:

7) Պարտատոմսերի արժեկտրոնային եկամուտները վճարվում են հետևյալ ժամանակացույցով՝

- 2007թ. օգոստոսի 10-ին,
- 2007թ. նոյեմբերի 12-ին
- 2008թ. փետրվարի 11-ին
- 2008թ. մայիսի 12-ին

8) Բանկի անվանական պարտատոմսերի վաճառքի ամենաբարձր գինը եղել է՝ 10,199.6 ՀՀ դրամ, ամենացածր գինը՝ 10,000 ՀՀ դրամ:

Պարտատոմսերի դիմաց վճարումների սահմանափակումներ չեն եղել: Բանկը չի նախատեսում պարտատոմսերի դիմաց եկամուտների վճարման որևէ սահմանափակում:

9) Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման պայմանների համաձայն, դրանք փոխարկման, բաժանման, համախմբման ենթակա չեն:

Պարտատոմսերի առուվաճառքը կատարվում է Հայաստանի ֆոնդային բորսայում:

Պարտատոմսերի հետգնումը կատարվելու է դրանց շրջանառության ժամկետի ավարտին:

ԱԶԴԱԳՐԻՆ ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

1. Ազդագրին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

ա. Բանկի կանոնադրության պատճենը

բ. Բանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի որոշման պատճենը՝ Բանկի կանոնադրության 4.1 կետը նոր խմբագրությամբ հաստատելու վերաբերյալ

գ. ՀՀ կենտրոնական բանկ գրանցման ներկայացված Բանկի կանոնադրության պատճենը

դ. Բանկի պետական գրանցման վկայականի պատճենը

ե. բաժնետոմսերի թողարկման, տեղաբաշխման մասին Բանկի խորհրդի որոշման պատճենը

զ. հայտարարագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա ֆինանսական հաշվետվությունների և 2007թ. ֆինանսական միջանկյալ հաշվետվությունների, աուդիտի եզրակացության պատճենները: Մասնավորապես.

- 2004 թվականի համար անկախ աուդիտ չիրականացնելու հիմքը
- 2004 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների պատճենները
- 2005 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտի եզրակացության պատճեն
- 2005 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների պատճենները
- 2006 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտի եզրակացության պատճեն
- 2006 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների պատճենները
- 2007 թվականի 3 եռամսյակների միջանկյալ հաշվետվությունների պատճենները:

է. Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ԻԿԿ-ի հետ կնքված «Անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման պայմանագրի» պատճենը

ը. հաշվետու թողարկող չհանդիսացող փոխկապակցված անձանց գրավոր համաձայնության պատճենը՝ իրենց մասին տեղեկությունները Կենտրոնական բանկ ներկայացնելու մասին

թ. բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման ծախսերի նախահաշիվը (թողարկվող բաժնետոմսերի համար)

ժ. պետական տուրքի անդորրագրի պատճենը:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ՓԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ
ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
29.06.2007թ.-ի թիվ 05 ՈՐՈՇՄԱՄԲ

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

_____ Բ.ԲԵԳԼԱՐՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ
03 դեկտեմբեր 2007թ.-ին
Գրանցման No 4

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ՝

_____ Տ.ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Երևան 2007թ.

1. Ընդհանուր դրույթներ

1.1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Բանկ) շահույթ ստանալու նպատակ հետապնդող իրավաբանական անձ է, որն իրավունք ունի «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով տրված լիցենզիայի հիման վրա իրականացնել բանկային գործունեություն:

1.2. Բանկը ստեղծվել է 20.09.1991թ.-ին գրանցված, «ՀԱՅԿԱՊ» բանկ ՓԲԸ-ից՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ՓԲԸ-ի անվանափոխության միջոցով, որը կազմավորվել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի և հանդիսանում է դրանց իրավահաջորդը:

1.3. Բանկի հիմնադիր փաստաթուղթը սույն կանոնադրությունն է, որի պահանջները պարտադիր են Բանկի բաժնետերերի և կառավարման մարմինների համար:

1.4. Բանկը ստեղծվել և ձեռք է բերել իրավաբանական անձի կարգավիճակ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) գրանցվելու օրվանից՝ գրանցման վկայական թիվ 0153, գրանցման համարը 4, գրանցման ամսաթիվ 20.09.1991թ.:

1.5. Բանկն իրավունք ունի իրականացնել բանկային գործունեություն և օրենսդրությամբ սահմանված ֆինանսական գործառնություններ՝ Կենտրոնական բանկի կողմից բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա ստանալու օրվանից՝ բանկային գործունեության լիցենզիա թիվ 4, լիցենզիան տրվել է 20.09.1991թ.:

1.6. Բանկն երաշխավորում է Բանկում սպասարկվող անձանց բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների պահպանումը՝ օրենքով սահմանված կարգով:

1.7. Բանկն ապահովում է ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերին պատկանող բանկային ավանդների հատուցումն երաշխավորելու մասին ՀՀ օրենքի պահանջների կատարումը:

1.8. Բանկն ապահովում է «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի և դրա հիման վրա Կենտրոնական բանկի ընդունած իրավական ակտերի պահանջների կատարումը:

1.9. Բանկը պատասխանատվություն չի կրում իրավասու մարմինների կողմից օրենսդրությամբ նախատեսված կարգով հաշվետիրոջ հաշիվների կամ գույքի արգելադրման, առգրավման, բռնագրավման կամ բռնագանձում տարածելու հետևանքով հաշվետիրոջ կրած վնասների համար:

1.10. Բանկն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքով (միջոցներով), եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

1.11. Բանկն ունի սեփականության իրավունքով իրեն պատկանող գույք, օրենքով սահմանված կարգով գրանցված ֆիրմային անվանում և խորհրդանիշ, իր անվամբ և խորհրդանիշով կլոր կնիք, դրոշմներ, բլանկներ և կնիքներ՝ այդ թվում համարային:

1.12. Բանկն իրավունք ունի իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.13. Բանկի ղեկավարների վրա ապօրինաբար ներգործելու կամ Բանկի ընթացիկ գործունեությանն ապօրինաբար միջամտելու հետևանքով Բանկին պատճառված վնասը ենթակա է հատուցման՝ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

1.14. ՀՀ կառավարությունը և Բանկը պատասխանատու չեն միմյանց պարտավորությունների համար, եթե Բանկը կամ ՀՀ կառավարությունն այդպիսիք չեն ստանձնել: Կենտրոնական բանկը և Բանկը միմյանց պարտավորությունների համար պատասխանատվություն չեն կրում:

1.15. Բանկի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք.Երևան, Պուշկինի 19:

1.16. Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է

հայերեն՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերություն

ռուսերեն՝ ÀÐÀÐÀÒÁÀ Í Ê î òêðû ò îå àêöè î íåð í îå îáùåñ òâî

անգլերեն՝ ARARATBANK Open Joint Stock Company

1.17. Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է

հայերեն՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

ռուսերեն՝ Î À Î ÀÐÀÐÀÒÁÀ Í Ê

անգլերեն՝ ARARATBANK Î JSC

2. Բանկի առանձնացված ստորաբաժանումները

2.1. Բանկը Հայաստանի Հանրապետությունում և նրա տարածքից դուրս կարող է հիմնել իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող մասնաճյուղեր, ներկայացուցչություններ (այսուհետ՝ առանձնացված ստորաբաժանումներ), որոնք, Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնելու դեպքում, գրանցվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, իսկ արտասահմանում՝ տվյալ երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները:

2.2. Բանկի առանձնացված ստորաբաժանումը գործում է Բանկի կողմից հաստատված և Կենտրոնական բանկում գրանցված կանոնադրության հիման վրա:

2.3. Բանկի առանձնացված ստորաբաժանումների ստեղծումը, գրանցումը և լուծարումն իրականացվում է օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

2.4. Մասնաճյուղը Բանկի անունից իրականացնում է բանկային գործունեություն և մասնաճյուղի կանոնադրությունով նախատեսված ֆինանսական գործառնություններ:

2.5. Ներկայացուցչությունը ներկայացնում է Բանկը, ուսումնասիրում է ֆինանսական շուկան, Բանկի անունից կնքում է պայմանագրեր, իրականացնում է համանման այլ գործառույթներ: Ներկայացուցչությունը բանկային գործունեություն կամ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված ֆինանսական գործառնություններ իրականացնելու իրավունք չունի:

2.6. Մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գույքը հաշվառվում է ինչպես Բանկի հաշվեկշռում, այնպես էլ դրանց առանձին հաշվեկշիռներում:

3. Բանկի կողմից իրականացվող ֆինանսական գործառնությունները և այլ գործարքները

3.1. Բանկն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հետ կարող է իրականացնել հետևյալ ֆինանսական գործառնությունները՝

ա) ընդունել ցպահանջ և ժամկետային ավանդներ.

բ) տրամադրել առևտրային և սպառողական վարկեր, այդ թվում՝ տալ հիփոթեքային վարկեր, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ.

գ) տրամադրել բանկային երաշխիքներ և ակրեդիտիվներ (վարկային նամակներ).

դ) բացել և վարել հաշիվներ, այդ թվում՝ այլ բանկերի թղթակցային հաշիվներ.

ե) մատուցել վճարահաշվարկային ծառայություններ և (կամ) այլ կերպ սպասարկել հաճախորդների հաշիվները.

զ) թողարկել, գնել (զեղչել), վաճառել և սպասարկել արժեթղթեր, վճարային փաստաթղթեր, ճանապարհային չեկեր, քարտեր և այլ գործիքներ, կատարել նման այլ գործառնություններ.

է) իրականացնել ինվեստիցիոն (ներդրումային) գործունեություն՝ իր կամ ներդրողի անունից և հաշվին բաժնետոմսեր, պարտատոմսեր և ներդրումային այլ արժեթղթեր գնել կամ այլ կերպ ձեռք բերել, օտարել, ինչպես նաև տեղաբաշխման նպատակով ձեռք բերել այլ անձանց (թողարկողների) բաժնետոմսերը, պարտատոմսերը և ներդրումային այլ արժեթղթերը (բաժանորդագրական գործունեություն).

ը) մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց արժեթղթերն ու ներդրումները (հավատարմագրային (լիազորագրային) կառավարում).

թ) գնել, վաճառել և կառավարել թանկարժեք մետաղների բանկային (ստանդարտացված) ձուլակտորներ և հուշադրամ.

ժ) գնել և վաճառել (փոխանակել) արտարժույթ, այդ թվում՝ կնքել ՀՀ դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ.

ժա) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ).

ժբ) ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ.

ժգ) մատուցել ֆինանսական և ինվեստիցիոն խորհրդատվություն.

ժդ) ստեղծել և սպասարկել բանկային ծառայություններից օգտվող անձանց վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն:

3.2. Բանկը կարող է կնքել քաղաքացիաիրավական ցանկացած գործարք, որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է բանկային գործունեություն իրականացնելու համար:

3.3. Բանկը չի կարող իրականացնել արտադրական, առևտրային և ապահովագրական գործունեություն, եթե բանկերի համար դրանք թույլատրված չեն օրենքով:

3.4. Բանկը ֆինանսական գործառնությունները կատարում է ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով:

3.5. Բանկն ինքն է որոշում ներգրավվող ավանդների, իր կողմից տրամադրվող վարկերի, սեփական արժեթղթերի տոկոսադրույքները և իր ծառայությունների միջնորդավճարների չափը:

3.6. Բանկի և Բանկում սպասարկվող անձանց միջև հարաբերությունները կարգավորվում են օրենքով և կողմերի միջև կնքված պայմանագրով:

3.7. Բանկը բացառում է Բանկում սպասարկվող անձանց, Բանկի ղեկավարների և աշխատողների միջև շահերի բախումը:

3.8. Բանկի հետ կապված անձանց հետ կնքվող գործարքները չեն կարող վերջիններիս համար առավել բարենպաստ պայմաններ նախատեսել, քան Բանկի աշխատակից չհամարվող այլ ֆիզիկական անձանց, ինչպես նաև իրավաբանական անձանց հետ կնքված նույնանման գործարքները:

4. Բանկի կանոնադրական կապիտալը, այլ հիմնադրամներ

4.1. Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 3.640.000.000 (Երեք միլիարդ վեց հարյուր քառասուն միլիոն) ՀՀ դրամ, որը կազմում է 728.000 (Յոթ հարյուր քսանութ հազար) հատ սովորական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 5.000 (Հինգ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:

4.2. Բանկը կարող է ավելացնել իր կանոնադրական կապիտալի չափը Բանկի բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ հայտարարված լրացուցիչ

բաժնետոմսեր տեղաբաշխելու միջոցով, եթե փաստացի տեղաբաշխված բաժնետոմսերն ամբողջությամբ վճարվել են:

4.3. Բանկը, իր գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո, կարող է շահույթի մի մասը ներդնել կանոնադրական կապիտալում՝ բաժնետերերին տեղաբաշխելով նոր բաժնետոմսեր կամ ավելացնելով տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքը:

4.4. Բանկի կանոնադրական կապիտալի ավելացման մասին որոշումն ընդունվում է Բանկի խորհրդի կողմից՝ միաձայն:

4.5. Բանկի փաստացի համալրված կանոնադրական կապիտալի նվազեցումը գործունեության ընթացքում՝ դրա հաշվին շահութաբաժիններ բաշխելու կամ այլ ձևով արգելվում է, բացառությամբ, երբ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն Բանկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք են ձեռք բերում Բանկից պահանջելու մասնակցության հետգնման գնի որոշում և իրենց պատկանող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի հետգնում՝ Կենտրոնական բանկի համաձայնությամբ:

4.6. Բանկի կողմից իր բաժնետոմսերը հետ գնելու դեպքում, կանոնադրական կապիտալի նվազեցման կամ տվյալ բաժնետոմսերի իրացման մասին որոշումն ընդունվում է Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի (այսուհետ՝ Ժողով) կողմից՝ դրան մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:

4.7. Բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից՝ ուղղակի կամ անուղղակի մասնակցության ձեռքբերումը կարող է կատարվել «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ:

4.8. Օֆշորային տարածքներում մշտական բնակության վայր ունեցող կամ գործունեություն ծավալող ֆիզիկական անձինք, ինչպես նաև այդ տարածքներում ստեղծված կամ գրանցված իրավաբանական, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող անձինք կամ նրանց հետ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով Բանկի կանոնադրական կապիտալում մասնակցություն (անկախ մասնակցության չափից) կարող են ձեռք բերել բացառապես Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ:

4.9. Բանկում ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ փաստացի համալրված կանոնադրական կապիտալի 15%-ի չափով, որն օգտագործվում է Բանկի կրած կորուստները (վնասները) ծածկելու, Բանկի թողարկած պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Բանկի շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:

Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

4.10. Պահուստային հիմնադրամը ձևավորվում է Բանկի շահույթից՝ մինչև սահմանված չափերին հասնելը: Եթե պահուստային հիմնադրամը կազմում է սույն կանոնադրության 4.9 կետով սահմանված չափից փոքր մեծություն, ապա մասհանումներն այդ հիմնադրամին կատարվում են շահույթի՝ առնվազն 5%-ի չափով:

4.11. Բանկն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ստեղծում է հիմնական միջոցների, արժեթղթերի, թանկարժեք մետաղների և արտարժույթի վերագնահատման, անհուսալի վարկերի և դեբիտորական պարտքերի դուրս գրման պահուստային և այլ, այդ թվում՝ աշխատակիցների բաժնետիրացման հատուկ հիմնադրամներ:

4.12. Բանկի հիմնադրամների ձևավորումն ու օգտագործումը, դրանց հատկացումների կարգը և չափերը որոշվում են Բանկի խորհրդի կողմից:

5. Բանկի բաժնետոմսերը

5.1. Բանկի բաժնետոմսերը բաժնետերերի միջև տեղաբաշխվում են բաց բաժանորդագրության ձևով: Թողարկված բաժնետոմսերի տեղաբաշխման գինը դրանց

անվանական արժեքն է կամ Բանկի խորհրդի կողմից որոշվող շուկայական արժեքը, որը չի կարող պակաս լինել այն գնից, որը հաշվարկվել է՝ Բանկի զուտ ակտիվների (հիմնական կապիտալի) արժեքը հիմք ընդունելով և չի կարող պակաս լինել անվանական արժեքից:

5.2. Բաժնետոմսերի ձեռքբերման դիմաց, որպես վճարման միջոց, կարող է հանդիսանալ միայն ՀՀ դրամը: Թողարկվող բաժնետոմսերը կարող են ձեռքբերվել նաև դրանք բաժնետոմսերի փոխարկվող պարտատոմսերով փոխարկելու միջոցով:

5.3. Բանկը չի կարող իր բաժնետոմսերը զեղչել, գնել կամ հատուցմամբ այլ կերպ ձեռք բերել, դրանք գրավ ընդունելով վարկ տալ, բացառությամբ օրենքով և սույն կանոնադրության 7.6 կետի ժա) ենթակետում նշված դեպքերի, ինչպես նաև այն դեպքերի, երբ Բանկի բաժնետոմսերը գրավ ընդունելը կամ ձեռք բերելն անհրաժեշտ է Բանկի նկատմամբ նախկինում ծագած պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով հնարավոր կորուստները կանխելու համար, ընդ որում, Բանկը պարտավոր է տվյալ բաժնետոմսերը սեփականության իրավունքով ձեռք բերելու պահից, օրենքով սահմանված ժամկետում, իրացնել դրանք:

5.4. Բանկն իրավունք ունի լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխել դրանց շուկայական արժեքից ցածր, եթե՝

ա) տեղաբաշխումն իրականացվում է Բանկի հասարակ (սովորական) բաժնետոմսեր ունեցող բոլոր բաժնետերերի կողմից նման բաժնետոմսեր ձեռք բերելու նախապատվության իրավունքն իրականացնելիս.

բ) բաժնետոմսերի տեղաբաշխման համար Բանկն օգտվում է տեղաբաշխողի (միջնորդի) ծառայություններից: Տեղաբաշխման գինն այս դեպքում կարող է շուկայական արժեքից ցածր լինել միայն տեղաբաշխողին (միջնորդին) վճարվող վարձատրության չափով, որը սահմանվում է որպես տոկոսադրույք՝ տեղաբաշխվող բաժնետոմսի գնի նկատմամբ:

5.5. Բանկի մեկ հասարակ (սովորական) բաժնետոմսը բաժնետիրոջը տալիս է ժողովում մեկ ձայնի իրավունք:

5.6. Բանկի բաժնետոմսերը ոչ փաստաթղթային ձևի բաժնետոմսեր են: Բանկի բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրը, որում նշվում են յուրաքանչյուր բաժնետիրոջ մասին տեղեկություններ, ինչպես նաև գրառվում են օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված տեղեկություններ, վարում է Կենտրոնական դեպոզիտարիան:

5.7. Բանկի բաժնետերերը պարտավոր են Բանկին և Կենտրոնական դեպոզիտարիային օրենսդրությամբ սահմանված կարգով հայտնել իրենց վերաբերյալ տվյալների փոփոխության մասին:

5.8. Բանկի բաժնետիրոջ պահանջով Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է հաստատել Բանկի բաժնետիրոջ սեփականության իրավունքը՝ բաժնետիրոջը ռեեստրից համապատասխան քաղվածք տրամադրելով:

6. Բանկի պարտատոմսերը և այլ արժեթղթերը

6.1. Բանկը կարող է թողարկել անվանական կամ ըստ ներկայացնողի պարտատոմսեր և օրենքով սահմանված այլ արժեթղթեր:

6.2. Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի թողարկումը կատարվում է Բանկի խորհրդի որոշմամբ, որով սահմանվում են արժեթղթի տեսակը, անվանական արժեքը, մարման ձևը, ժամկետները և մյուս պայմանները:

6.3. Բանկի կողմից թողարկված բոլոր ապահովված պարտատոմսերի անվանական արժեքների գումարը չի կարող գերազանցել Բանկի կանոնադրական կապիտալը կամ այն ապահովման գումարը, որը տրամադրված է Բանկին պարտատոմսեր թողարկելու համար:

6.4. Բանկի անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրը վարում է Բանկը՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

7. Բանկի բաժնետերերը

7.1. Բանկի բաժնետեր կարող են լինել Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ենթարկվելով օրենքով ու սույն կանոնադրության 4.7 և 4.8 կետերով բաժնետերերի համար նախատեսված սահմանափակումներին:

7.2. Բանկը պատասխանատվություն չի կրում իր բաժնետերերի պարտավորությունների համար, եթե այդպիսիք չի ստանձնել որպես երրորդ անձ կամ երաշխավոր:

7.3. Բանկի բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում Բանկի պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են Բանկի գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

7.4. Եթե Բանկի անվճարունակության (սնանկության) պատճառ է հանդիսանում բաժնետերերի կամ այլ անձանց գործունեությունը (անգործությունը), որոնք ունեն Բանկին կատարման համար պարտադիր ցուցումներ տալու իրավունք կամ Բանկի գործունեությունն այլ կերպ կանխորոշելու հնարավորություններ, ապա Բանկին պատկանող գույքը չբավարարելու դեպքում այդ բաժնետերերի կամ այլ անձանց վրա կարող է դրվել լրացուցիչ (սուբսիդիար) պատասխանատվություն՝ Բանկի պարտավորությունների համար:

Վերոհիշյալ բաժնետերերի կամ այլ անձանց գործողությունները (անգործությունը) համարվում են Բանկի անվճարունակության (սնանկության) պատճառ միայն այն դեպքում, եթե նրանք օգտագործել են իրենց այդ իրավունքը կամ հնարավորությունները Բանկին որոշակի գործողություններ կատարել կամ չկատարել պարտադրելու նպատակով, նախօրոք իմանալով, որ այդ պատճառով Բանկը կհայտնվի անվճարունակության (սնանկության) վիճակում:

7.5. Բանկի բաժնետերերն իրավունք ունեն Բանկի կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համամասնորեն նոր բաժնետոմսերի և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի ձեռք բերման նախապատվության իրավունք:

Բանկը դրամական վճարման ենթակա քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխումն սկսվելու օրվանից՝ 30 օր առաջ, ծանուցում է բաժնետերերին սահմանված նախապատվության իրավունքի՝ իրենց կողմից իրականացման հնարավորության մասին:

Բաժնետերն իրավունք ունի իրականացնել իր նախապատվության իրավունքը լրիվ ծավալով կամ մասնակիորեն՝ այդ մասին ծանուցելով Բանկին, քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխումը սկսելու օրվանից ոչ ուշ, քան մեկ օր առաջ:

7.6. Բանկի հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատեր բաժնետերն իրավունք ունի՝

ա) մասնակցել ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով.

բ) մասնակցել Բանկի կառավարմանը.

գ) ստանալ շահութաբաժիններ՝ Բանկի գործունեությունից առաջացած շահույթից.

դ) ստանալ Բանկի գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ Բանկի հաշվեկշռին, ֆինանսական և հարկային հաշվետվություններին.

ե) հանդես գալ առաջարկություններով ժողովներում և քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով.

զ) առաջնահերթ կարգով ձեռք բերել Բանկի կողմից թողարկվող և տեղաբաշխվող բաժնետոմսերը և այլ արժեթղթերը.

է) Բանկի սեփական միջոցների հաշվին, Բանկի կանոնադրական կապիտալի չափն ավելացնելիս, անվճար ստանալ համապատասխան քանակությամբ հասարակ (սովորական) բաժնետոմսեր.

ը) Բանկի լուծարման դեպքում, ստանալ Բանկի գույքի (միջոցների)՝ իրեն հասանելիք մասը.

թ) սույն կանոնադրությամբ և օրենքով սահմանված կարգով, օտարել կամ այլ ձևով այլ անձանց փոխանցել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերը.

ժ) դիմել դատարան՝ Ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին, սույն կանոնադրությանն ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով.

ժա) Բանկից պահանջել բաժնետոմսերի հետգնման գնի որոշում և իրեն պատկանող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի՝ Կենտրոնական բանկի համաձայնությամբ, հետգնում, եթե՝

- որոշում է ընդունվել Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու մասին, և նա քվեարկել է Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարքը կնքելու դեմ կամ այդ հարցերով քվեարկությանը չի մասնակցել.

- սույն կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ են կատարվել, կամ հաստատվել է կանոնադրությունը նոր խմբագրությամբ, որի հետևանքով սահմանափակվել են նրա իրավունքները, և նա դեմ է քվեարկել կամ քվեարկությանը չի մասնակցել.

ժբ) ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի.

ժգ) ունենալ օրենսդրությամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

7.7. Բանկի բաժնետերը պարտավոր է՝

ա) բաժնետոմսերի թողարկման որոշմամբ սահմանված ժամկետներում լրիվ վճարել իր բաժնետոմսերի արժեքը.

բ) չհրապարակել Բանկի հաճախորդների և Բանկի գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկությունները՝ բանկային գաղտնիքը.

գ) Բանկի ձայնի իրավունքով 10 և ավելի տոկոսի հասարակ (սովորական) բաժնետոմսերի տիրապետման դեպքում Բանկին հայտարարություն ներկայացնել իր հետ փոխկապակցված անձանց մասին.

դ) Բանկին հայտարարություն ներկայացնել այն մասին, որ իր մասնակցության միջոցով որևէ այլ անձ Բանկում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ ձեռք չի բերում, հակառակ դեպքում՝ ներկայացնել նաև անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձանց վերաբերյալ Կենտրոնական բանկի սահմանած փաստաթղթերը՝ նախնական համաձայնություն ստանալու համար.

ե) սեփականության իրավունքով իրեն պատկանող Բանկի բաժնետոմսերի կամ դրանց մասի օտարման կամ այլ անձանց փոխանցելու մտադրության մասին գրավոր հայտնել Բանկի խորհրդին.

զ) կատարել օրենքի, այլ իրավական ակտերի և սույն կանոնադրության պահանջները:

8. Բանկի շահույթի բաշխումը: Շահութաբաժինները

8.1. Տարեկան գործունեության արդյունքում, Բանկի ստացած համախառն եկամտի և օրենքով թույլատրված նվազեցումների դրական տարբերությունը՝ հարկվող շահույթը, ենթակա է հարկման՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության համաձայն:

8.2. Բանկի զուտ շահույթը որոշվում է որպես Բանկի ստացած համախառն եկամտի, կատարված բոլոր նվազեցումների և վճարված շահութահարկի դրական տարբերություն:

8.3. Զուտ շահույթից ձևավորվում են Բանկի պահուստային հիմնադրամը, սույն կանոնադրությամբ և Ժողովի կողմից սահմանված այլ հիմնադրամներն ու վճարվում են տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները:

8.4. Տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները վճարվում են զուտ շահույթից՝ ՀՀ դրամով, եռամսյակային և կիսամյակային՝ Բանկի խորհրդի որոշմամբ, տարեկան՝ Բանկի ժողովի որոշմամբ:

8.5. Տարեկան շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Ժողովը՝ Բանկի խորհրդի առաջարկությամբ, սահմանելով նաև վճարման ժամկետը:

8.6. Բանկն իրավունք չունի որոշում ընդունել (հայտարարել) տեղաբաշխված բաժնետոմսերով շահութաբաժինների վճարման մասին, եթե՝

ա) Բանկը հետ չի գնել բաժնետոմսերը սույն կանոնադրության 7.6 կետի ժա) ենթակետում նշված դեպքերում.

բ) շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ, Բանկի վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սնանկության) հայտանիշերին, կամ դրանք ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով.

գ) այդ պահին Բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են Բանկում առկա չբաշխված շահույթի գումարը:

9. Բանկի կառավարման մարմինները

9.1. Բանկի կառավարման մարմիններն են՝

- Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը (Ժողով).
- Բանկի խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ).
- Բանկի գործադիր մարմինը՝ Բանկի գործադիր տնօրեն վարչության նախագահը (այսուհետ՝ Գործադիր տնօրեն) և Բանկի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն), (Գործադիր տնօրեն և Վարչության անդամները համատեղ, այսուհետ՝ գործադիր մարմնի անդամներ):

10. Ժողովը: Իրավասությունները: Որոշումների ընդունումը

10.1. Ժողովը Բանկի կառավարման բարձրագույն մարմինն է:

10.2. Ժողովի բացառիկ իրավասություններն են՝

ա) Բանկի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, Բանկի կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.

բ) Բանկի վերակազմակերպումը.

գ) Բանկի լուծարումը.

դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.

ե) Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան Ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ Ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.

է) Խորհրդի ներկայացմամբ Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

ը) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը: Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.

թ) Ժողովի վարման կարգի հաստատումը.

ժ) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.

ժա) բաժնետոմսերի համախմբումն (կոնսոլիդացիա) ու բաժանումը.

ժբ) Խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը.

ժգ) օրենքով նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.

ժդ) Բանկի կողմից բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում.

ժե) խոշոր գործարք կնքելու մասին որոշման ընդունումը, որի առարկա է հանդիսանում Բանկի գույքը և որի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 50%-ից ավելին.

ժզ) գործարք և (կամ) փոխկապված գործարքներ կնքելու մասին որոշման ընդունումը, որի նպատակն է Բանկի քվեարկող բաժնետոմսերի կամ քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող այլ արժեթղթերի տեղաբաշխումը, որոնց քանակն ավելի է Բանկի՝ արդեն տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակի 2 տոկոսից, գործարք, որով վճարման ենթակա գումարը կամ գույքի շուկայական արժեքը գերազանցում են Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 2 տոկոսը և որոնցում առկա է շահագրգռվածություն, ինչպես նաև գործարք, որում շահագրգիռ են ճանաչվել Խորհրդի բոլոր անդամները.

ժէ) Բանկի կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.

ժը) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավասություններ:

10.3. Սույն կանոնադրության 10.2 կետում նշված իրավասությունները հանդիսանում են Ժողովի բացառիկ իրավասությունները և չեն կարող փոխանցվել Խորհրդին, ինչպես նաև Բանկի գործադիր մարմնին կամ այլ անձանց:

10.4. Ժողովի քննարկմանը չեն կարող դրվել օրենքով կամ սույն կանոնադրությամբ Ժողովի իրավասությանը չվերապահված հարցեր:

10.5. Բանկի տարեկան Ժողովը գումարվում է Խորհրդի որոշմամբ՝ Բանկի յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում:

Անհետաձգելի հարցերի քննարկման համար տարեկան Ժողովից բացի գումարվում են արտահերթ Ժողովներ:

Արտահերթ Ժողովը գումարվում է Խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, գործադիր մարմնի, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի, Կենտրոնական բանկի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Բանկի առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

10.6. Ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե Ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Բանկի բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին:

10.7. Ժողովին մասնակցելու իրավունք ունեն՝

ա) Բանկի հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերը՝ իրենց պատկանող ձայների քանակով, ինչպես նաև անվանատերերը, եթե նրանք ներկայացնում են իրենց կողմից ներկայացվող Բանկի բաժնետերերի անվանումները և նրանց պատկանող բաժնետոմսերի քանակը հիմնավորող փաստաթղթերը.

բ) Խորհրդի անդամները, գործադիր մարմնի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով.

գ) Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման անդամները՝ որպես դիտորդ.

դ) Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձը՝ որպես դիտորդ (եթե նրա եզրակացությունն առկա է Ժողովի օրակարգի հարցերում).

ե) Կենտրոնական բանկի ներկայացուցիչները՝ որպես դիտորդ.

զ) Բանկի մյուս ղեկավարները և աշխատողները՝ Խորհրդի որոշմամբ:

10.8. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող անձինք ծանուցվում են Ժողովի գումարման մասին՝ նրանց համապատասխան գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով:

Խորհրդի որոշմամբ, Բանկի ղեկավարների և աշխատողների Ժողովի գումարման մասին ծանուցումը կարող է կատարվել այլ ձևով:

Տարեկան Ժողովի գումարման մասին հայտարարությունը հրապարակվում է մամուլում և ինտերնետում՝ Բանկի տնային էջում:

10.9. Բաժնետերերին Ժողովի գումարման մասին ծանուցումը կատարվում է Ժողովի գումարման օրվանից առնվազն 10 օր առաջ:

10.10. Բանկի ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր բաժնետերը Բանկի ֆինանսական տարվա ավարտից հետո՝ 60 օրվա ընթացքում, իրավունք ունի երկուսից ոչ ավելի առաջարկություններ ներկայացնել տարեկան Ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել Խորհրդի անդամության թեկնածուներ:

Խորհուրդը քննարկում է ներկայացված առաջարկները և որոշում է ընդունում դրանք տարեկան Ժողովի օրակարգում ընդգրկելու կամ մերժելու մասին՝ սույն կետում նշված ժամկետը լրանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում:

10.11. Քվեարկությունը Ժողովում իրականացվում է «Բանկի մեկ քվերակող բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքով:

10.12. Սույն կանոնադրության 10.2 կետի բ), ժա), ժբ), ժգ), ժդ), ժե), ժզ) և ժէ) ենթակետերում նշված հարցերով որոշումները Ժողովն ընդունում է միայն Խորհրդի ներկայացմամբ:

10.13. Սույն կանոնադրության 10.2 կետի ա), բ), դ), զ) և ժե) ենթակետերում նշված հարցերով որոշումները Ժողովն ընդունում է դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով:

4.8. Օֆշորային տարածքներում մշտական բնակության վայր ունեցող կամ գործունեություն ծավալող ֆիզիկական անձինք, ինչպես նաև այդ տարածքներում ստեղծված կամ գրանցված իրավաբանական, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող անձինք կամ նրանց հետ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով Բանկի կանոնադրական կապիտալում մասնակցություն (անկախ մասնակցության չափից) կարող են ձեռք բերել բացառապես Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ:

4.9. Բանկում ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ փաստացի համալրված կանոնադրական կապիտալի 15%-ի չափով, որն օգտագործվում է Բանկի կրած կորուստները (վնասները) ծածկելու, Բանկի թողարկած պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Բանկի շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:

Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

4.10. Պահուստային հիմնադրամը ձևավորվում է Բանկի շահույթից՝ մինչև սահմանված չափերին հասնելը: Եթե պահուստային հիմնադրամը կազմում է սույն կանոնադրության 4.9 կետով սահմանված չափից փոքր մեծություն, ապա մասհանումներն այդ հիմնադրամին կատարվում են շահույթի՝ առնվազն 5%-ի չափով:

4.11. Բանկն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ստեղծում է հիմնական միջոցների, արժեթղթերի, թանկարժեք մետաղների և արտարժույթի վերագնահատման, անհուսալի վարկերի և դեբիտորական պարտքերի դուրս գրման

պահուստային և այլ, այդ թվում՝ աշխատակիցների բաժնետիրացման հատուկ հիմնադրամներ:

4.12. Բանկի հիմնադրամների ձևավորումն ու օգտագործումը, դրանց հատկացումների կարգը և չափերը որոշվում են Բանկի խորհրդի կողմից:

5. Բանկի բաժնետոմսերը

5.1. Բանկի բաժնետոմսերը բաժնետերերի միջև տեղաբաշխվում են բաց բաժանորդագրության ձևով: Թողարկված բաժնետոմսերի տեղաբաշխման գինը դրանց անվանական արժեքն է կամ Բանկի խորհրդի կողմից որոշվող շուկայական արժեքը, որը չի կարող պակաս լինել այն գնից, որը հաշվարկվել է՝ Բանկի զուտ ակտիվների (հիմնական կապիտալի) արժեքը հիմք ընդունելով և չի կարող պակաս լինել անվանական արժեքից:

5.2. Բաժնետոմսերի ձեռքբերման դիմաց, որպես վճարման միջոց, կարող է հանդիսանալ միայն ՀՀ դրամը: Թողարկվող բաժնետոմսերը կարող են ձեռքբերվել նաև դրանք բաժնետոմսերի փոխարկվող պարտատոմսերով փոխարկելու միջոցով:

5.3. Բանկը չի կարող իր բաժնետոմսերը զեղչել, գնել կամ հատուցմամբ այլ կերպ ձեռք բերել, դրանք գրավ ընդունելով վարկ տալ, բացառությամբ օրենքով և սույն կանոնադրության 7.6 կետի ժա) ենթակետում նշված դեպքերի, ինչպես նաև այն դեպքերի, երբ Բանկի բաժնետոմսերը գրավ ընդունելը կամ ձեռք բերելն անհրաժեշտ է Բանկի նկատմամբ նախկինում ծագած պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով հնարավոր կորուստները կանխելու համար, ընդ որում, Բանկը պարտավոր է տվյալ բաժնետոմսերը սեփականության իրավունքով ձեռք բերելու պահից, օրենքով սահմանված ժամկետում, իրացնել դրանք:

5.4. Բանկն իրավունք ունի լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխել դրանց շուկայական արժեքից ցածր, եթե՝

ա) տեղաբաշխումն իրականացվում է Բանկի հասարակ (սովորական) բաժնետոմսեր ունեցող բոլոր բաժնետերերի կողմից նման բաժնետոմսեր ձեռք բերելու նախապատվության իրավունքն իրականացնելիս.

բ) բաժնետոմսերի տեղաբաշխման համար Բանկն օգտվում է տեղաբաշխողի (միջնորդի) ծառայություններից: Տեղաբաշխման գինն այս դեպքում կարող է շուկայական արժեքից ցածր լինել միայն տեղաբաշխողին (միջնորդին) վճարվող վարձատրության չափով, որը սահմանվում է որպես տոկոսադրույք՝ տեղաբաշխվող բաժնետոմսի գնի նկատմամբ:

5.5. Բանկի մեկ հասարակ (սովորական) բաժնետոմսը բաժնետիրոջը տալիս է ժողովում մեկ ձայնի իրավունք:

5.6. Բանկի բաժնետոմսերը ոչ փաստաթղթային ձևի բաժնետոմսեր են: Բանկի բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրը, որում նշվում են յուրաքանչյուր բաժնետիրոջ մասին տեղեկություններ, ինչպես նաև գրառվում են օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված տեղեկություններ, վարում է Կենտրոնական դեպոզիտարիան:

5.7. Բանկի բաժնետերերը պարտավոր են Բանկին և Կենտրոնական դեպոզիտարիային օրենսդրությամբ սահմանված կարգով հայտնել իրենց վերաբերյալ տվյալների փոփոխության մասին:

5.8. Բանկի բաժնետիրոջ պահանջով Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է հաստատել Բանկի բաժնետիրոջ սեփականության իրավունքը՝ բաժնետիրոջը ռեեստրից համապատասխան քաղվածք տրամադրելով:

6. Բանկի պարտատոմսերը և այլ արժեթղթերը

6.1. Բանկը կարող է թողարկել անվանական կամ ըստ ներկայացնողի պարտատոմսեր և օրենքով սահմանված այլ արժեթղթեր:

6.2. Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի թողարկումը կատարվում է Բանկի խորհրդի որոշմամբ, որով սահմանվում են արժեթղթի տեսակը, անվանական արժեքը, մարման ձևը, ժամկետները և մյուս պայմանները:

6.3. Բանկի կողմից թողարկված բոլոր ապահովված պարտատոմսերի անվանական արժեքների գումարը չի կարող գերազանցել Բանկի կանոնադրական կապիտալը կամ այն ապահովման գումարը, որը տրամադրված է Բանկին պարտատոմսեր թողարկելու համար:

6.4. Բանկի անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրը վարում է Բանկը՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

7. Բանկի բաժնետերերը

7.1. Բանկի բաժնետեր կարող են լինել Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ենթարկվելով օրենքով ու սույն կանոնադրության 4.7 և 4.8 կետերով բաժնետերերի համար նախատեսված սահմանափակումներին:

7.2. Բանկը պատասխանատվություն չի կրում իր բաժնետերերի պարտավորությունների համար, եթե այդպիսիք չի ստանձնել որպես երրորդ անձ կամ երաշխավոր:

7.3. Բանկի բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում Բանկի պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են Բանկի գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

7.4. Եթե Բանկի անվճարունակության (սնանկության) պատճառ է հանդիսանում բաժնետերերի կամ այլ անձանց գործունեությունը (անգործությունը), որոնք ունեն Բանկին կատարման համար պարտադիր ցուցումներ տալու իրավունք կամ Բանկի գործունեությունն այլ կերպ կանխորոշելու հնարավորություններ, ապա Բանկին պատկանող գույքը չբավարարելու դեպքում այդ բաժնետերերի կամ այլ անձանց վրա կարող է դրվել լրացուցիչ (սուբսիդիար) պատասխանատվություն՝ Բանկի պարտավորությունների համար:

Վերոհիշյալ բաժնետերերի կամ այլ անձանց գործողությունները (անգործությունը) համարվում են Բանկի անվճարունակության (սնանկության) պատճառ միայն այն դեպքում, եթե նրանք օգտագործել են իրենց այդ իրավունքը կամ հնարավորությունները Բանկին որոշակի գործողություններ կատարել կամ չկատարել պարտադրելու նպատակով, նախօրոք իմանալով, որ այդ պատճառով Բանկը կհայտնվի անվճարունակության (սնանկության) վիճակում:

7.5. Բանկի բաժնետերերն իրավունք ունեն Բանկի կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համամասնորեն նոր բաժնետոմսերի և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի ձեռք բերման նախապատվության իրավունք:

Բանկը դրամական վճարման ենթակա քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխումն սկսվելու օրվանից՝ 30 օր առաջ, ծանուցում է բաժնետերերին սահմանված նախապատվության իրավունքի՝ իրենց կողմից իրականացման հնարավորության մասին:

Բաժնետերն իրավունք ունի իրականացնել իր նախապատվության իրավունքը լրիվ ծավալով կամ մասնակիորեն՝ այդ մասին ծանուցելով Բանկին, քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխումը սկսելու օրվանից ոչ ուշ, քան մեկ օր առաջ:

7.6. Բանկի հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատեր բաժնետերն իրավունք ունի՝

ա) մասնակցել Ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով.

բ) մասնակցել Բանկի կառավարմանը.

գ) ստանալ շահութաբաժիններ՝ Բանկի գործունեությունից առաջացած շահույթից.

դ) ստանալ Բանկի գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ Բանկի հաշվեկշռին, ֆինանսական և հարկային հաշվետվություններին.

ե) հանդես գալ առաջարկություններով ժողովներում և քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով.

զ) առաջնահերթ կարգով ձեռք բերել Բանկի կողմից թողարկվող և տեղաբաշխվող բաժնետոմսերը և այլ արժեթղթերը.

է) Բանկի սեփական միջոցների հաշվին, Բանկի կանոնադրական կապիտալի չափն ավելացնելիս, անվճար ստանալ համապատասխան քանակությամբ հասարակ (սովորական) բաժնետոմսեր.

ը) Բանկի լուծարման դեպքում, ստանալ Բանկի գույքի (միջոցների)՝ իրեն հասանելիք մասը.

թ) սույն կանոնադրությամբ և օրենքով սահմանված կարգով, օտարել կամ այլ ձևով այլ անձանց փոխանցել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերը.

ժ) դիմել դատարան՝ Ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին, սույն կանոնադրությանն ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով.

ժա) Բանկից պահանջել բաժնետոմսերի հետգնման գնի որոշում և իրեն պատկանող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի՝ Կենտրոնական բանկի համաձայնությամբ, հետգնում, եթե՝

- որոշում է ընդունվել Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու մասին, և նա քվեարկել է Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարքը կնքելու դեմ կամ այդ հարցերով քվեարկությանը չի մասնակցել.

- սույն կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ են կատարվել, կամ հաստատվել է կանոնադրությունը նոր խմբագրությամբ, որի հետևանքով սահմանափակվել են նրա իրավունքները, և նա դեմ է քվեարկել կամ քվեարկությանը չի մասնակցել.

ժբ) ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի.

ժգ) ունենալ օրենսդրությամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

7.7. Բանկի բաժնետերը պարտավոր է՝

ա) բաժնետոմսերի թողարկման որոշմամբ սահմանված ժամկետներում լրիվ վճարել իր բաժնետոմսերի արժեքը.

բ) չհրապարակել Բանկի հաճախորդների և Բանկի գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկությունները՝ բանկային գաղտնիքը.

գ) Բանկի ձայնի իրավունքով 10 և ավելի տոկոսի հասարակ (սովորական) բաժնետոմսերի տիրապետման դեպքում Բանկին հայտարարություն ներկայացնել իր հետ փոխկապակցված անձանց մասին.

դ) Բանկին հայտարարություն ներկայացնել այն մասին, որ իր մասնակցության միջոցով որևէ այլ անձ Բանկում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ ձեռք չի բերում, հակառակ դեպքում՝ ներկայացնել նաև անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձանց վերաբերյալ Կենտրոնական բանկի սահմանած փաստաթղթերը՝ նախնական համաձայնություն ստանալու համար.

ե) սեփականության իրավունքով իրեն պատկանող Բանկի բաժնետոմսերի կամ դրանց մասի օտարման կամ այլ անձանց փոխանցելու մտադրության մասին գրավոր հայտնել Բանկի խորհրդին.

զ) կատարել օրենքի, այլ իրավական ակտերի և սույն կանոնադրության պահանջները:

8. Բանկի շահույթի բաշխումը: Շահութաբաժինները

8.1. Տարեկան գործունեության արդյունքում, Բանկի ստացած համախառն եկամտի և օրենքով թույլատրված նվազեցումների դրական տարբերությունը՝ հարկվող շահույթը, ենթակա է հարկման՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության համաձայն:

8.2. Բանկի զուտ շահույթը որոշվում է որպես Բանկի ստացած համախառն եկամտի, կատարված բոլոր նվազեցումների և վճարված շահութահարկի դրական տարբերություն:

8.3. Զուտ շահույթից ձևավորվում են Բանկի պահուստային հիմնադրամը, սույն կանոնադրությամբ և Ժողովի կողմից սահմանված այլ հիմնադրամներն ու վճարվում են տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները:

8.4. Տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները վճարվում են զուտ շահույթից՝ ՀՀ դրամով, եռամսյակային և կիսամյակային՝ Բանկի խորհրդի որոշմամբ, տարեկան՝ Բանկի ժողովի որոշմամբ:

8.5. Տարեկան շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Ժողովը՝ Բանկի խորհրդի առաջարկությամբ, սահմանելով նաև վճարման ժամկետը:

8.6. Բանկն իրավունք չունի որոշում ընդունել (հայտարարել) տեղաբաշխված բաժնետոմսերով շահութաբաժինների վճարման մասին, եթե՝

ա) Բանկը հետ չի գնել բաժնետոմսերը սույն կանոնադրության 7.6 կետի ժա) ենթակետում նշված դեպքերում.

բ) շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ, Բանկի վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սնանկության) հայտանիշերին, կամ դրանք ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով.

գ) այդ պահին Բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են Բանկում առկա չբաշխված շահույթի գումարը:

9. Բանկի կառավարման մարմինները

9.1. Բանկի կառավարման մարմիններն են՝

- Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը (Ժողով).
- Բանկի խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ).
- Բանկի գործադիր մարմինը՝ Բանկի գործադիր տնօրեն վարչության նախագահը (այսուհետ՝ Գործադիր տնօրեն) և Բանկի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն), (Գործադիր տնօրեն և Վարչության անդամները համատեղ, այսուհետ՝ գործադիր մարմնի անդամներ):

10. Ժողովը: Իրավասությունները: Որոշումների ընդունումը

10.1. Ժողովը Բանկի կառավարման բարձրագույն մարմինն է:

10.2. Ժողովի բացառիկ իրավասություններն են՝

ա) Բանկի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, Բանկի կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.

բ) Բանկի վերակազմակերպումը.

գ) Բանկի լուծարումը.

դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.

ե) Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան Ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ Ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.

է) Խորհրդի ներկայացմամբ Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

ը) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը: Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.

թ) Ժողովի վարման կարգի հաստատումը.

ժ) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.

ժա) բաժնետոմսերի համախմբումն (կոնսոլիդացիա) ու բաժանումը.

ժբ) Խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը.

ժգ) օրենքով նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.

ժդ) Բանկի կողմից բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում.

ժե) խոշոր գործարք կնքելու մասին որոշման ընդունումը, որի առարկա է հանդիսանում Բանկի գույքը և որի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 50%-ից ավելին.

ժզ) գործարք և (կամ) փոխկապված գործարքներ կնքելու մասին որոշման ընդունումը, որի նպատակն է Բանկի քվեարկող բաժնետոմսերի կամ քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող այլ արժեթղթերի տեղաբաշխումը, որոնց քանակն ավելի է Բանկի՝ արդեն տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակի 2 տոկոսից, գործարք, որով վճարման ենթակա գումարը կամ գույքի շուկայական արժեքը գերազանցում են Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 2 տոկոսը և որոնցում առկա է շահագրգռվածություն, ինչպես նաև գործարք, որում շահագրգիռ են ճանաչվել Խորհրդի բոլոր անդամները.

ժէ) Բանկի կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.

ժը) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավասություններ:

10.3. Սույն կանոնադրության 10.2 կետում նշված իրավասությունները հանդիսանում են Ժողովի բացառիկ իրավասությունները և չեն կարող փոխանցվել Խորհրդին, ինչպես նաև Բանկի գործադիր մարմնին կամ այլ անձանց:

10.4. Ժողովի քննարկմանը չեն կարող դրվել օրենքով կամ սույն կանոնադրությամբ Ժողովի իրավասությանը չվերապահված հարցեր:

10.5. Բանկի տարեկան Ժողովը գումարվում է Խորհրդի որոշմամբ՝ Բանկի յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում:

Անհետաձգելի հարցերի քննարկման համար տարեկան Ժողովից բացի գումարվում են արտահերթ Ժողովներ:

Արտահերթ Ժողովը գումարվում է Խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, գործադիր մարմնի, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի, Կենտրոնական բանկի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Բանկի առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

10.6. Ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե Ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Բանկի բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին:

10.7. Ժողովին մասնակցելու իրավունք ունեն՝

ա) Բանկի հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերը՝ իրենց պատկանող ձայների քանակով, ինչպես նաև անվանատերերը, եթե նրանք ներկայացնում են իրենց կողմից ներկայացվող Բանկի բաժնետերերի անվանումները և նրանց պատկանող բաժնետոմսերի քանակը հիմնավորող փաստաթղթերը.

բ) Խորհրդի անդամները, գործադիր մարմնի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով.

գ) Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման անդամները՝ որպես դիտորդ.

դ) Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձը՝ որպես դիտորդ (եթե նրա եզրակացությունն առկա է Ժողովի օրակարգի հարցերում).

ե) Կենտրոնական բանկի ներկայացուցիչները՝ որպես դիտորդ.

զ) Բանկի մյուս ղեկավարները և աշխատողները՝ Խորհրդի որոշմամբ:

10.8. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող անձինք ծանուցվում են Ժողովի գումարման մասին՝ նրանց համապատասխան գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով:

Խորհրդի որոշմամբ, Բանկի ղեկավարների և աշխատողների Ժողովի գումարման մասին ծանուցումը կարող է կատարվել այլ ձևով:

Տարեկան Ժողովի գումարման մասին հայտարարությունը հրապարակվում է մամուլում և ինտերնետում՝ Բանկի տնային էջում:

10.9. Բաժնետերերին Ժողովի գումարման մասին ծանուցումը կատարվում է Ժողովի գումարման օրվանից առնվազն 10 օր առաջ:

10.10. Բանկի ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր բաժնետերը Բանկի ֆինանսական տարվա ավարտից հետո՝ 60 օրվա ընթացքում, իրավունք ունի երկուսից ոչ ավելի առաջարկություններ ներկայացնել տարեկան Ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել Խորհրդի անդամության թեկնածուներ:

Խորհուրդը քննարկում է ներկայացված առաջարկները և որոշում է ընդունում դրանք տարեկան Ժողովի օրակարգում ընդգրկելու կամ մերժելու մասին՝ սույն կետում նշված ժամկետը լրանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում:

10.11. Քվեարկությունը Ժողովում իրականացվում է «Բանկի մեկ քվերակող բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքով:

10.12. Սույն կանոնադրության 10.2 կետի բ), ժա), ժբ), ժգ), ժդ), ժե), ժզ) և ժէ) ենթակետերում նշված հարցերով որոշումները Ժողովն ընդունում է միայն Խորհրդի ներկայացմամբ:

10.13. Սույն կանոնադրության 10.2 կետի ա), բ), դ), զ) և ժե) ենթակետերում նշված հարցերով որոշումները Ժողովն ընդունում է դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով:

10.14. Սույն կանոնադրության 10.2 կետի գ) և ժդ) ենթակետերում նշված հարցերով որոշումները Ժողովն ընդունում է դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:

10.15. Սույն կանոնադրության 10.13 և 10.14 կետերում չնշված հարցերով որոշումները Ժողովն ընդունում է դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ:

10.16. Սույն կանոնադրության 10.2 կետի բ), գ) և ը) ենթակետերում նշված հարցերի վերաբերյալ որոշումները չեն կարող ընդունվել հեռակա քվեարկության (հարցման) միջոցով:

10.17. Ժողովի արձանագրությունը կազմվում է Ժողովի ավարտից 5 օրվա ընթացքում՝ երկու օրինակից, որոնք ստորագրում են Ժողովի նախագահը և քարտուղարը: Ժողովի նախագահը պատասխանատվություն է կրում Ժողովի արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

10.18. Ժողովի վարման կարգի (ներառյալ՝ հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով ընդունվող որոշումները) մասին որոշումներ ընդունելու կարգը սահմանվում է Ժողովի հաստատած ներքին փաստաթղթերով:

11. Խորհուրդը

11.1. Խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ օրենքով և սույն կանոնադրությամբ Խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում:

11.2. Խորհուրդը կազմվում է առնվազն 5, առավելագույնը՝ 15 անդամից, որը սահմանվում է Ժողովի որոշմամբ:

11.3. Խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան Ժողովում՝ Բանկի ներկա բաժնետերերի կողմից, իսկ Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ արտահերթ Ժողովում Բանկի ներկա բաժնետերերի կողմից՝ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

11.4. Ժողովին՝ Խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ կարող են ներկայացնել Բանկի բաժնետերերը, ինչպես նաև Խորհուրդը:

11.5. Բանկի այն բաժնետերերը, որոնք Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվելու Խորհրդի կազմում կամ դրանում նշանակելու իրենց ներկայացուցչին:

11.6. Բանկի այն բաժնետերերը, որոնք Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի մինչև 10 տոկոսին, կարող են, օրենքով սահմանված կարգով, բաժնետերերի խումբ ստեղծելու մասին պայմանագիր կնքելով, միավորել և Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսը համալրելու դեպքում առանց Ժողովի կողմից ընտրության ընդգրկել իրենց ներկայացուցչին Խորհրդի կազմում:

11.7. Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 տոկոսից պակասին տիրապետող բաժնետերը, որը չի կնքել սույն կանոնադրության 11.6 կետում նշված բաժնետերերի խումբ ստեղծելու մասին պայմանագիրը (Բանկի կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող բաժնետերեր) իրավունք ունի իր շահերը ներկայացնող ներկայացուցչին ընդգրկելու Խորհրդի կազմում՝ առանց Ժողովի կողմից ընտրության:

Բանկի կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի, թեկուզև նրանց թիվը կազմի մեկ, շահերը ներկայացնող ներկայացուցչի ընդգրկումը Խորհրդում, իրականացվում է օրենքով սահմանված կարգով Ժողովի կողմից հաստատված ներքին փաստաթղթի համաձայն:

11.8. Խորհրդի անդամ կարող է լինել Հայաստանի Հանրապետության քաղաքացի կամ օտարերկրյա պետության քաղաքացի հանդիսացող այն անձը, որի տվյալները բավարարում են Հայաստանի Հանրապետության օրենքներով և Կենտրոնական բանկի իրավական ակտերով սահմանված պահանջներին:

11.9. Խորհրդի անդամները չպետք է միմյանց հետ փոխկապակցված լինեն: Խորհրդի անդամները և գործադիր մարմնի անդամները չեն կարող լինել միմյանց հետ փոխկապակցված անձինք: Խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետը 5 տարի է: Խորհրդի անդամի պաշտոնում վերընտրվելը չի սահմանափակվում:

11.10. Խորհրդի անդամի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու հիմք է հանդիսանում Ժողովի որոշումը: Աշխատանքային պայմանագիրը Բանկի անունից ստորագրում է Ժողովի նախագահը:

11.11. Խորհուրդն իր աշխատանքն արդյունավետ կազմակերպելու նպատակով կարող է ստեղծել հանձնաժողովներ: Խորհրդին կից հանձնաժողովներում կարող են ընդգրկվել Խորհրդի անդամները և Բանկի այլ ղեկավարներ կամ աշխատողներ: Խորհրդին կից հանձնաժողովների որոշումներն ունեն խորհրդակցական բնույթ:

11.12. Խորհրդի անդամները, ինչպես նաև Խորհրդի անդամների թեկնածուները Բանկի բաժնետերերի համար բացահայտում են իրենց գործնական որակների, բիզնես վարկի, փոխկապակցվածության և օրենքով ու սույն կանոնադրությամբ սահմանված այլ տեղեկատվություն:

11.13. Խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի կողմից՝ Խորհրդի անդամների կազմից:

Խորհրդի նախագահը՝

ա) կազմակերպում է Խորհրդի աշխատանքները.

բ) գումարում և նախագահում է Խորհրդի նիստերը.

գ) կազմակերպում է Խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը.

դ) նախագահում է Ժողովում.

ե) Բանկի անունից ստորագրում է Բանկի գործադիր տնօրենի և Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի հետ աշխատանքային պայմանագրերը:

11.14. Խորհրդի նախագահի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում, նրա պարտականությունները Խորհրդի որոշմամբ կատարում է Խորհրդի անդամներից մեկը: Խորհրդի նիստերը հրավիրվում են առնվազն երկու ամիսը մեկ:

11.15. Խորհրդի նիստերը գումարում է Խորհրդի նախագահը՝ իր, Խորհրդի անդամի, Գործադիր տնօրենի, Վարչության, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի, Կենտրոնական բանկի խորհրդի, ինչպես նաև Բանկի քվեարկող բաժնետոմսերի 5 կամ ավելի տոկոս ունեցող բաժնետիրոջ (բաժնետերերի) գրավոր պահանջով:

11.16. Խորհրդի նիստերի ներառյալ՝ հեռակա (հարցման), գումարման և անցկացման կարգը սահմանվում է Ժողովի կողմից հաստատված Խորհրդի կանոնակարգով:

11.17. Խորհրդի նիստն իրավասու է (քվորում ունի), եթե Խորհրդի նիստին մասնակցում են Խորհրդի անդամների կեսը:

Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա Խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե սույն կանոնադրությամբ ձայների ավելի մեծ քանակ նախատեսված չէ: Ձայների և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ Խորհրդի այլ անդամի) չի թույլատրվում, ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է, ընդ որում՝ Խորհրդի նախագահը պարտավոր է իր կարծիքը հայտնել վերջինը:

11.18. Խորհրդի նիստերի բոլոր հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն Գործադիր տնօրենի պարտադիր մասնակցությամբ, բացառությամբ Գործադիր տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների հաստատման հարցերի: Գործադիր տնօրենը մասնակցում է Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

11.19. Խորհրդի նիստերին հրավիրվում է Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը: Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը մասնակցում է Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

Սույն կանոնադրության 12.1 կետի գ) ենթակետով նախատեսված հարցերի քննարկմանը Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը կարող է չհրավիրվել:

11.20. Խորհրդի նիստերին այլ անձանց մասնակցության իրավունքը որոշում է Խորհրդի նախագահը՝ ըստ անհրաժեշտության:

11.21. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստից հետո 5-օրյա ժամկետում:

Խորհրդի նիստի արձանագրությունը կազմվում է պատշաճ մանրամասնությամբ: Խորհրդի նիստի արձանագրությունն ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների ճշտության և հավաստիության համար:

11.22. Խորհրդի նիստերը վարում է Խորհրդի նախագահը, որն ստորագրում է նիստի որոշումները: Խորհրդի նախագահը պատասխանատվություն է կրում որոշման մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:

12. Խորհրդի իրավասությունները

12.1. Խորհրդի իրավասություններն են՝

ա) Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը.

բ) Ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը.

գ) Բանկի գործադիր մարմնի անդամների նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.

դ) Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատողների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.

ե) Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը.

զ) Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.

է) Բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացումը.

ը) շահութաբաժինների վճարման վերաբերյալ Ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակի կազմումը, որում պետք է ընգրկվեն Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի տարեկան Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ.

թ) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և Ժողովին ներկայացումը.

ժ) Ժողովի հաստատմանը Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը.

ժա) Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը.

ժբ) Բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում, անհրաժեշտության դեպքում՝ բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը.

ժգ) Բանկի կողմից օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը.

ժդ) Բանկի առանձնացված և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների ու կանոնակարգերի հաստատումը, Բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառութային պարտականությունների բաշխումը.

ժե) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը և (կամ) դրանց մասնակցությունը.

ժզ) առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը և (կամ) դրանց մասնակցությունը.

ժէ) սույն կանոնադրության 10.12 կետում նշված հարցերի ներկայացումը Ժողովին.

ժը) Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը.

ժթ) Բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

ի) Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը.

իա) Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների և կարգերի սահմանումը.

իբ) խոշոր գործարք կնքելու մասին որոշման ընդունումը, որի առարկա է հանդիսանում Բանկի գույքը և որի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից 50 տոկոսը.

իգ) շահագրգռվածության առկայության դեպքում գործարքներ կնքելու մասին որոշման ընդունումը.

իդ) Բանկի գույքի շուկայական արժեքի որոշումը: Բանկի պարտապանի պարտավորության վրա տոկոսների և տույժերի հաշվարկի դադարեցման, պարտքերի զեղչման, կամ ներման մասին որոշումների ընդունումը.

իե) Բանկի առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների ցանկի հաստատումը.

իզ) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

12.2. Սույն կանոնադրության 12.1 կետում նշված հարցերով որոշումների ընդունումը վերապահված է Խորհրդի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Գործադիր մարմնին կամ այլ անձանց:

12.3. Սույն կանոնադրության 12.1 կետի իբ) ենթակետում նշված հարցերի մասին որոշումը Խորհուրդը պետք է ընդունի միաձայն կամ հարցի քննարկումը կարող է ներկայացնել Ժողովին:

12.4. Սույն կանոնադրության 12.1 կետի իգ) ենթակետում նշված հարցերի մասին որոշումն ընդունում է Խորհուրդը՝ գործարքը կնքելու մեջ շահագրգռվածություն չունեցող Խորհրդի անդամների մեծամասնությամբ:

12.5. Առնվազն տարին մեկ անգամ, Խորհուրդն իր նիստում քննարկում է Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը), ինչպես նաև քննարկում և անհրաժեշտության դեպքում՝ վերանայում է Բանկի գործունեության հիմնական ուղղությունները, ռազմավարությունը, կարգերն ու ներքին իրավական այլ ակտերը:

Առնվազն եռամսյակը մեկ անգամ, Խորհուրդն իր նիստում քննարկում է Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման, Գործադիր տնօրենի և Բանկի գլխավոր հաշվապահի հաշվետվությունները՝ իր սահմանած կարգով և ձևով:

12.6. Բանկի Գործադիր տնօրենի հաշվետվությունը պետք է առնվազն ներառի Բանկի, այդ թվում՝ առանձնացված ստորաբաժանումների, ֆինանսատնտեսական գործունեության ծրագրերի, Ժողովի և Խորհրդի կողմից տրված հանձնարարականների կատարման, Բանկի հիմնական տնտեսական նորմատիվների պահպանման Բանկի առաքելության իրականացման, այլ գործառույթների ու ցուցանիշների կատարման գնահատականը:

12.7. Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման հաշվետվությունը պետք է առնվազն ներառի սույն կանոնադրության 16.3 կետում նշված հաշվետվությունները, ինչպես նաև ընթացիկ գործունեության և գործառնական ռիսկերի կառավարման, օրենքների, այլ իրավական ակտերի ու Բանկի ներքին ակտերի, Խորհրդի կողմից Բանկի գործադիր մարմնին տրված հանձնարարականների և Բանկի ներքին հսկողության համակարգի գնահատականները:

12.8. Բանկի գլխավոր հաշվապահի հաշվետվությունը պետք է առնվազն ներառի Բանկի հաշվապահական հաշվառման վարման վիճակի և հավաստիության, միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունների և վիճակագրական հաշվետվությունների ներկայացման, ինչպես նաև Բանկի մասին տեղեկատվության հրապարակման հավաստիության գնահատականը:

13. Խորհրդի անդամի լիազորությունների դադարման հիմքերը

13.1. Ժողովի կողմից Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն կամ եթե՝

ա) նա դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

բ) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել բանկի խորհրդի անդամ (բանկի ղեկավար).

գ) նա մեկ տարվա ընթացքում բացակայել է Խորհրդի նիստերի առնվազն 1/4-ից անհարգելի պատճառներով կամ ընդհանուր առմամբ (ներառյալ հարգելի և անհարգելի բացակայությունները) նիստերի առնվազն կեսից: Սույն ենթակետի իմաստով իրական ժամանակի ռեժիմով և հեռակա (հարցմամբ) մասնակցությունը համարվում է լիարժեք մասնակցություն.

դ) նա օրենքով սահմանված կարգով որակազրկվել է կամ զրկվել է որոշակի պաշտոն վարելու իրավունքից:

13.2. Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել նաև լիազորությունների մնացած ժամանակահատվածի, իսկ եթե այդ ժամանակահատվածը մեկ տարուց ավելի է, ապա մեկ տարվա համար սահմանված աշխատավարձը Բանկի կողմից նրան փոխհատուցելու պայմանով:

Բանկն իրավունք ունի Խորհրդի անդամի պաշտոնից ազատված անձից դատական կարգով հետ պահանջելու սույն կետի առաջին պարբերությամբ նրան փոխհատուցված աշխատավարձը՝ դատարանում ապացուցելով Խորհրդի անդամի կողմից պաշտոնեական պարտականությունների թերացման փաստը:

14. Գործադիր մարմինը

14.1. Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Բանկի գործադիր մարմինը՝ Բանկի Վարչությունը և Գործադիր տնօրենը: Գործադիր տնօրեն, նրա տեղակալ, Վարչության անդամ չի կարող լինել այն անձը, որը չի համապատասխանում Կենտրոնական բանկի որակավորման համապատասխանության չափանիշներին և (կամ) որին օրենքով արգելված է լինել բանկի ղեկավար:

Վարչության կազմը ձևավորվում է Խորհրդի որոշմամբ:

Վարչության կազմում պարտադիր ընդգրկվում են Գործադիր տնօրենը, նրա տեղակալները, գլխավոր հաշվապահը, Բանկի ռազմավարության, մեթոդոլոգիայի և ռիսկերի գնահատման, վարկավորման, իրավաբանական ստորաբաժանումների ղեկավարները, ինչպես նաև, Խորհրդի որոշմամբ, այլ ստորաբաժանումների ղեկավարներ:

14.2. Բանկի Վարչությունը գործում է սույն կանոնադրության, ինչպես նաև Խորհրդի կողմից հաստատված՝ Վարչության կանոնակարգի հիման վրա, որը սահմանում է Բանկի Վարչության նիստերի հրավիրման ու անցկացման ժամկետներն ու կարգը, ինչպես նաև նրա կողմից որոշումների ընդունման կարգը:

14.3. Բանկի Վարչությունը՝

ա/ սահմանում է Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագները, վարկերի, ավանդների և այլ տոկոսադրույքները.

բ) հաստատում է Բանկի աշխատատեղերը, աշխատանքի խթանման և խրախուսման պայմանները.

գ) քննարկում է սույն կանոնադրության 14.9 կետի ա), զ), թ), ժգ), ժդ) ենթակետերով նախատեսված հարցերը, որոշումներ է ընդունում դրանց վերաբերյալ.

դ) քննարկում և որոշումներ է ընդունում վերստուգումների, ստուգումների, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունների վերաբերյալ.

ե) քննարկում և որոշումներ է ընդունում Բանկի գույքի օտարման գործարքների վերաբերյալ.

զ) քննարկում և որոշումներ է ընդունում վարկերի տրամադրման վերաբերյալ.

է) քննարկում և որոշումներ է ընդունում մասնաճյուղեր և ներկայացուցչություններ ստեղծելու, դրանց գործունեությունը դադարեցնելու նպատակահամարության մասին.

ը) քննարկում և որոշումներ է ընդունում Բանկի գլխամասի, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության ամսական և (կամ) եռամսյակային կատարողականների մասին.

թ) հաստատում է կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքային գործունեության տարեկան պլանները և հաշվետվությունները.

14.4. Բանկի Վարչության նիստն իրավասու է (քվորում ունի), եթե նիստին անձնական մասնակցության կամ հեռակա քվեարկության ձևով (հարցման միջոցով) մասնակցում են Վարչության անդամների կեսը: Բանկի Վարչության որոշումներն ընդունվում են նիստին ներկա Վարչության անդամների ձայների մեծամասնությամբ: Վարչության յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Քվեարկության ժամանակ Վարչության յուրաքանչյուր անդամ ունի ձայնի իրավունք: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ Վարչության այլ անդամի) չի թույլատրվում:

Գործադիր տնօրենն ունի որոշիչ ձայնի իրավունք և պարտավոր է իր կարծիքը ներկայացված հարցի վերաբերյալ հայտնել վերջինը:

14.5. Բանկի Վարչության նիստերը գումարում է Գործադիր տնօրենը՝ առնվազն ամիսը մեկ անգամ, ինչպես նաև՝ ըստ անհրաժեշտության:

Վարչության նիստին խորհրդակցական ձայնի իրավունքով հրավիրվում է Բանկի ներքին աուդիտի ղեկավարը, ինչպես նաև ըստ անհրաժեշտության կարող են հրավիրվել այլ անձինք:

14.6. Վարչության նիստերն արձանագրվում են: Վարչության նիստերի արձանագրությունները ներկայացվում են Բանկի Խորհրդին, Բանկի ներքին աուդիտին, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին՝ նրա պահանջով: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ 3-օրյա ժամկետում: Արձանագրությունում նշվում են՝

ա) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.

բ) նիստին մասնակցած անձինք.

գ) նիստի օրակարգը.

դ) քվեարկության դրված հարցերը, ինչպես նաև քվեարկության արդյունքներն ըստ նիստին մասնակցած՝ Վարչության յուրաքանչյուր անդամի.

ե) քվեարկության դրված հարցերի վերաբերյալ Վարչության անդամների և Վարչության նիստին մասնակցած այլ անձանց կարծիքները.

զ) նիստում ընդունված որոշումները:

Վարչության նիստի արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

Վարչության նիստերը կազմակերպում և վարում է Գործադիր տնօրենը, որը ստորագրում է նիստերի որոշումները: Վարչության նախագահը պատասխանատվություն է կրում որոշումների մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:

14.7. Գործադիր տնօրենը կարող է ունենալ տեղակալներ: Գործադիր տնօրենը նշանակվում է Խորհրդի կողմից, Գործադիր տնօրենի տեղակալները՝ Խորհրդի կողմից՝ Գործադիր տնօրենի ներկայացմամբ:

14.8. Գործադիր տնօրենը, որպես իր բացառիկ իրավասություն, ներկայացնում է Բանկը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, Բանկի անունից կնքում է գործարքներ, գործում է առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր:

14.9. Գործադիր տնօրենը՝

ա) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Խորհրդի կողմից հաստատվող Բանկի՝ ներքին իրավական ակտերը, առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունները, վարչակազմակերպական կառուցվածքը.

բ) տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, իր իրավասությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ, վերահսկում է դրանց կատարումը.

գ) աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է Բանկի աշխատողներին.

դ) Բանկի աշխատողների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.

ե) ապահովում է Ժողովի, Խորհրդի և Վարչության որոշումների, այդ թվում՝ հեռանկարային զարգացման ծրագրի և ներքին ակտերի կատարումը.

զ) ըստ Բանկի վարչակազմակերպական կառուցվածքի, իրականացնում է իրավասությունների և պարտականությունների, այդ թվում՝ Գործադիր տնօրենի տեղակալների, բաշխումը աշխատողների միջև՝ հստակ սահմանելով հաշվետվական հարաբերությունները.

է) վերահսկում է միջին և ստորին օղակների ղեկավարների գործողությունները.

ը) պահանջում է ստորաբաժանումների ղեկավարներից՝ վերահսկել իրենց աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման արդյունավետությունը.

թ) անհրաժեշտության դեպքում առաջարկություններ է ներկայացնում կազմակերպական կառուցվածքը կատարելագործելու վերաբերյալ.

ժ) ստորագրում և իրավասու մարմիններին է ներկայացնում Բանկի ֆինանսական, վիճակագրական, հարկային հաշվետվություններ, հայցադիմումներ և անհրաժեշտ այլ փաստաթղթեր.

ժա) պարբերաբար իրականացնում է Բանկի անձնակազմի վերապատրաստումը.

ժբ) իրականացնում է Վարչության նախագահի գործառույթները՝

1) կազմակերպում է Վարչության աշխատանքները.
2) գումարում և նախագահում է Վարչության նիստերը.
3) կազմակերպում է Վարչության նիստերի արձանագրությունների վարումը.
4) ներկայացնում է Վարչությունը Խորհրդի նիստերին.
5) ստորագրում է Վարչության նիստերի որոշումները.

ժգ) անհրաժեշտության դեպքում առաջարկություններ է ներկայացնում ներքին հսկողության համակարգի համարժեքության և մոնիտորինգի արդյունավետության վերաբերյալ.

ժդ) իր իրավասություններին պատկանող ցանկացած հարց կարող է քննարկել Վարչության նիստին.

ժե) իրականացնում է սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Խորհրդի կողմից սահմանված իրավական ակտերի շրջանակներում նախատեսված Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ իրավասություններ:

14.10. Այն հարցերը, որոնք օրենքով կամ սույն կանոնադրությամբ չեն սահմանվել որպես Ժողովի, Խորհրդի կամ Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման իրավասությանը պատկանող, պատկանում են Գործադիր տնօրենի իրավասությանը:

14.11. Գործադիր տնօրենը Խորհրդին առնվազն եռամսյակը մեկ անգամ, ներկայացնում է իր գործունեության վերաբերյալ հաշվետվություններ՝ Խորհրդի կողմից սահմանված կարգով և ձևով:

14.12. Գործադիր տնօրենի իրավասությանն ենթակա հարցերով որոշումների ընդունումը չի կարող փոխանցվել Բանկի կառավարման այլ մարմինների, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանմանը, Բանկի գլխավոր հաշվապահին կամ այլ անձի, բացառությամբ՝ եթե Գործադիր տնօրենի լիազորությունների իրականացումը պատշաճ կերպով ժամանակավորապես փոխանցվել է նրան փոխարինող անձին: Գործադիր տնօրենի

լիազորությունները պատշաճ կերպով ժամանակավորապես կարող են փոխանցվել նրան փոխարինող անձին, եթե վերջինս համապատասխանում է Կենտրոնական բանկի սահմանած որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին:

14.13. Խորհրդի կողմից Գործադիր տնօրենի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն կամ եթե՝

ա) նա դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

բ) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել բանկի գործադիր տնօրեն (բանկի ղեկավար).

գ) նա օրենքով սահմանված կարգով որակազրկվել է կամ զրկվել է որոշակի պաշտոն վարելու իրավունքից:

14.14. Գործադիր տնօրենի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել նաև լիազորությունների մնացած ժամանակահատվածի, իսկ եթե այդ ժամանակահատվածը մեկ տարուց ավելի է, ապա մեկ տարվա համար սահմանված աշխատավարձը Բանկի կողմից նրան փոխհատուցելու պայմանով:

Բանկն իրավունք ունի Գործադիր տնօրենի պաշտոնից ազատված անձից հետ պահանջել սույն ենթակետով նրան փոխհատուցված աշխատավարձը՝ դատարանում ապացուցելով Գործադիր տնօրենի կողմից պաշտոնեական պարտականությունների թերացման փաստը:

15. Գլխավոր հաշվապահը

15.1. Բանկի գլխավոր հաշվապահը (այսուհետ՝ Գլխավոր հաշվապահ) նշանակվում է Խորհրդի կողմից՝ Գործադիր տնօրենի ներկայացմամբ:

Գլխավոր հաշվապահ կամ նրա տեղակալ չի կարող լինել այն անձը, որը չի համապատասխանում Կենտրոնական բանկի որակավորման համապատասխանության չափանիշներին և (կամ) որին օրենքով արգելված է լինել բանկի ղեկավար:

15.2. Գլխավոր հաշվապահն իրականացնում է Բանկի հաշվապահական հաշվառման ընդհանուր վարումը և ֆինանսական հաշվետվությունների կազմումը՝ «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտների և Կենտրոնական բանկի նորմատիվային իրավական ակտերի համաձայն:

15.3. Գլխավոր հաշվապահի պահանջների կատարումը՝ կապված հաշվապահական հաշվառման համար անհրաժեշտ տվյալների և փաստաթղթերի ներկայացման հետ, պարտադիր է Բանկի բոլոր աշխատողների համար:

15.4. Առանձին տնտեսական գործառնությունների իրականացման հետ կապված Գործադիր տնօրենի և Գլխավոր հաշվապահի միջև տարաձայնութուններ դեպքում, Գլխավոր հաշվապահը կատարման է ընդունում փաստաթղթերը՝ Գործադիր տնօրենի գրավոր կարգադրությամբ (հանձնարարությամբ), և նման գործառնությունների իրականացման հետևանքների պատասխանատվությունը կրում է Գործադիր տնօրենը: Սույն կետում նշված գործառնությունների մասին Գործադիր տնօրենը տեղեկացնում է Խորհրդին՝ եռամսյակային հաշվետվությունները ներկայացնելիս:

15.5. Գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները չեն կարող փոխանցվել Ժողովին, Խորհրդին, գործադիր մարմնի անդամներին, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանմանը կամ այլ անձի:

15.6. Գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Բանկի հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Բանկի բաժնետերերին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային

լրատվության մյուս միջոցներին Բանկի մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան:

16. Ներքին աուդիտի ստորաբաժանումը

16.1. Ներքին աուդիտի ստորաբաժանման (այսուհետ՝ Ներքին աուդիտ) ղեկավարը և անդամները նշանակվում են Խորհրդի կողմից: Ներքին աուդիտի անդամ չեն կարող լինել Բանկի կառավարման մարմինների անդամները, այլ ղեկավարներն ու աշխատողները, ինչպես նաև գործադիր մարմնի հետ փոխկապակցված անձինք:

16.2. Ներքին աուդիտը Խորհրդի հաստատած կանոնակարգի և ծրագրի համաձայն՝

ա) հսկողություն է իրականացնում Բանկի ընթացիկ գործունեության և գործառնական ռիսկերի նկատմամբ.

բ) հսկողություն է իրականացնում Բանկի գործադիր մարմնի, տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից օրենքների, այլ իրավական ակտերի և Բանկի ներքին ակտերի, Բանկի գործադիր մարմնին տրված հանձնարարականների կատարման նկատմամբ.

գ) եզրակացություններ և առաջարկություններ է տալիս Խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ:

Ներքին աուդիտի իրավասություններին վերաբերող հարցերը չեն կարող փոխանցվել Բանկի կառավարման մարմինների կամ այլ անձանց լուծմանը:

16.3. Ներքին աուդիտի ղեկավարը Խորհրդին և Վարչությանն է ներկայացնում հետևյալ հաշվետվությունները՝

ա) հերթական՝ տարեկան ծրագրով սահմանված ստուգումների արդյունքների մասին.

բ) արտահերթ, եթե բացահայտվել են Ներքին աուդիտի հիմնավորված կարծիքով էական խախտումներ, ընդ որում, եթե խախտումները հետևանք են Բանկի գործադիր մարմնի կամ Խորհրդի գործողությունների կամ անգործության, ապա հաշվետվությունը ներկայացվում է անմիջապես Խորհրդի նախագահին:

Սույն կետով նախատեսված դեպքերում հաշվետվությունները ներկայացվում են խախտումը հայտնաբերելուց առավելագույնը երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Ներքին աուդիտն օրենքների, այլ իրավական ակտերի խախտումներ բացահայտելու դեպքում, պարտավոր է դրանք ներկայացնել Խորհրդին՝ միաժամանակ առաջարկելով այդ խախտումների վերացման և ապագայում չկրկնման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումներ:

17. Բանկի ղեկավարները

17.1. Բանկի ղեկավարներ են համարվում Խորհրդի նախագահը, նրա տեղակալը և Խորհրդի անդամները, գործադիր մարմնի անդամները, Գլխավոր հաշվապահի տեղակալը, Ներքին աուդիտի ղեկավարը և անդամները, ինչպես նաև Բանկի առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, Բանկի դեպարտամենտի, վարչության, բաժնի, ինչպես նաև Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած չափանիշներով որևէ կերպ Բանկի հիմնական գործունեության հետ կապված կամ Գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո աշխատող կամ Բանկի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ ազդեցություն ունեցող աշխատողները:

17.2. Բանկի ղեկավար չեն կարող լինել՝

ա) դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար դատվածություն ունեցող անձինք.

բ) դատարանի կողմից ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից զրկված անձինք.

գ) սնանկ ճանաչված և չմարված (չներված) պարտավորություններ ունեցող անձինք.

դ) անձինք, որոնց որակավորումը կամ մասնագիտական գիտելիքները չեն համապատասխանում Կենտրոնական բանկի սահմանած մասնագիտական կամ որակավորման համապատասխանության չափանիշներին.

ե) անձինք, որոնք անցյալում կատարել են այնպիսի արարք, որը Կենտրոնական բանկի հաստատած ուղեցույցով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի կարծիքով հիմք է տալիս կասկածելու, որ տվյալ անձը՝ որպես Բանկի ղեկավար, չի կարող պատշաճորեն կառավարել Բանկի գործունեության համապատասխան ոլորտը, կամ նրա գործողությունները կարող են հանգեցնել Բանկի սնանկացմանը, ֆինանսական վիճակի վատթարացմանը կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկմանը.

զ) անձինք, որոնք քրեական գործով ներգրավված են որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ:

17.3. Խորհրդի նախագահը կամ Խորհրդի անդամը չի կարող միաժամանակ լինել Բանկի գործադիր մարմնի անդամ կամ Բանկի այլ աշխատող, ինչպես նաև այլ բանկի կամ վարկային կազմակերպության խորհրդի անդամ, գործադիր մարմնի անդամ կամ այլ աշխատող, բացառությամբ եթե Բանկը և այլ բանկը կամ վարկային կազմակերպությունը հանդիսանում են միմյանց հետ փոխկապակցված անձինք:

17.4. Բանկի գործադիր մարմնի անդամները, Ներքին աուդիտի ղեկավարը կամ անդամները չեն կարող միաժամանակ լինել այլ բանկի գործադիր մարմնի անդամ, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավար կամ անդամներ:

18. Տեղեկությունները և դրանց հրապարակումը

18.1. Բանկը ինտերնետում՝ Բանկի տնային էջում հրապարակում է՝

ա) Բանկի ֆինանսական հաշվետվությունները (առնվազն վերջին տարեկան և վերջին եռամսյակային) և արտաքին աուդիտի եզրակացության պատճենը՝ տարեկան հաշվետվությունների վերաբերյալ.

բ) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված ժամկետում տարեկան ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարությունը.

գ) շահութաբաժիններ վճարելու մասին որոշումների պատճենները.

դ) Բանկում նշանակալից մասնակցություն ունեցող մասնակիցների մասին տեղեկատվություն՝ նրանց անվանումը (անունը), Բանկում նրանց ունեցած մասնակցության չափը (բացառությամբ այն անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձանց, որոնք չունեն Բանկի կանոնադրական կապիտալում մասնակցություն՝ բաժնետոմս), նախորդ տարվա ընթացքում նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից Բանկից ստացված վարկերի և այլ փոխառությունների (այդ թվում նաև՝ մարված) վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ չափը, տոկոսադրույքը և ժամկետը.

ե) Բանկի Խորհրդի, գործադիր մարմնի անդամների ցանկը և անձնական տվյալները՝ նրանց անունը, ծննդյան ամսաթիվը, կենսագրությունը, օրենքով սահմանված այլ տեղեկատվութունը.

զ) օրենքով և Կենտրոնական բանկի կողմից սահմանված այլ տեղեկատվությունը:

18.2. Սույն կանոնադրության 18.1. կետի «ա» և «բ» ենթակետերում նշված տեղեկատվությունն օրենքով և Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով Բանկը հրապարակում է մամուլում և հասարակությանը մատչելի այլ ձևով:

18.3. Բանկի յուրաքանչյուր բաժնետիրոջն անվճար տրամադրվում է Բանկի վերջին տարեկան հաշվետվության և արտաքին աուդիտի եզրակացության պատճենները:

18.4. Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 2 տոկոսին և ավելիին տիրապետող յուրաքանչյուր բաժնետիրոջ (բաժնետերերի), Բանկն անվճար տրամադրում է հետևյալ տեղեկությունները (թեկուզև դրանք կազմեն բանկային, առևտրային կամ այլ գաղտնիք)՝

ա) Խորհրդի, Գործադիր տնօրենի և Գլխավոր հաշվապահի վերաբերյալ սույն կանոնադրության 18.7 կետում նշված տեղեկությունները.

բ) Խորհրդի անդամների, Գործադիր տնօրենի և Գլխավոր հաշվապահի՝ նախորդ տարվա ընթացքում Բանկից ստացված ամբողջ վարձատրության չափը, նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից Բանկից ստացված վարկերի և այլ փոխառությունների (այդ թվում նաև՝ մարված) վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ չափը, տոկոսադրույքը և ժամկետը, ինչպես նաև Բանկում նշանակալից մասնակցություն ունեցող մասնակիցների մասին սույն կանոնադրության 18.1 կետի դ) ենթակետում նշված տեղեկությունները.

գ) Բանկի հետ կապված անձանց հետ կնքված խոշոր գործարքների, ինչպես նաև այն գործարքների մասին, որոնք կնքվել են այդ տեղեկությունները ստանալու վերաբերյալ պահանջը ներկայացնելուն նախորդող երկու տարվա ընթացքում և կապված են սույն կանոնադրության 3.1 կետի ա)-գ), թ), ժ) և ժա) ենթակետերով սահմանված գործառնություններից որևէ մեկի իրականացման հետ.

դ) Բանկի կողմից Բանկի հետ կապված անձի նկատմամբ ստանձնած պարտավորությունների մասին.

ե) Բանկի՝ միանման քաղաքականություն իրականացնող բաժնետերերի խմբերի ստեղծմանն ուղղված պայմանագրերի առկայության մասին, ինչպես նաև Բանկի՝ այդ պայմանագրերի կողմ հանդիսացող բաժնետերերի անունները (անվանումները).

զ) Բանկի հաշվեկշռում արտացոլված գույքի նկատմամբ Բանկի գույքային իրավունքները հավաստող փաստաթղթերի, Բանկի կառավարման մարմինների հաստատած Բանկի ներքին ակտերի, առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունները և օրենքով սահմանված այլ փաստաթղթերի, ֆինանսական ու այլ հաշվետվությունների, ինչպես նաև Բանկի վերաբերյալ Կենտրոնական բանկի որոշումների պատճենները.

է) այն իրավաբանական անձանց ցանկը, որոնց կանոնադրական կապիտալում Բանկի ղեկավարները կամ նրանց հետ փոխկապակցված անձինք ունեն 20% և ավելի մասնակցություն կամ հնարավորություն՝ ներազդելու նրանց որոշումների վրա:

Բանկի բոլոր բաժնետերերին տրամադրվում են ժողովի հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունները:

